

**Դայաստանում Գյուղական  
Տարածքների Տնտեսական  
Զարգացման Հիմնադրամ**

ՀՀ-ում թարմ և վերամշակված  
բանջարեղենի արտադրության և  
շուկայի վերլուծության  
վերաբերյալ հաշվետվություն

Սեպտեմբեր 2017

Հաշվետվությունը բաղկացած է 172 էջից



## Բովանդակություն

|                                                                                                                                     |           |
|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----------|
| Հապավումներ և տերմիններ .....                                                                                                       | 5         |
| <b>SWOT վերլուծություն .....</b>                                                                                                    | <b>7</b>  |
| Առաջնային արտադրության ամփոփ պատկերը .....                                                                                          | 8         |
| <b>1. ՀՀ-ում թարմ բանջարեղենի արտադրության և սպառման վերլուծություն .....</b>                                                       | <b>10</b> |
| 1.1 Հայաստանում աճեցվող հիմնական բանջարեղենային մշակաբույսների մկարագիրը, վերլուծությունն ըստ մարզերի .....                         | 10        |
| 1.1.1 Բերք .....                                                                                                                    | 10        |
| 1.1.2 Բերքահավաքի տարածություններ .....                                                                                             | 13        |
| 1.2 Վերամշակման ոլորտում օգտագործվող հիմնական բանջարեղենային մշակաբույսների և հիմնական արտադրողների վերլուծություն .....            | 15        |
| 1.3 Վերամշակման ոլորտում ընտրված բանջարեղենների արտադրական գործընթացի վերլուծություն .....                                          | 17        |
| 1.4 Վերաշակման ոլորտում օգտագործվող ընտրված բանջարեղենի ներքին սպառման վերլուծություն .....                                         | 44        |
| 1.5 Վերամշակման ոլորտում օգտագործվող ընտրված բանջարեղենային մշակաբույսների ներմուծման և արտահանման ընդհանուր վերլուծություն .....   | 46        |
| 1.5.1. Թարմ կամ սառեցված բանջարեղենի ներմուծում .....                                                                               | 46        |
| 1.5.2. Բանջարեղենի ներմուծման հիմնական երկրներ .....                                                                                | 48        |
| 1.5.3. Թարմ կամ սառեցված կարտոֆիլի ներմուծում .....                                                                                 | 53        |
| 1.5.4. Թարմ կամ սառեցված բանջարեղենի արտահանում .....                                                                               | 54        |
| 1.5.5. Թարմ կամ սառեցված կարտոֆիլի արտահանում .....                                                                                 | 59        |
| Տեղական վերամշակման ամփոփ պատկերը .....                                                                                             | 59        |
| <b>2. Հայաստանի Հանրապետությունում մշակվող թարմ բանջարեղենի վերամշակման վերլուծություն .....</b>                                    | <b>60</b> |
| 2.1 Հայաստանի Հանրապետության վերամշակված բանջարեղենի արտադրության դիմանիկայի և հիմնական վերամշակող ընկերությունների մկարագիրը ..... | 60        |
| 2.2 Հարաբերություններ մատակարարների հետ .....                                                                                       | 62        |
| 2.3 Հայաստանի Հանրապետությունում կիրառվող թարմ բանջարեղենի վերամշակման տեխնոլոգիաների մկարագիր .....                                | 64        |
| Տեղական շուկայի ամփոփ պատկերը .....                                                                                                 | 74        |
| <b>3. Հայաստանի Հանրապետության վերամշակված բանջարեղենի արտադրատեսակների շուկայի վերլուծություն .....</b>                            | <b>75</b> |
| 3.1 Վերամշակված բանջարեղենի վաճառքի վերլուծություն տեղական շուկայում..                                                              | 75        |

|                                                                                                                                                     |            |
|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|------------|
| <b>3.2 Կերամշակված բանջարեղենի ներմուծման վերլուծություն.....</b>                                                                                   | <b>77</b>  |
| <b>3.2.1 Պահածոյացված բանջարեղենի ներմուծում.....</b>                                                                                               | <b>78</b>  |
| <b>3.2.2 Չորացրած բանջարեղենի ներմուծում.....</b>                                                                                                   | <b>80</b>  |
| <b>3.2.3 Սառեցրած բանջարեղենի ներմուծում.....</b>                                                                                                   | <b>82</b>  |
| <b>3.2.4 Տոմատային կետչուայի և տոմատային այլ սոուսների ներմուծում .....</b>                                                                         | <b>83</b>  |
| <b>3.2.5 Վերամշակված կարտոֆիլի ներմուծում .....</b>                                                                                                 | <b>84</b>  |
| <b>Արտաքին շուկաների ամփոփ պատկերը.....</b>                                                                                                         | <b>87</b>  |
| <b>4. Վերամշակված բանջարեղենի արտադրության արտերկրյա շուկաների<br/>ուսումնասիրություն .....</b>                                                     | <b>88</b>  |
| <b>4.1. Վերամշակված ապրանքատեսակների արտահանման ուսումնասիրություն .....</b>                                                                        | <b>88</b>  |
| <b>4.1.1. Պահածոյացված բանջարեղենի արտահանում.....</b>                                                                                              | <b>90</b>  |
| <b>4.1.2. Չորացրած բանջարեղենի արտահանում .....</b>                                                                                                 | <b>92</b>  |
| <b>4.1.3. Սառեցրած բանջարեղենի արտահանում.....</b>                                                                                                  | <b>93</b>  |
| <b>4.1.4. Տոմատային կետչուայի և տոմատային այլ սոուսների արտահանում .....</b>                                                                        | <b>94</b>  |
| <b>4.2 Վերամշակված արտադրանքի վաճառքի վերլուծություն .....</b>                                                                                      | <b>95</b>  |
| <b>4.2.1 Հայաստանի Հանրապետության տրանսպորտային ծախսները և վաճառքի<br/>բնութագրերը արտաքին շունակերում .....</b>                                    | <b>95</b>  |
| <b>4.2.2 Հայաստանի վերամշակող ընկերությունների վաճառքի գները և միջին<br/>շահութաքերությունն արտաքին շուկաներում.....</b>                            | <b>96</b>  |
| <b>4.3 Հայաստանի ընկերությունների համար արտաքին շուկա մուտք գործելու հետ<br/>կապված հնարավորությունների և սպառնալիքների ուսումնասիրություն.....</b> | <b>97</b>  |
| <b>4.4 Ոլոսաստանի շուկայի համառոտ վերլուծություն .....</b>                                                                                          | <b>103</b> |
| <b>4.4.1 Վերամշակված բանջարեղենի և կարտոֆիլի հիմնական տեսակները .....</b>                                                                           | <b>103</b> |
| <b>4.4.2 Վերամշակված բանջարեղենի ներմուծում.....</b>                                                                                                | <b>105</b> |
| <b>4.4.3 Վերամշակված կարտոֆիլի ներմուծում .....</b>                                                                                                 | <b>107</b> |
| <b>4.4.4 Վերամշակված բանջարեղենի արտահանում .....</b>                                                                                               | <b>107</b> |
| <b>4.4.5 Վերամշակված կարտոֆիլի արտահանում .....</b>                                                                                                 | <b>109</b> |
| <b>4.4.6 Վերամշակված բանջարեղենի սպառում և վաճառք .....</b>                                                                                         | <b>110</b> |
| <b>4.4.7 Վերամշակված կարտոֆիլի սպառում և վաճառք .....</b>                                                                                           | <b>112</b> |
| <b>4.4.8 Մրցունակ միջավայր .....</b>                                                                                                                | <b>112</b> |
| <b>4.4.9 Վերամշակված բանջարեղենի վաճառքի կանխատեսումներ .....</b>                                                                                   | <b>115</b> |
| <b>4.4.10 Վերամշակված կարտոֆիլի վաճառքի կանխատեսումներ .....</b>                                                                                    | <b>116</b> |
| <b>4.5 Վրաստանի շուկայի համառոտ վերլուծություն .....</b>                                                                                            | <b>116</b> |
| <b>4.5.1 Վերամշակված բանջարեղենի և կարտոֆիլի հիմնական տեսակները .....</b>                                                                           | <b>116</b> |
| <b>4.5.2 Վերամշակված բանջարեղենի ներմուծում.....</b>                                                                                                | <b>117</b> |

|                                                                                                                         |                                                             |            |
|-------------------------------------------------------------------------------------------------------------------------|-------------------------------------------------------------|------------|
| <b>4.5.3</b>                                                                                                            | <b>Վերամշակված կարտոֆիլի ներմուծում .....</b>               | <b>120</b> |
| <b>4.5.4</b>                                                                                                            | <b>Վերամշակված բանջարեղենի արտահամում .....</b>             | <b>121</b> |
| <b>4.5.5</b>                                                                                                            | <b>Վերամշակված կարտոֆիլի արտահամում .....</b>               | <b>123</b> |
| <b>4.5.6</b>                                                                                                            | <b>Վերամշակված բանջարեղենի սպառում և վաճառք .....</b>       | <b>123</b> |
| <b>4.5.7</b>                                                                                                            | <b>Վերամշակված կարտոֆիլի սպառում և վաճառք .....</b>         | <b>125</b> |
| <b>4.5.8</b>                                                                                                            | <b>Մրցումակ միջավայր .....</b>                              | <b>125</b> |
| <b>4.5.9</b>                                                                                                            | <b>Վերամշակված բանջարեղենի վաճառքի կանխատեսումներ .....</b> | <b>127</b> |
| <b>4.5.10</b>                                                                                                           | <b>Վերամշակված կարտոֆիլի վաճառքի կանխատեսումներ .....</b>   | <b>129</b> |
| <b>Հավելվածներ .....</b>                                                                                                |                                                             | <b>130</b> |
| <b>Հավելված 1. Հայաստանում մշակվող բանջարեղենի հիմնական մշակաբույսեր .....</b>                                          | <b>130</b>                                                  |            |
| <b>Հավելված 2. Բանջարեղենի մշակաբույսերի բերքատվությունն ըստ մարզերի և ընտրված մշակաբույսերի .....</b>                  | <b>135</b>                                                  |            |
| <b>Հավելված 3. Բանջարեղենի հիմնական սորտեր .....</b>                                                                    | <b>136</b>                                                  |            |
| <b>Հավելված 4. Բանջարեղենի մշակման քայլերի միջին հաճախականությունն ըստ մարզերի .....</b>                                | <b>137</b>                                                  |            |
| <b>Հավելված 5. Բանջարեղենի իրացում անհատ գյուղացիական տնտեսությունների կողմից .....</b>                                 | <b>139</b>                                                  |            |
| <b>Հավելված 6. Երեք հիմնական երկրներից ներմուծվող մշակաբույսերի ներմուծման արժեքի կառուցվածքը .....</b>                 | <b>140</b>                                                  |            |
| <b>Հավելված 7. 2016թ-ին Հայաստանից համեմատաբար փոքր չափով արտահանված բանջարեղենի տեսակները .....</b>                    | <b>141</b>                                                  |            |
| <b>Հավելված 8. Երեք հիմնական երկրներ արտահանվող մշակաբույսերի արտահանման արժեքի կառուցվածքը .....</b>                   | <b>142</b>                                                  |            |
| <b>Հավելված 9. 2016թ-ին Հայաստանից Ռուսաստան համեմատաբար փոքր չափով արտահանված բանջարեղենի տեսակները .....</b>          | <b>143</b>                                                  |            |
| <b>Հավելված 10. 2016թ-ին Հայաստանից ԱՄԷ համեմատաբար փոքր չափով արտահանված բանջարեղենի տեսակները .....</b>               | <b>144</b>                                                  |            |
| <b>Հավելված 11. Բանջարեղեն վերամշակող ընկերություններ ընտրված մարզերում ...</b>                                         | <b>145</b>                                                  |            |
| <b>Հավելված 12. Վերամշակված բանջարեղենի առք ու վաճառքի միջին ծավալները մանրածախ վաճառքի տեղական կետերում .....</b>      | <b>146</b>                                                  |            |
| <b>Հավելված 13. Վերամշակված բանջարեղենի առք ու վաճառքի համար մանրածախ վաճառքի կետերում օգտագործվող միջին գներ .....</b> | <b>147</b>                                                  |            |
| <b>Հավելված 14. Տեղական և արտերկրյա ապրանքանիշերի նկարագիր .....</b>                                                    | <b>148</b>                                                  |            |
| <b>Հավելված 15. Վերամշակված բանջարեղենի ներմուծումն ըստ ապրանքատեսակների, 2017թ. 1-ին կիսամյակ .....</b>                | <b>154</b>                                                  |            |
| <b>Հավելված 16. Ներմուծված վերամշակված կարտոֆիլի հիմնական տեսակները .....</b>                                           | <b>155</b>                                                  |            |
| <b>Հավելված 17. Միջազգային հարաբերություններին վերաբերող ապագա ծրագրեր ..</b>                                           | <b>156</b>                                                  |            |

|                                                                                                                           |            |
|---------------------------------------------------------------------------------------------------------------------------|------------|
| <b>Դավելված 18. Վերամշակված բանջարեղենի և կարտոֆիլի տեղական արտադրությունը<br/>Ուստատանում.....</b>                       | <b>157</b> |
| <b>Դավելված 19. Վերամշակված բանջարեղենի ներմուծման նվազում Ուստատանում,<br/>2016թ. ....</b>                               | <b>158</b> |
| <b>Վերամշակված բանջարեղենի ներմուծման նվազում Ուստատանում, 2016թ.....</b>                                                 | <b>158</b> |
| <b>Դավելված 20. Վերամշակված բանջարեղենի ներմուծման արժեքի կառուցվածքը<br/>Ուստատանի համար ըստ երկրների 2016թ-ին .....</b> | <b>159</b> |
| <b>Դավելված 21. Վերամշակված բանջարեղենի արտահանման աճը Ուստատանում,<br/>2016թ. ....</b>                                   | <b>160</b> |
| <b>Դավելված 22. Վերամշակված բանջարեղենի և կարտոֆիլի վաճառքը Ուստատանում<br/>.....</b>                                     | <b>161</b> |
| <b>Դավելված 23. Վերամշակված բանջարեղենի և կարտոֆիլի վաճառքի<br/>կանխատեսումները Ուստատանում.....</b>                      | <b>163</b> |
| <b>Դավելված 24. Վերամշակված բանջարեղենի ներմուծման դիմամիկան Վրաստանում,<br/>2016թ. ....</b>                              | <b>164</b> |
| <b>Դավելված 25. Վերամշակված բանջարեղենի և կարտոֆիլի վաճառքը Վրաստանում 165</b>                                            |            |
| <b>Դավելված 26. Վերամշակված բանջարեղենի և կարտոֆիլի վաճառքի<br/>կանխատեսումները Վրաստանում .....</b>                      | <b>167</b> |
| <b>Դավելված 27. Վերլուծությունում օգտագործված ՀՄ ծածկագրեր.....</b>                                                       | <b>168</b> |
| <b>Դավելված 28. Դարցման մասնակիցներ.....</b>                                                                              | <b>171</b> |
| <b>Դավելված 29. Դարցմանը մասնակցած վաճառքի կետեր.....</b>                                                                 | <b>172</b> |
| <b>Դավելված 30. Դարցմանը մասնակցած մարզեր .....</b>                                                                       | <b>173</b> |

## Հապավումներ և տերմիններ

### Հապավումներ

|                         |                                                       |
|-------------------------|-------------------------------------------------------|
| ՔԵՐ-ՓԻ-ԷՄ-ԶԻ, մԵՆՔ, մԵՐ | ,ՔԵՐ-ՓԻ-ԷՄ-ԶԻ Արմենիա ՓԲԸ                             |
| ՀՀ                      | Հայաստանի Հանրապետություն                             |
| ԱՄՆ                     | Ամերիկայի Միացյալ Նահանգներ                           |
| ԱՎԾ                     | Ազգային Վիճակագրական Ծառայություն                     |
| ԲՈՏԱՏԸ                  | Բաղադրյալ Միջին Տարեկան Աճի Տեմպ                      |
| ԵՄ                      | Եվրոպական Միություն                                   |
| ՓԲԸ                     | Փակ Բաժնետիրական Ընկերություն                         |
| ՍՊԸ                     | Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերություն            |
| ԿԳ                      | Կիլոգրամ                                              |
| ԿՊա                     | ԿիլոՊասկալ                                            |
| ԵԱՏԸ                    | Եվրասիական Տնտեսական Միություն                        |
| ՎԱՎԳ                    | Վրաստանի Ազգային Վիճակագրական Գրասենյակ               |
| ՌԴԿԲ                    | Ռուսաստանի Դաշնության Կենտրոնական Բանկ                |
| ՌԴՎԴԸ                   | Ռուսաստանի Պետական Վիճակագրական Դաշնային Ծառայություն |

### Տերմիններ

Երկարաժամկետ  
պահպանման համար  
պիտանի բանջարեղեն

Կարձաժամկետ  
պահպանման  
բանջարեղեն

Վերամշակված բանջարեղեն, որը կարող է  
պահպանվել սենյակային ջերմաստիճանի  
պայմաններում փակված տարայի մեջ և ունի  
ավելի երկար կյանք քան թարմ բանջարեղենը  
Բանջարեղեն պահպանված ծծմբի երկօրսվիդով,  
աղաջրի, ծծմբաջրի կամ մեկ այլ ժամանակավոր  
պահածոյացնող լրտույքի մեջ, բայց այդ ձևով  
անմիջականորեն սննդի մեջ օգտագործելու համար  
ոչ պիտանի

**Թարմ կամ սառեցված  
բանջարեղենի  
ներմուծում/արտահանում**  
**Վերամշակված  
բանջարեղենի  
ներմուծում/արտահանում**

**Հավելված 27. Վերլուծությունում օգտագործված ՀՍ  
ծածկագրեր - ում ներառված թարմ կամ սառեցված  
բանջարեղենի ներմուծում/արտահանում**  
**Հավելված 27. Վերլուծությունում օգտագործված ՀՍ  
ծածկագրեր - ում ներառված վերամշակված  
բանջարեղենի ներմուծում/արտահանում**

| <b>Միջին փոխարժեքներ</b> |             |             |             |             |             |             |
|--------------------------|-------------|-------------|-------------|-------------|-------------|-------------|
|                          | <b>2011</b> | <b>2012</b> | <b>2013</b> | <b>2014</b> | <b>2015</b> | <b>2016</b> |
| Լարի/ԱՄՆ<br>դրամ         | 1.69        | 1.65        | 1.66        | 1.77        | 2.27        | 2.37        |
| Ռուբլի/ԱՄՆ<br>դրամ       | 29.39       | 31.07       | 31.91       | 38.60       | 61.32       | 66.83       |

*Աղբյ ուր՝ (1) ՈՉԿԲ  
(2) ՎԱՎԳ*

# SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

## STRENGTHS (Ուժեղ կողմեր)

- Հայաստանի կլիման նպաստավոր է բանջարեղեն աճեցնելու համար
- Հրաբխային ծագման հողը, որը յուրահատուկ համ է տալիս մշակաբույսերին հաճքային աղերից
- Տեղական մարմինների առ կ այ ու թ ու ն , որոնք հավաստում են համապատասխանությունը միջազգային չափորոշիչների՝ Ռուսաստան, ԵՄ և ԱՄՆ շուկաներ արտահանելու համար
- Օրգանական արտադրանքի վերահսկման օրենսդրության առկայություն
- Տեղական մարմինների առ կ այ ու թ ու ն , որոնք հավաստում են բանջարեղենի օրգանական ժագումը
- Սերմերի, պարարտանյութերի և որոշ տեսակի թունաքիմիկատների ներկրումն ազատված է ԱՀՀ-ից
- ՀՀ կառավարությունը սուբսիդավորում է մի քանի տեսակի պարարտանյութերի գնումը

## WEAKNESSES (Թույլ կողմեր)

- Ոլորտի բարձրորակ մասնագետների պակաս
- Ֆերմերների շրջանում մշակության ժամանակակից մերողների ինացության պակաս
- Թարմ բանջարեղենի արտադրության փոքր ծավալներ
- Տեղական սպառման ցածր գնողունակությամբ փոքր շուկա
- Էլեկտրականության բարձր գներ
- Ուռոգման ջրի մատակարարման դեֆիցիտ
- Աղբի կառավարման թերզարգացած համակարգ
- Սառեցման թերզարգացած համակարգ, որը խոչընդոտում է բերքի պատշաճ պահպանությունը
- Թարմ բանջարեղենի առաջարկի և պահանջարկի կոռորդինացման և կանխատեսման պատշ աճ համ ակ ար գ ի բ աց ակ այ ու թ ու ն
- Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրության համակարգի բացակայություն

## OPPORTUNITIES (Քնարավորություններ)

- ՀՀ կառավարությունը գյուղատնտեսությունը համարում է երկրի գերակա ոլորտներից մեկը
- Անդամակցություն Եվրասիական տնտեսական միությանը, որը ելք ունի դեպի 180 միլիոնանոց շուկա
- Մի շարք հողակտորներ, որոնք չեն մշակվում և կարող են հեշտությամբ օգտագործվել օրգանական արտադրության համար
- Հավաստագրման ընդհանուր պահանջներ Ռուսաստանի հետ, որը ՀՀ-ից կատարվող արտահանումների հիմնական երկիրն է
- Անդամակցություն Եվրոպական միության նախընտրությունների ընդհանրացված համակարգին (GSP+)
- Մի շարք համաձայնագրեր ԱՄՆ -ի հետ, որոնք խրախուսում են երկու երկրների առևտորային ու ներդրումային հարաբերությունները, ներառյալ՝
  - Առևտորի և ներդրումների ծրագրերի համաձայնագիր (TIFA)
  - Համաձայնագիր առևտորական հարաբերությունների վերաբերյալ
  - Ներդրումների խրախուսման համաձայնագիր

## THREATS (Սպառնալիքներ)

- Կրտահաման շուկաների փոքր դիվերսիֆիկացիա (բազմազանեցում), արտահանումների առյուծի բաժինն ուղղվում է Ռուսաստան (84%)
- Տրանսպորտային ճանապարհներների սահմանափակություն, ուղղակի ծովային փոխադրումներ դեպի Հայաստան չկան
- Ուժեղ նրգակիցներ օտարերկրյա շուկաներում, օրինակ Ռուսաստան, Բելառուսը, որոնք ցածր գներ են առաջարկում իրենց արտադրանքի համար
- Հավաստագրման խստ պահանջներ ԵՄ և ԱՄՆ շուկաներ արտահանելու համար

# Առաջնային արտադրության ամփոփ պատկերը



Թարմ բանջարեղենի և կարտոֆիլի  
արտադրությունը 2016թ.  
Թարմ բանջարեղեն - 968,607 տոննա  
Կարտոֆիլ - 606,314 տոննա



Առաջնային արտադրության դինամիկան  
2016թ.  
Թարմ բանջարեղեն -3.9% նվազում  
Կարտոֆիլ - ծավալի 0.2% նվազում



Ամենամեծ դասի տոկոսային բաժինը  
Լոլիկ  
32.5%

## Հիմնական արտադրողները

- ✓ Թարմ բանջարեղեն

Անհատական գյուղական տնային  
տնտեսություններ - 99.7%

- ✓ Կարտոֆիլ

Անհատական գյուղական տնային  
տնտեսություններ - 99.6%



## Օրգանական արտադրությունը ըստ մարզերի

Լոլիկ - Արմավիր, Սրարատ, Գեղարքունիք

Վարունգ - Արմավիր, Սրարատ, Շիրակ, Գեղարքունիք

Պղպեղ (քաղցր և կծու) - Արմավիր, Սրարատ,

Գեղարքունիք

Սմբուկ - Արմավիր, Սրարատ

Կանաչ լոբի - Գեղարքունիք, Լոռի

Գազար Շիրակ, Գեղարքունիք

Մխտոր - Շիրակ, Գեղարքունիք

Կարտոֆիլ - Արմավիր, Սրարատ, Շիրակ, Գեղարքունիք,

Լոռի

Կաղամք - Արմավիր, Սրարատ, Շիրակ, Գեղարքունիք,

Լոռի

Ծաղկակաղամք - Արմավիր, Սրարատ, Շիրակ,

Գեղարքունիք

Սոխ - Արմավիր, Սրարատ, Շիրակ, Գեղարքունիք



Թարմ բանջարեղենի և կարտոֆիլի աճեցման  
տարածքներ (տարածություններ)  
Թարմ բանջարեղեն - 29,207 հա  
Կարտոֆիլ - 28,829 հա



Աճեցման տարածքների դինամիկան 2016թ.  
Թարմ բանջարեղեն - տարածքի 4.6% աճ  
Կարտոֆիլ - տարածքի 3.8% աճ



Առավել պաղաքեր մարզ  
Թարմ բանջարեղեն - Արմավիրի մարզ  
Կարտոֆիլ - Գեղարքունիքի մարզ

## Մշակում

### Մշակման գործընթացը

1. Հողի նախապատրաստում

2. Տունկ

Բոլոր տեսակի բանջարեղենի  
և կարտոֆիլի մշակումը

3. Ոռոգում

հիմնականում իրականացվում  
է ձեռքով:

4. Մոլախոտերի դեմ պայքար



5. Թունաքիմիկատներ

6. Բերքահավաք



### Սերմերի և սածիլների աղբյուրը

#### Սերմեր

✓ Սեփական տնտեսությունից - 22.2%

✓ Գնված - 77.8%

#### Սածիլներ

✓ Սեփական տնտեսությունից - 42.8%

✓ Գնված - 57.2%

## Արտաքին շուկաներ

Թարմ բանջարեղենի և կարտոֆիլի  
ներմուծումը 2016թ.

- ✓ Թարմ բանջարեղեն

Արժեք: 3,536 հազար ԱՄՆ դոլար

Ծավալ: 8,123 տոննա

- ✓ Կարտոֆիլ

Արժեք: 2,192 հազար ԱՄՆ դոլար

Ծավալ: 3,889 տոննա



### Ներմուծման դինամիկան 2016թ.

- ✓ Թարմ բանջարեղեն

Արժեքի նվազում - 38.5%

Ծավալի նվազում - 27.2%

- ✓ Կարտոֆիլ

Արժեքի նվազում - 0.5%

Ծավալի աճ - 14.8%

## Թարմ բանջարեղենի և կարտոֆիլի արտահանումը 2016թ.

- ✓ Թարմ բանջարեղեն  
Արժեք: 27,788 հազար ԱՄՆ դոլար  
Ծավալ: 43,596 տոննա
- ✓ Կարտոֆիլ  
Արժեք: 140 հազար ԱՄՆ դոլար  
Ծավալ: 1,381 տոննա



## Արտահանման ռինասմիկան 2016թ.

- ✓ Թարմ բանջարեղեն  
Արժեքի աճ – 138%  
Ծավալի աճ – 140%
- ✓ Կարտոֆիլ  
Արժեքի նվազում – 80%  
Ծավալի նվազում – 63.4%

%

## Ներմուծման և արտահանման ամենաբարձր բաժին ունեցող բանջարեղենը 2016թ.

- ✓ Ներմուծում  
Գյուղական սույն սպառությունը ամենաբարձր է և այլ կողմանակող բանջարեղենը՝ -31.1%
- ✓ Արտահանում  
Լոլիկ - 81.6%



## Հիմնական առևտրային գործընկեր – երկրները 2016թ.

- ✓ Թարմ բանջարեղեն  
Ներմուծում: Իրան (49.7%), Թուրքիա (18%), Ռուսաստան (11.6%)  
Արտահանում: Ռուսաստան (97.8%)
- ✓ Կարտոֆիլ  
Արտահանում: Վրաստան (100%)  
Ներմուծում: Նիդերլանդներ (50%), Եգիպտոս (16%), Գերմանիա (11%)


## **1. ՀՀ-ում բանջարեղենի արտադրության և սպառման վերլուծություն**

### **1.1 Հայաստանում աճեցվող հիմնական բանջարեղենային մշակաբույսերի նկարագիրը, վերլուծությունն ըստ մարզերի**

#### **1.1.1 Բերք**

Բանջարեղենի մշակաբույսերի աճեցումն անմիջականորեն կապված է մարզերի աշխարհագրական դիրքի և կլիմայական պայմանների հետ: Հայաստանում աճեցվող հիմնական բանջարեղենային մշակաբույսերն են՝ կաղամբը, ծաղկակաղամբը, վարունգը, լոլիկը, սմբուկը, տաքդեղը, սեղանի ճակնդեղը, գազարը, սոխը, սխտորը, կանաչ լոբին և կանաչ ոլոռը:

**Բանջարեղենային մշակաբույսերի մասնաբաժինը բերքում, 2016թ.**




*Աղյուրը՝ << ԱՎԾ*

Ընտրված բանջարեղենային մշակաբույսերից Հայաստանում բանջարեղենի արտադրությունում ամենամեծ մասնաբաժինն ունի լոլիկը: 2016թ-ին լոլիկի բերքի մասնաբաժինն ընդհանուր բերքում կազմել է 32.5%, որը մոտ 23.3 տոկոսային կետով ավել է վարունգի՝ Հայաստանում արտադրությամբ երկրորդ ամենախոշոր բանջարեղենի բերքից:


2016թ-ին Հայաստանում արտադրվող հիմնական երեք բանջարեղենային մշակաբույսերն են լոլիկը, վարունգը և կաղամբը (բոլոր տեսակի):

**2013-2016-ի ընթացքում ստացված բերքի դիմանիկան հետևյալն է՝**


**Լոլիկի բերքատվության դիմանիկա**



**Վարունգի բերքատվության դիմանիկա**




**Կաղամբի բերքատվության դիմանիկա**



*Աղյուր՝ ՀՀ ԱՎԾ*

Թարմ բանջարեղենի նշված տեսակների արտադրության ծավալների կրճատումն ի համեմատություն նախորդ ժամանակաշրջանի կարող է պայմանավորված լինել 2016թ. եղանակային պայմաններով։ Գարնանը տեղի ունեցած արտասովոր կլիմայական փոփոխությունների, մասնավորապես, մարտ ամսվա սկզբում գրանցված զրոյից ցածր ջերմաստիճանի հետևանքով ցրտահարվել են ջերմասեր մրգերի և բանջարեղենի որոշ տեսակներ։

**Կարտոֆիլի բերքատվության դիմանիկա**




2016թ.-ին կարտոֆիլի արտադրության ծավալը կազմել է նույնքան, որքան բանջարեղենի ընդհանուր արտադրության ծավալը, որի պատճառն են Հայաստանում կարտոֆիլի մշակման համար նպաստավոր աշխարհագրական և կլիմայական պայմանները։


*Աղյուր՝ ՀՀ ԱՎԾ*

Ինչ վերաբերում է բանջարեղենի այլ տեսակներին, ներառյալ սմբուկ, տաքեղ, սեղանի ճակնդեղ, գազար, սոխ, սխտոր, կանաչ լոբի և կանաչ ոլոր, հիմնականում աճեցվում են գյուղատնտեսությունների կողմից տնամերձ հողատարածքներում, հետևաբար վերջիններին ծավալները փոքր մաս են կազմում Հայաստանի ընդհանուր բանջարեղենի արտադրությունում: Սմբուկի և տաքեղի բերքի ծավալները համեմատաբար մեծ են, այն դեպքում երբ մնացած բանջարեղենի տեսակների բերքի ծավալները գտնվել են 750-ից 24,000 տոննա/տարի միջակայքում (նայել Հավելված 1-ը մանրանասն տվյալների համար):

#### \* Սմբուկի բերքատվության դիմամիկա



#### Սոխի բերքատվության դիմամիկա



*Աղյուր՝ ՀՀ ԱՎԾ*

\* Ըստ ՀՀ ԱՎԾ տվյալների, 2013-2014թթ.-ին սմբուկը, պղպեղը և կանաչ լոբին ներառվել են այլ բանջարեղենի դասում: Միջին հաշվարկով, նշված ժամանակաշրջանում աս դասը կազմել է վերոհիշյալ մշակաբույսերի ընդհանուր բերքի 31.5%-ը: Բացի այդ, բանջարեղենի այլ դասում ներառված են բուսական կամաշիները, բրոկոլի, ծնեբեկը, բողի և այլն:

2016թ-ին բանջարեղենի ընդհանուր բերքը աննշան է նվազել (3.9%), կազմելով գրեթե 969 հազար տոննա՝ ի համեմատություն 2015թ-ին գրանցված 1 միլիոն տոննայի: Բացի այդ, ՀՀ-ում 2016թ. և 2015թ. ընթացքում զերմոցներից և զերմատներից հավաքվել է համապատասխանաբար 53 հազար տոննա և 33 հազար տոննա բերք:


#### Բանջարեղենի բերքն ըստ մարզերի

| Մոննա       | Բանջարեղեն |         |                |         |          |                | Կարտոֆիլ |  |
|-------------|------------|---------|----------------|---------|----------|----------------|----------|--|
|             | Մարզեր     |         | Բանջարեղեն     |         | Կարտոֆիլ |                |          |  |
|             | 2015       | 2016    | % փոփոխություն | 2015    | 2016     | % փոփոխություն |          |  |
| Երևան       | 7,131      | 6,431   | (9.8%)         | 1,862   | 1,902    | 2.1%           |          |  |
| Արագածոտն   | 40,400     | 36,654  | (9.3%)         | 45,822  | 41,250   | (10.0%)        |          |  |
| Արարատ      | 346,690    | 311,898 | (10.0%)        | 29,190  | 30,268   | 3.7%           |          |  |
| Արմավիր     | 418,256    | 421,612 | 0.8%           | 53,184  | 54,517   | 2.5%           |          |  |
| Գեղարքունիք | 41,083     | 36,182  | (11.9%)        | 206,835 | 206,523  | (0.2%)         |          |  |
| Լոռի        | 30,507     | 33,578  | 10.1%          | 75,864  | 74,268   | (2.1%)         |          |  |
| Կոտայք      | 27,278     | 22,079  | (19.1%)        | 18,940  | 17,424   | (8.0%)         |          |  |
| Շիրակ       | 55,237     | 56,615  | 2.5%           | 114,023 | 117,997  | 3.5%           |          |  |
| Սյունիք     | 18,060     | 18,218  | 0.9%           | 33,085  | 33,752   | 2.0%           |          |  |
| Վայոց ձոր   | 9,404      | 13,592  | 44.5%          | 3,739   | 6,225    | 66.5%          |          |  |
| Տավուշ      | 13,545     | 11,749  | (13.3%)        | 25,178  | 22,188   | (11.9%)        |          |  |
| Ընդամենը    | 1,007,589  | 968,607 | (3.9%)         | 607,719 | 606,314  | (0.2%)         |          |  |

*Աղյուր՝ ՀՀ ԱՎԾ*

Զերմոցները հիմնականում օգտագործում են Հոլանդական և Իսրայելական սերմնատեսակներ, որոնք ունեն բարձր բերքատվություն և ավելի դիմացկուն են, որի հաշվին էլ ունեն ցածր ինքնարժեք արտադրողների համար: Ի լրումն, քանզի Հայաստանն ու Իսրայելն ունեն միանման կլիմայական գոտիներ, Իսրայելական սորտերը հեշտությամբ են ադապտացվում Հայաստանում:

### Միջին բերքատվությունն ըստ մշակաբույսերի



Աղյուսք՝ <<ԱՎԾ

Նվազումը հիմնականում կապված է կաղամբի (այդ թվում՝ ծաղկակաղամբի), լոլիկի և վարունգի բերքատվության նվազմամբ՝ համապատասխանաբար 14%-ով, 11.1%-ով և 8.7%-ով: Բացի այդ, արձանագրվել է կանաչ ոլորի և կանաչ լոբու բերքատվության էական նվազում՝ համապատասխանաբար 18.2%-ով և 16.5%-ով:

### 1.1.2 Բերքահավաքի տարածություններ

2016թ-ին բանջարեղենի ընդհանուր բերքահավաքի տարածությունն աճել է 4.6%-ով, կազմելով շուրջ 29 հազար հա՝ ի համեմատություն 2015թ.: Արմավիրը բացահայտ առաջատարն է բանջարեղենի արտադրությունում, քանի որ բանջարեղենային մշակաբույսերի տարածությունների գերակշիռ մասը գտնվում է Արմավիրի մարզում: Սա հիմնականում պայմանավորված է աշխարհագրական դիրքով և բանջարեղենի արտադրության համար բարենպաստ կլիմայական պայմաններով:

| Մշակաբույսերի ընդհանուր բերքահավաքի տարածությունը (հա) ըստ մարզերի |               |               |                |               |               |                |
|--------------------------------------------------------------------|---------------|---------------|----------------|---------------|---------------|----------------|
|                                                                    | Բանջարեղեն    |               |                | Կարտոֆիլ      |               |                |
|                                                                    | 2015          | 2016          | % փոփոխություն | 2015          | 2016          | % փոփոխություն |
| Երևան                                                              | 313           | 317           | 1.3%           | 90            | 90            | -              |
| Արագածոտն                                                          | 1,107         | 1,270         | 14.7%          | 1,729         | 1,850         | 7.0%           |
| Արարատ                                                             | 6,616         | 6,749         | 2.0%           | 861           | 914           | 6.2%           |
| Արմավիր                                                            | 11,111        | 11,395        | 2.6%           | 1,439         | 1,601         | 11.3%          |
| Գեղարքունիք                                                        | 1,607         | 1,689         | 5.1%           | 10,222        | 10,239        | 0.2%           |
| Լոռի                                                               | 1,598         | 1,790         | 12.0%          | 4,278         | 4,613         | 7.8%           |
| Կոտայք                                                             | 1,164         | 1,264         | 8.6%           | 850           | 923           | 8.6%           |
| Շիրակ                                                              | 1,718         | 1,895         | 10.3%          | 4,383         | 4,556         | 3.9%           |
| Սյունիք                                                            | 1,079         | 1,098         | 1.8%           | 1,747         | 1,771         | 1.4%           |
| Վայոց ձոր                                                          | 485           | 661           | 36.3%          | 198           | 289           | 46.0%          |
| Տավուշ                                                             | 1,123         | 1,079         | (3.9%)         | 1,972         | 1,983         | 0.6%           |
| <b>Ընդամենը</b>                                                    | <b>27,921</b> | <b>29,207</b> | <b>4.6%</b>    | <b>27,769</b> | <b>28,829</b> | <b>3.8%</b>    |

Աղյուսք՝ <<ԱՎԾ

2015-2016թթ. ընթացքում ընտրված բանջարեղենային մշակաբույսերի մեկ հեկտարին բաժին ընկնող միջին բերքատվության ցուցանիշը տատանվող էր: 2016թ-ին ընդհանուր բերքատվությունը նվազել է 8%-ով՝ կազմելով 301 տոննա մեկ հեկտարի համար՝ ի համեմատություն նախորդ տարի գրանցված 326 տոննայի:


2016թ.-ին Արմավիրում էր գտնվում բանջարեղենի ընդհանուր բերքահավաքի տարածության 39%-ը, Արարատում՝ 23.1%-ը՝ տարածությամբ երկրորդ ամենախոշորը:

2016թ.-ին Արարատի մարզն ուներ լոլիկի աճեցման համար հատկացված տարածքների ամենամեծ մասը (44%), համեմատած այլ մարզերի հետ: 2016թ.-ին կաղամբի, վարունգի, տաքեղի, սմբուկի և կանաչ ոլորի բերքահավաքի ամենամեծ տարածությունները գտնվել են Արմավիրում և Արարատում: Շիրակի, Լոռու և Գեղարքունիքի մարզերն ունեին համեմատարար նմանատիպ մասնաբաժին ընդհանուր բերքահավաքի տարածությունում՝ համապատասխանաբար 6.5%, 6.1% և 5.8%:

2016թ.-ին Արարատի մարզն արտադրել է ամենամեծ քանակությամբ լոլիկ՝ 162,930 տոննա (54.6%) ի համեմատություն Արմավիրում արտադրված 106,778 տոննայի (35.8%): Արարատն առաջատար էր նաև կանաչ լորու արտադրությունում՝ 6,838 տոննա (39.8%), ի համեմատություն Արմավիրում արտադրված 4,719 տոննայի (27.5%):

Շիրակի և Կոտայքի մարզերն առաջատար դիրքեր են զբաղեցնում գազարի արտադրությունում՝ ապահովելով գազարի ընդհանուր բերքի համապատասխանաբար 41.4%-ը և 30.7%-ը: 2016թ.-ին Շիրակի, Արարատի, Գեղարքունիքի և Արագածոտնի մարզերն ապահովել են սխտորի ընդհանուր բերքի 65%-ը՝ համապատասխանաբար 19.8%, 15.9%, 15.7% և 13.6% մասնաբաժիններով:

#### **Մարզերի արտադրողականությունն ըստ բանջարեղենային մշակաբույսերի, 2016թ.**



*Աղյուսակ 22 ԱվԸ*

Տեղեկատվություն ընտրված բանջարեղենային վերաբերյալ՝ մարզերի կտրվածքով 2016թ.-ի համար:

**Զարտեղ 1. Ընտրված բանջարեղենային մշակաբույսերի բերքատվության տարածություններն ըստ մարզերի**




*Աղյուսակ 22 ԱվԸ*

2016թ.-ին, Արարատի մարզում գրանցվել է վարունգի, լոլիկի, սմբուկի և տաքեղի ամենաբարձր բերքատվությունը մեկ հեկտարի համար:

Կոտայքի մարզում գրանցվել է գազարի ամենաբարձր բերքատվությունը մեկ հեկտարի համար:

Հավելված 2-ում ներկայացված է մշակաբույսերի արտադրության

2016թ-ին բերքահավաքի տարածությունը ներառել է բանջարեղենային մշակաբույսերի և կարտոֆիլի ցանքային տարածությունների համապատասխանաբար 99.7% և 99.9%:



Առանձին բանջարեղենային մշակաբույսերի բերքահավաքի տարածության մասնաբաժինները (տոկոսային արտահայտմանք) ցանքային տարածություններում ներկայացված են գրաֆիկում:

2016թ-ին ՀՀ մարզերում բերքահավաքի տարածության բաշխվածության, ընդհանուր բերքահավաքի տարածությունում մասնաբաժնի և ընտրված մշակաբույսերի ցանքային տարածության բաշխվածության վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Հավելված 1-ում:

## 1.2 Վերամշակման ոլորտում օգտագործվող հիմնական բանջարեղենային մշակաբույսերի և հիմնական արտադրողների վերլուծություն

Վերամշակման համար օգտագործվող հիմնական բանջարեղենային մշակաբույսերն են՝ լոլիկը, վարունգը, տաքեղը, սմբուկը, գազարը, կանաչ լոբին և սխտորը: 2016թ-ին ընտրված բանջարեղենային մշակաբույսերը կազմել են նշված ժամանակաշրջանուն Հայաստանում արտադրված բանջարեղենի ընդհանուր ծավալի 61.7%-ը:


Մնացած մշակաբույսերը, այդ թվում՝ կաղանքը, ներառյալ ծաղկակաղամբ, կանաչ ոլոռը, սոխը, սեղանի ճակնդեղը և այլ բանջարեղենը, կազմել են 38.3% և չեն օգտագործվում վերամշակող ընկերությունների կողմից կամ օգտագործվում են սահմանափակ քանակությամբ:

Ամփոփ տեղեկատվությունը ներկայացված է ստորև բերվող այլուսակում:

| Վերամշակման մեջ օգտագործվող բանջարեղենի հիմնական տեսակները |                                                                                                        |
|------------------------------------------------------------|--------------------------------------------------------------------------------------------------------|
| Լոլիկ                                                      | Տոնատի սոուսներ, թթու դրված լոլիկ և բանջարեղենային խառնուրդներ                                         |
| Վարունգ                                                    | Թթու դրված վարունգ և բանջարեղենային խառնուրդներ                                                        |
| Կաղամբ, բոլոր տեսակի                                       | Թթու դրված բանջարեղենային խառնուրդներ                                                                  |
| Սմբուկ                                                     | Խորոված սմբուկ և բանջարեղենային խառնուրդներ, նաև չորացված սմբուկ                                       |
| Տաքեղ                                                      | Թթու դրված տաքեղ, լցոնած տաքեղ և բանջարեղենային խառնուրդներ, նաև սառեցված տաքեղ և պապրիկա              |
| Սեղամի ճակնիեղ                                             | Լայնորեն չի օգտագործվում վերամշակման մեջ                                                               |
| Գազար                                                      | Լրացուցիչ բաղադրիչ, հիմնականում օգտագործվող լցոնած տաքեղի և բանջարեղենային խառնուրդների մեջ            |
| Սոխ                                                        | Պահածոյացված սոխ և բանջարեղենային խառնուրդներ                                                          |
| Միստոր                                                     | Լրացուցիչ բաղադրիչ թթու դրված բանջարեղենների (Վարունգ, լոլիկ և այլն) և բանջարեղենային խառնուրդների մեջ |
| Կանաչ ոլոռ                                                 | Պահածոյացված ոլոռ                                                                                      |
| Կանաչ լորի                                                 | Օգտագործվում է որպես վերամշակված բանջարեղենային արտադրանքի լրացուցիչ տեսակ                             |
| Կարտոֆիլ                                                   | Վերամշակումը գորեթե բացակայում է կարտոֆիլի համար                                                       |

*Աղյուսք՝ Քեյ-Փի-Էմ-Զի-ի վերլուծություն*

Թարմ բանջարեղենի հիմնական արտադրողներն են անհատ գյուղացիական տնտեսությունները: 2016թ-ին նրանց բաժին էր ընկնում բանջարեղենի ընդհանուր



*Աղյուսք՝ ՀՀ ԱՎԾ  
Ծանոթագրություն. 2016թ. տվյալները դեռևս չեն հրապարակվել ՀՀ ԱՎԾ կողմից և  
հաշվարկվել են Քեյ-Փի-Էմ-Զի-ի կողմից*

արտադրության 99.7%-ը՝ կազմելով 966 հազար տոննա: Առևտրային կազմակերպություններն, իրենց հերթին, ապահովել են թարմ բանջարեղենի ընդհանուր արտադրության 0.3%-ը, ինչը կազմում է 2.6 հազար տոննա: Բնակչության տնտեսությունները զբաղեցնում են թարմ բանջարեղենի ընդհանուր բերքատվության տարածության 99.6%-ը, որը 2016թ-ին կազմել է 30.1 հազար հա: Առևտրային կազմակերպություններն օգտագործել են ընդհանուր բերքատվության տարածության մնացած 0.4%-ը, որը կազմում է 0.1 հազար հա:

Կարտոֆիլի արտադրության բացվածքը ցույց է տալիս նմանատիպ միտումներ: Մասնավորապես, 2016թ-ին կարտոֆիլի հիմնական արտադրողները անհատ տնտեսություններն են, որոնց բաժին էր ընկնում կարտոֆիլի ընդհանուր արտադրության 99.6%-ը՝ կազմելով 603.9 հազար տոննա: Առևտրային կազմակերպություններն ապահովել են կարտոֆիլի ընդհանուր արտադրության 0.4%-ը, ինչը կազմում է 2.4 հազար տոննա: Նույն ժամանակաշրջանում բնակչության տնտեսություններն օգտագործել են կարտոֆիլի ընդհանուր բերքատվության տարածության 99.7%-ը, որը կազմել է 28.8 հազար հա, մինչդեռ առևտրային կազմակերպությունները զբաղեցրել են ընդհանուր բերքատվության տարածության մնացած 0.3%-ը, որը կազմում է 0.1 հազար հա:

### 1.3 Վերամշակման ոլորտում ընտրված բանջարեղենների արտադրական գործընթացի վերլուծություն

Այս բաժնում իրականացված վերլուծությունը հիմնված է Հայաստանի Հանրապետության 5 մարզերում գործող 156 գյուղացիական տնտեսությունների շրջանում կատարած հարցման արդյունքում ստացված տեղեկատվության վրա: Հարցման մասնակից մարզերի ամբողջական ցանկը ներկայացված է Հավելված 30-ում:

Գյուղական տնտեսությունների տվյալների համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում արտադրվում է բանջարեղենի մեծ բազմազանություն: Մասնավորապես, վերամշակման ոլորտում օգտագործվող բանջարեղենի հետևյալ սորտերն մշակվել են Հայաստանի Հանրապետությունում 2016թ-ին.

- **Գազար – Ռուսական, Սամսոն**
- **Լոլիկ – ԲՏ Պակմոր, Բոկատ, Լինդա**
- **Տարդեղ (քաղցր և կծու) – Բուլղարական, Մոլդովական, Մուշ-55, Տեղական Չինանի**
- **Սմբուկ – Դելֆին, Սպունգ, Սև Մարգարիտ**
- **Վարունգ – Ռուսական Ալյաս, Նազրվան, Կորնիչոն**

Գյուղական տնտեսությունների կողմից նշված Հայաստանի Հանրապետությունում մշակվող բանջարեղենի սորտերի ամբողջական ցանկը ներկայացված է Հավելված 3-ում:

Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերում կիրառվում են թարմ բանջարեղենի մշակման տարրեր գործընթացներ՝ կախված համապատասխան մարզերի կլիմայական պայմաններից, աշխարհագրական առանձնահատկություններից, ինչպես նաև ոռոգման ջրի հասանելիությունից:

Համաձայն ֆերմերների միջև անցկացված հարցմանը՝ թարմ բանջարեղենները հիմնականում ոռոգվում են ակոսների միջոցով և միայն շատ քիչ դեպքերում է, որ օգտագործվում է ոռոգման կաթիլային համակարգ:

Կից աղյուսակը ներկայացնում է ֆերմերների կողմից տրված գնահատականը ջրի հասանելիությանը:


### Համապատասխան գնահատական տվյալների տոկոսները

| Գնահատական         | Զրի մատակարարումը<br>հարցված շրջանում | Զրի մատակարարումը<br>հարցված ֆերմերային<br>տնտեսությունում |
|--------------------|---------------------------------------|------------------------------------------------------------|
| Շատ լավ            | 10.90%                                | 9.00%                                                      |
| Լավ                | 20.50%                                | 29.50%                                                     |
| Միջին              | 43.60%                                | 35.90%                                                     |
| Վատ                | 10.30%                                | 11.50%                                                     |
| Շատ վատ            | 13.50%                                | 12.20%                                                     |
| Դժվար է պատասխանել | 1.30%                                 | 1.90%                                                      |

Աղյուսք՝ ԱՅ ԷՄ ԱՌ - ի հարցում և ՔԵՋ-ՓԻ-ԷՄ-ՁԻ-ի վերլուծություն

Հաջորդ հնֆոգրաֆիկում ցույց են տրված թարմ բանջարեղենի մշակման հիմնական քայլերը:

### Մշակման գործընթացի նկարագրություն



Աղյուսքները՝ (1) ՔԵՋ-ՓԻ-ԷՄ-ՁԻ-ի հարցում և վերլուծությունը  
(2) Arizona Cooperative Extension

### Լոլիկի մշակում

Գյուղացիական տնտեսությունների շրջանում իրականացված հարցման համաձայն՝ լոլիկը հիմնականում մշակվում է Արմավիրի, Արարատի և Գեղարքունիքի մարզերում:

Ինչպես նշել են հարցման մասնակիցները, 2016թ-ին օրգանակ լոլիկը մշակվել էր բոլոր երեք մարզերում՝ Արմավիրում, Արարատում և Գեղարքունիքում, համապատասխանաբար 31,000 կգ, 17,000 կգ և 200 կգ ընդհանուր ծավալով<sup>1</sup>:


Կախված մարզից՝ լոլիկի մշակման համար պահանջվող համապատասխան քայլերն իրականացվում են հետևյալ հաճախականությամբ տարվա ընթացքում:

- Քաղիան – 3-4 անգամ
- Փխրեցում – 2-3 անգամ
- Վարելու աշխատանքներ – 1-2 անգամ
- Ցանք – 1 անգամ
- Պարարտանյութով սնուցում – 1-4 անգամ
- Ոռոգում – 5-21 անգամ
- Թունաքիմիկատների օգտագործում – 1-5 անգամ
- Բերքահավաք – 11-20 անգամ

Լոլիկի մշակման քայլերի հաճախականությանը վերաբերող տեղեկատվությունը մանրամասն ներկայացված է Հավելված 4-ում:

Ստորև ներկայացված գծապատկերում պատկերված է լոլիկի ցանքի և բերքահավաքի ժամանակացույցն ըստ մարզերի: Գծապատկերի համաձայն՝ մայիսին Արմավիրի մարզում հնարավոր է իրականացնել լոլիկի թե՛ ցանք և թե՛ բերքահավաք: Նշված մարզերում ցանքի և բերքահավաքի ամենակարծ ժամանակահատվածը Գեղարքունիքում է:

#### **Լոլիկի ցանքի և բերքահավաքի ժամանակացույցն ըստ մարզերի**




*Աղյուրը՝ ԱՅ ԷՄ ԱՌ - ի հարցում և ՔԵՐ-ՓԻ-ԷՄ-ԶԻ-ի վերլուծություն*

Ըստ հարցմանը մասնակցած գյուղացիական տնտեսությունների՝ մշակման աշխատանքների մեծ մասն իրականացվում է ձեռքով: Հարցման արդյունքների համաձայն՝ միայն վարելու ժամանակ է ավտոմատացված աշխատանքի միջնում 85.7%-ը: Ստորև ներկայացված գծապատկերում պատկերված են ավտոմատացման մակարդակների միջին մասնաբաժինները մշակման գործընթացի բոլոր սահմանված քայլերի համար:

<sup>1</sup> Նշված է միայն հարցմանը մասնակցած գյուղացիական տնտեսությունների օրգանական արտադրության ընդհանուր ծավալը:

### Լոլիկի մշակման գործընթացի ավտոմատացման մակարդակի նկարագիրը



*Մոլորդը՝ ԱՅ ԷՄ ԱՌ - ի հարցում և Քեյ-Փի-Էմ-Զի-ի վերլուծություն*

Հարցմանը մասնակցած բոլոր գյուղացիական տնտեսությունները նշել են, որ լոլիկի մշակման համար օգտագործվել են միայն սածիլներ, մասնավորապես, միջինում 72%-ը նշել է, որ օգտագործել է գնված սածիլներ, իսկ մնացած 28%-ը տնկել է իր սեփական տնտեսության սածիլները։ 2016թ-ին հարցմանը մասնակցած գյուղացիական տնտեսությունների 89%-ը լոլիկը մշակել է բացօթյա տարածքներում, իսկ մնացած 11%-ը՝ ջերմոցներում և/կամ ջերմատներում։

Հարցման մասնակիցների տվյալների համաձայն՝ 2016թ-ին 1 հեկտարի վրա տնկած լոլիկի սածիլների միջին քանակը կազմել էր 32,190 և 1 հեկտարից ստացվել է միջինում 41,626 կգ լոլիկ։

Տարբեր մարզերում լոլիկի սածիլները ծաղկում են տարբեր ժամանակ։ Գյուղացիական տնտեսությունների շրջանում իրականացված հարցման համաձայն՝ լոլիկի սածիլները ծաղկում են հիմնականում հետևյալ ամիսներին՝ կախված մարզերից։

- Արմավիր – ապրիլ, մայիս, հունիս
- Արարատ – հունիս, հուլիս, օգոստոս
- Գեղարքունիք – հունիս, հուլիս

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են լոլիկի մշակման համար կիրառվող վերահսկողության հիմնական միջոցները։

| Լոլիկի մշակման համար կիրառվող պարարտանյութերի, թունաքիմիկատների տեսակները և նոլախոտերի վերացման միջոցները |                           |                            |  |
|-----------------------------------------------------------------------------------------------------------|---------------------------|----------------------------|--|
| Պարարտանյութերի տեսակներ                                                                                  | Թունաքիմիկատների տեսակներ | Մոլախոտի վերացման միջոցներ |  |
| Գոմաղը                                                                                                    | Verti 1                   | Zingor                     |  |
| Ֆոսֆորի, կալիումի և ազոտի պարարտանյութեր                                                                  | Rodomil Gold              | Weeding                    |  |
| Կարբիդ                                                                                                    | Proklerin                 | Super Tayga                |  |
| Ամոֆոս                                                                                                    | Alpak                     | Geghagard                  |  |
| -                                                                                                         | Arevo                     | Raunda                     |  |

*Մոլորդը՝ ԱՅ ԷՄ ԱՌ - ի հարցում և Քեյ-Փի-Էմ-Զի-ի վերլուծություն*

## Վարունգի մշակում

Գյուղացիական տնտեսությունների շրջանում իրականացված հարցման համաձայն՝ վարունգը հիմնականում մշակվում է Արմավիրի, Արարատի, Շիրակի և Գեղարքունիքի մարզերում:

Ինչպես նշել են հարցման մասնակիցները, 2016թ-ին օրգանակ վարունգը մշակվել էր բոլոր չորս մարզերում՝ Արմավիրում, Արարատում, Շիրակում և Գեղարքունիքում, համապատասխանաբար 5,700 կգ, 5,000 կգ, 5,200 կգ և 160 կգ ծավալով<sup>2</sup>:

Կախված մարզից՝ վարունգի մշակման համար պահանջվող համապատասխան քայլերն իրականացվում են հետևյալ հաճախականությամբ տարվա ընթացքում.


- Քաղիան – 3 անգամ
- Փխրեցում – 2 անգամ
- Վարելու աշխատանքներ – 1 անգամ
- Ցանք – 1 անգամ
- Պարարտանյութով սնուցում – 1-3 անգամ
- Ոռոգում – 5-14 անգամ
- Թունաքիմիկատների օգտագործում – 1-7 անգամ
- Բերքահավաք – 7-22 անգամ

Վարունգի մշակման քայլերի հաճախականությանը վերաբերող տեղեկատվությունը մանրամասն ներկայացված է Հավելված 4-ում:

Ստորև ներկայացված գծապատկերում պատկերված է վարունգի ցանքի և բերքահավաքի ժամանակացույցն ըստ մարզերի: Գծապատկերի համաձայն՝ հունիսին և հուլիսին Արմավիրի մարզում հնարավոր է իրականացնել վարունգի թե՛ ցանք և թե՛ բերքահավաք, իսկ Արարատի մարզում ցանքը և բերքահավաքը հնարավոր է միաժամանակ իրականացնել միայն հուլիսին: Նշված մարզերում ցանքի և բերքահավաքի ամենակարծ ժամանակահատվածը Գեղարքունիքում է:

<sup>2</sup> Նշված է միայն հարցմանը մասնակցած գյուղացիական տնտեսությունների օրգանական արտադրության ընդհանուր ծավալը:


### Վարունգի ցանցի եվ բերքահավաքի ժամանակացույցն ըստ մարզերի



*Աղյուս՝ ԱՅ ԷՄ ԱՌ - ի հարցում և Քեյ-Փի-Էմ-Զի-ի վերլուծություն*

2016թ-ին ներմուծման ընդհանուր արժեքը մանաբաժինն ունեին Իրանը, Թուրքիան և Ռուսաստանը՝ կազմելով համապատասխանաբար 1,757 հազար ԱՄՆ դոլար (49.7%), 635 հազար ԱՄՆ դոլար (18%) և 409 հազար ԱՄՆ դոլար (11.6%):  
 – Ռուսաստանը բացահայտ առաջատարն էր իր 42.6% (3,463 տոննա) մասնաբաժինով ներմուծման ընդհանուր ծավալում, նրան

հաջորդում են իրանց և Թուրքիան՝ համապատասխանաբար 36.7% (մոտ 3 հազար տոննա) և 6.6% (539 տոննա) մասնաբաժիններով ներմուծման ընդհանուր ծավալում:

Ոուսաստանի կողմից ներմուծման ծավալում առաջատար դիրք զբաղեցնելը պայմանավորված է ներմուծվող ապրանքների համեմատարար էժան գներով, ինչպես նաև այն փաստով, որ 2015թ. հունվարի 2-ին դաշնալով Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) լիիրավ անդամ, Հայաստանի համար գործում են առավել բարենպաստ մաքսային կանոններ և պայմաններ:

Բանջարեղենային մշակաբույսերի ներմուծման արժեքի կառուցվածքը ներմուծման երեք հիմնական երկրների համար ներկայացված է Հավելված 6-ում:

- 2016թ-ին իրանից կատարվող ներմուծումների արժեքը նախորդ տարվա համեմատ նվազել է 45.2%-ով՝ կազմելով 1,757 հազար ԱՄՆ դոլար, որը 2013թ-ից հետո գրանցված ամենացածր ցուցանիշն է: Այս եական նվազումը հիմնականում պայմանավորված էր հետևյալ բանջարեղենային մշակաբույսերի ներմուծման ծավալի նվազումով.
- Գլուխ կաղամբ, ծաղկակաղամբ, շաղգանակաղամբ, տերևակաղամբ և Brassica ցեղի այլ նույնաննան ուտելի բանջարեղեն (նվազում 95.4%-ով),
- Գլուխ սոխ, սոխ-շալոտ, սխտոր, սոխ-պրաս և այլ կոճղեզավոր բանջարեղեն (նվազում 57.4%-ով),
- Վարունգ և մանրավարունգ (նվազում 16.8%-ով):


2015թ-ին ներմուծված ծավալը, կաղամբի տեղական արտադրության մի փոքր աճի հետ մեկտեղ, արտահանվել է Ռուսաստանի Դաշնություն, քանի որ նշված դասի Ռուսաստան արտահանման ծավալն աճել էր գրեթե 5,900 տոննայով (268%) 2015թ-ին:

2016թ-ին գլուխ կաղամբի, ծաղկակաղամբի, շաղգանակաղամբի, տերևակաղամբի և Brassica ցեղի այլ նույնաննան ուտելի բանջարեղենի արտահանման ծավալների եական նվազումը պայմանավորված էր նախորդ տարվա համեմատ այս մշակաբույսերի արտահանման ծավալների զգալի աճով (3,890 տոննա, 200%), որն իրենից ներկայացնում էր 2013-2016թթ. ժամանակաշրջանում գրանցված մեկանգամյա կտրուկ աճ:

2016թ-ին իրանից ներմուծումների արժեքում առավել խոշոր մասնաբաժին ունեին հետևյալ դասերը.

- Գլուխ սոխ, սխտոր և այլ կոճղեզավոր բանջարեղեն՝ 511 հազար ԱՄՆ դոլար (1,297 տոննա),
- Սունկ, գետնասունկ, դդում, սմբուկ, սպանախ, ծիթապտուղ և տաքդեղ՝ 454 հազար ԱՄՆ դոլար (156 տոննա),
- Գազար, շաղցամ և այլ նույնաննան ուտելի արմատապտուղներ՝ 401 հազար ԱՄՆ դոլար (1,108 տոննա):

**Իրանից ներմուծումների արժեքի բացվածքն ըստ դասերի, 2016թ.**




- Գլուխ սոխ, սոխ-շալոտ, սխտոր, սոխ-պրաս և այլ կոճղեզավոր բանջարեղեն
- Սումկ, գետնասումկ, դրմիկ, սմբուկ, սմբուկ, սպանախ, ծիթապտուղ, պղպաղ
- Գազար, շաղամ, սեղանի ճակնդեղ, քոշմորուք, արմատային նեխուր, ամսական բողկ և այլ նույնանման ուտելի արմատապտուղներ
- Վարունգ և մանրավարունգ
- Լոլիկ
- Գլուխ կաղամբ, ծաղկակաղամբ, շաղամակաղամբ, տերևակաղամբ և Brassica ցեղի այլ նույնանման ուտելի բանջարեղեն

*Աղյուսը՝ Trade Map*

Մասնավորապես, թարմ կամ սառեցված սոխը և սոխ-շալոտը կազմում էին վերը նշված 1-ին դասի 99%-ը և ներմուծումների ընդհանուր արժեքի 14%-ը: Մինչեւ գազարի և այլ ուտելի արմատապտուղների դասում 100%-ը կազմում էին թարմ կամ սառեցված գազարը և շաղամը, որոնց բաժին էր ընկնում ընդհանուր ներմուծման 11%-ը:

**Թուրքիայից ներմուծումների արժեքի բացվածքն ըստ դասերի, 2016թ.**



- Լոլիկ
- Գլուխ սոխ, սոխ-շալոտ, սխտոր, սոխ-պրաս և այլ կոճղեզավոր բանջարեղեն
- Գազար, շաղամ, սեղանի ճակնդեղ, քոշմորուք, արմատային նեխուր, ամսական բողկ և այլ նույնանման ուտելի արմատապտուղներ
- Սումկ, գետնասումկ, դրմիկ, սմբուկ, սմբուկ, սպանախ, ծիթապտուղ, պղպաղ
- Վարունգ և մանրավարունգ
- Գլուխ կաղամբ, ծաղկակաղամբ, շաղամակաղամբ, տերևակաղամբ և Brassica ցեղի այլ նույնանման ուտելի բանջարեղեն
- Leguminous vegetables, shelled or unshelled

*Աղյուսը՝ Trade Map*


2016թ-ին նախորդ տարվա համեմատ Թուրքիայից իրականացվող ներմուծումների արժեքն աճել է 44%-ով՝ կազմելով 539 հազար ԱՄՆ դոլար (635 տոննա):

2016թ-ին ներմուծված թարմ բանջարեղենի հիմնական դասերն էին՝

- Լոլիկը՝ 248 հազար ԱՄՆ դոլար (84 տոննա),

- Գլուխ սովոր, սովորական, սիստորը և այլ կոճղեզավոր բանջարեղենը՝ 127 հազար ԱՄՆ դոլար (293 տոննա),
  - Գազարը, շաղգամը և այլ ուտելի արմատապտուղները՝ 90 հազար ԱՄՆ դոլար (225 տոննա):

Ուսասատանից ներմուծումների արժեքի բազվածքն ըստ դասերի,թ. 2016թ.



- Գլուխ սիխ, սիխ-շալոտ, սիստոր, սիխ-պրաս և այլ կոճղեզավոր բանջարեղեն
  - Լորազգի բանջարեղեն, կեղևով կամ կեղևահանած
  - Վարունգ և մամրավարունգ
  - Գազար, շաղցամ, սեղանի ճակնդեղ, քոչմորուք, արմատային ճեխուր, ամսական բողկ և այլ նույնանման ուտելի արագածապտուղներ
  - Լոլիկ
  - Արևի օւնիքնաբան ոռնիկ անրով սասանի ձեռապրուք պարե

U.S. News & World Report

2016թ-ին Ռուսաստանից իրականացվող ներմուծումների արժեքն կտրուկ աճել էր 4 անգամ՝ 381.2%-ով՝ մինչև 409 հազար ԱՄՆ դոլար (2,985 տոննա)՝ ի համեմատություն նախորդ տարվա, որը 2014թ-ից ի վեր գրանցված ամենաբարձր ցուցանիշն էր: Ներմուծումների արժեքի հանկարծակի աճը հիմնականում պայմանավորված էր հետևյալ ռասական աճով:

- Սոխ, սոխ-շալոտ և սխտոր (աճ 410.6%-ով),
  - Լոբազգի ռանցառեղեն (աճ 351.9%-ով):

ԵԱՏՄ սահմաններում գործող բարենպաստ պայմաններով առևտության պայմանագրերը և նարսային ռեժիմն կառող են լինեն այս ամենահաջար ապահովագործությունը:

Ուրախաստանից նեղմութեան հիմնական ռասմերն են՝

- Սոխ, սոխ-շալոտ և սխտոր՝ 240 հազար ԱՄ դոլար (3,230 տոննա)
  - Լոբազգի բանջարեղեմ՝ 122 հազար ԱՄ դոլար (116 տոննա)
  - Վարունգ և մանրավառունգ՝ 40 հազար ԱՄ դոլար (44 տոննա)

| Ռուսաստանից ներմուծված հիմնական բանջարեղենի դասերը, 2016թ.                                                                      |                                |                                             |             |                                                          |
|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--------------------------------|---------------------------------------------|-------------|----------------------------------------------------------|
|                                                                                                                                 | Ներմուծման<br>ծավալ<br>(տոննա) | Ներմուծման<br>արժեք<br>(հազար<br>ԱՄՆ դոլար) | %<br>դասում | %<br>ընդհանուր<br>ներմուծման<br>արժեքային<br>ցուցանիշում |
| <b>Գլուխ սոխ, սոխ-շալոտ, սխտոր, սոխ-պյաս և այլ կոճղեզավոր<br/>բանջարեղեններ</b>                                                 |                                |                                             |             |                                                          |
| Գլուխ սոխ եւ սոխ-շալոտ                                                                                                          | 3,222                          | 237                                         | 98.8%       | 58%                                                      |
| <b>Լոբազգի բանջարեղեններ</b>                                                                                                    |                                |                                             |             |                                                          |
| Pisum sativum ոլոռ                                                                                                              | 107                            | 110                                         | 90.2%       | 26.9%                                                    |
| Վարունգ և մանրավարունգ                                                                                                          | 44                             | 40                                          | 100%        | 9.8%                                                     |
| <b>Գազպար, շաղցամ, սեղանի ճակնդեղ, քոշմորուք, արմատային<br/>նեխուր, ամսական բողի և այլ նույնանման ուտելի<br/>արմատապտուղներ</b> |                                |                                             |             |                                                          |

|                                  |          |        |             |              |
|----------------------------------|----------|--------|-------------|--------------|
| Գաղաքար և շաղգամ<br><b>Լոյիկ</b> | 45<br>17 | 3<br>2 | 75%<br>100% | 0.7%<br>0.5% |
|----------------------------------|----------|--------|-------------|--------------|

Մորյուրը՝ Trade Map

### Թարմ/սառեցված բանջարեղենի ներմուծման դիմանիկան 2017թ.




Մորյուրը՝ ՀՀ ԱՎԾ

Ներմուծումների ամենաբարձր ցուցանիշը գրանցվել էր մայիսին՝ արժեքը կազմել է 2,245 հազար ԱՄՆ դոլար, իսկ ծավալը՝ 952 տոննա:

Սակայն հունիսին ներմուծումների արժեքը նվազել է 49.6%-ով՝ կազմելով 480 հազար ԱՄՆ դոլար (1,046 տոննա). Այս հանգամանքը կարող է պայմանավորված լինել որոշ մշակաբույսերի բերքահավաքի սեզոնայնությամբ:

### Բանջարեղենի ներմուծումն ըստ դասերի 2017թ.



Մորյուրը՝ ՀՀ ԱՎԾ


2017թ. առաջին վեց ամիսների ներմուծումների կառուցվածքը ներառում է 6 դաս:

- Ներմուծումներում գերակշիռ մասնաբաժին է հն կազմում գլուխ սոխը, սոխ-շալոտը, սխտորը, սոխ-պրասը և այլ կոճղեզավոր բանջարեղենը. այս մշակաբույսերի ներմուծումների արժեքը կազմում է 1,199 հազար ԱՄՆ դոլար, իսկ ծավալը՝ 3,661 տոննա:
- Յաջորդ երկու հիմնական դասերն էին.
  - Գաղաքը, շաղգամը, սեղանի ճակնդեղը, քոշմորուքը, արմատային նեխուրը, ամսական բողկը և այլ նույնանման ուտելի արմատապտուղները՝ 567 հազար ԱՄՆ դոլար (1,830 տոննա) և

- Սումկը, գետնասունկը, դդումը, սմբուկը, սպանախը, ձիթապտուղը և տաքդեղը՝ 564 հազար ԱՄՆ դոլար (225 տոննա):


### **1.5.3. Թարմ կամ սառեցված կարտոֆիլի ներմուծում**

**Կարտոֆիլի ներմուծման դիմամիկա**



սերմացուի) ներմուծումների էական՝ 14 անգամ աճով՝ մինչև 588 հազար ԱՄՆ դոլար՝ ի համեմատություն 2015թ.: 2016թ-ին սերմացու կարտոֆիլին բաժին էր ընկել կարտոֆիլի ներմուծման արժեքի 73%-ը, իսկ մնացածը (27%) կազմում էր թարմ կամ սառեցված կարտոֆիլի (բացառությամբ սերմացուի) մասնաբաժինը:

**Կարտոֆիլի ներմուծման արժեքի բացվածքն ըստ երկրների, 2016թ.**



2013-2016թթ. ընկած ժամանակաշրջանում կարտոֆիլի ներմուծումն աճել էր 21.7% ԲԱՏԱՏ-ով: 2015թ-ին գրանցված 0.5% նվազումը կապված էր սերմացու կարտոֆիլի ներմուծման արժեքի 26% նվազումով՝ մինչև 1,603 հազար ԱՄՆ դոլար, ինչը հիմնականում հասուցվել էր թարմ կամ սառեցված կարտոֆիլի (բացառությամբ

ներմուծվում երեք երկրներից՝ Նիդերլանդներից, Եգիպտոսից և Գերմանիայից, որոնց բաժին են ընկերում կարտոֆիլի ներմուծումների ընդհանուր արժեքի ամենաբարձր մասնաբաժինները:

Մասնավորապես, 2016թ. կարտոֆիլի ներմուծման արժեքի կեսն ապահովել են Նիդերլանդները՝ կազմելով 1,089 հազար ԱՄՆ դոլար (մոտ 2 հազար տոննա):


Եգիպտոսից և Գերմանիայից իրականացվող ներմուծումներն, իրենց հերթին, կազմել են 344 հազար ԱՄՆ դոլար (911 տոննա) և 241 հազար ԱՄՆ դոլար (421 տոննա):

Կարտոֆիլի ընդհանուր ներմուծումները կազմել են 1,265 հազար ԱՄՆ դոլար (1,822 տոննա) առաջին կիսամյակի համար: 2017թ. առաջին վեց ամիսներին կարտոֆիլի ներմուծումն աճել էր հիմնականում գարնան ամիսների ընթացքում, հատկապես ապրիլին կազմելով 983.6 հազար ԱՄՆ դոլար (1,324.6 տոննա), որը կազմում էր տարվա առաջին կիսամյակի ներմուծումների ընդհանուր արժեքի 77.7%-ը: Մայիս ամսին գրանցված

Կարտոֆիլի ներմուծումները ապահովում էին տարվա առաջին կիսամյակի ներմուծումների ընդհանուր արժեքի 18%-ը՝ կազմելով 227.5 հազար ԱՄՆ դոլար (379.6 տոննա):

#### **1.5.4. Թարմ կամ սառեցված բանջարեղենի արտահանում**

2016թ-ին ՀՀ-ում գրանցվել էին բանջարեղենի արտահանման թե՛ ընդհանուր արժեքի և թե՛ ընդհանուր ծավալի ամենաբարձր ցուցանիշները 2013-2016թթ. Ժամանակաշրջանի համար: Նշված ժամանակաշրջանում բանջարեղենի արտահանման ընդհանուր արժեքը աճել էր **69.6%**, **ԲՄՏԱՏ-ով**, իսկ ծավալը՝ **125.2%-ով**: 2016թ-ին նախորդ տարվա համամեմատ արտահանման արժեքը և ծավալը նվազել էին համապատասխանաբար **137.9%-ով** և **139.9%-ով**:



Նախորդ տարվա համեմատ 2016թ. արտահանումների աճը հիմնականուն պայմանավորված էր **հետևյալ երկու դասերի արտահանման աճով**:


- Լոլիկի արտահանման արժեքը և ծավալը նախորդ տարվա համամեմատ աճել էին համապատասխանաբար **1,381.8%-ով** (մոտ 15 անգամ) և **2,996.5% -ով** (մոտ 31 անգամ),
- Սնկի, գետնասնկի, դղմի, սմբուկի, սպանախի, ձիթապտղի և տաքրեղի արտահանման արժեքը և ծավալը նախորդ տարվա համամեմատ աճել էին համապատասխանաբար **194.1%-ով** և **231.9%-ով**:

Բացառությամբ վերը նշված երկու դասերի, գլուխ սոխի, սխս-շալոտի, սխտորի, սոխսպասի և այլ կոճղեզավոր բանջարեղենի դասի հետ կապված գրանցել էր արտահանման հարաբերական աճ նախորդ տարվա համեմատ, այնուամենայնիվ, բացարձակ ցուցանիշների տեսանկյունից թե՛ արտահանման ծավալի և թե՛ արտահանման արժեքի աճն էական չէր: Մյուս բոլոր դասերի հետ կապված արձանագրվել էր արտահանման նվազում 2016թ-ին: Ստորև ներկայացված են բանջարեղենի այն հիմնական դասերը, որոնց համար գրանցվել էր արտահանման նվազում նախորդ տարվա համեմատ:

- Գազարի, շաղգամի, սեղանի ճակնդեղի, քոշմորուքի, արնատային նեխուրի, ամսական բողկի և այլ նույնանման ուտելի արմատապտուղների արտահանման արժեքը և ծավալը նախորդ տարվա համամեմատ նվազել էին համապատասխանաբար **9.2%-ով** և **29.5%-ով**:
- Վարունգի և մանրավարունգի արտահանման արժեքը և ծավալը նախորդ տարվա համամեմատ նվազել էին համապատասխանաբար **62.0%-ով** և **53.3%-ով**:

- ✓ Գլուխ կաղամբի, ծաղկակաղամբի, շաղգամակաղամբի, տերևակաղամբի և Brassica ցեղի այլ նույնանման ուտելի բանջարեղենի արտահանման արժեքը և ծավալը նախորդ տարվա համամեմատ նվազել էին համապատասխանաբար 96.0%-ով և 95.6%-ով:

#### **Բանջարեղենի արտահանման արժեքի բացվածք, 2016թ.**



#### **Արդյունք՝ Trade Map**

2016թ-ին արտահանման արժեքի տեսամկյունից առանձնացվում էին բանջարեղենի հետևյալ երեք հիմնական դասերը.

- ✓ Լոլիկ,
- ✓ Սունկ, գետնասունկ, դդում, սմբուկ, սպանախ, ձիթապտուղ, տաքդեղ,
- ✓ Գազար, շաղգամ, սեղամի ճակնդեղ, քոշմորուք, արմատային նեխուր, ամսական բողկ և այլ նույնանման ուտելի բանջարեղեններ
- Գլուխ կաղամբ, ծաղկակաղամբ, շաղգամակաղամբ, տերևակաղամբ և Brassica ցեղի այլ նույնանման ուտելի բանջարեղեններ
- Գլուխ սոխ, սոխ-շալոտ, սխսոր, սոխ-պրաս և այլ կոճեզօքավոր բանջարեղեններ
- Սալաթ կաթնուկ (Lactuca sativa) և եղեր (Cichorium spp.)
- Leguminous vegetables, shelled or unshelled


Այս դասերին բաժին էր ընկել արտահանման արժեքի համապատասխանաբար 81.6%-ը, 6.8%-ը և 6.3%-ը:

- 2016թ-ին լոլիկի արտահանման արժեքը և արտահանման ծավալը կազմել էին համապատասխանաբար 22,671 հազար ԱՄՆ դոլար և 36,043 տոննա:
- 2016թ-ին սմկի, գետնասնկի, դդմի, սմբուկի, սպանախի, ձիթապտուղի և տաքդեղի դասում սմբուկի արտահանման արժեն աճել էր մոտ 4 անգամ՝ ի համեմատություն 2015թ. և հասել էր 137 հազար ԱՄՆ դոլարի (382 տոննա)՝ կազմելով նշված դասի արտահանման արժեքի 7.2%-ը և բանջարեղենի արտահանման ընդհանուր արժեքի 0.5%-ը:
- 2016թ-ին գազարի և դդմի արտահանում չի գրանցվել:
- 2016թ-ին վարունգի և մանրավարունգի արտահանման արժեքը նախորդ տարվա համեմատ նվազել էր 62%-ով, կազմելով 1,213 հազար ԱՄՆ դոլար (1,725 տոննա), ինչը կարող էր պայմանավորված լինել վարունգի տեղական արտադրության ծավալների 7,266 տոննա (7.9%) նվազումով:

Ոուսաստան արտահանումների աճի հիմնական պատճառները են ԵԱՏՄ սահմաններում գործող բարենպաստ պայմաններով առևտրային պայմանագրերը և մաքսային ռեժիմը: Բացի այդ լույսի արտահանման կտրուկ աճը պայմանավորված է Ոուսաստանի կողմից թուրքիայի նկատմանը սահմանված պատժամիջոցներով, որից հետո հայկական ընկերությունները գրավել են շուկայի առկա մասնաբաժինը և ավելացրել են արտադրանքի Ոուսաստան արտահանման ծավալները:

2016թ-ին բանջարեղենի արտահանման ընդհանուր արժեքում ամենամեծ մասնաբաժինն ուներ Ռուսաստանի Դաշնությունը՝ 97.8% (27,180 հազար ԱՄՆ դոլար), որին հաջորդում

## Բանջարեղենի հիմնական դասերի արտահանման բազվածքն ըստ դասերի




Unipinipp` Trade Map

արտահանումների արժեքը կազմել է զրո: Ծավալի տեսանկյունից երեք առաջատար երկրներն էին՝ Ռուսաստանի Դաշնությունը, Բելառուսը և Իրաքը, որոնց մասնաբաժիններն արտահանումների ընդհանուր ծավալում կազմում էին համապատասխանաբար 98.4% (42,920 տոննա), 0.7% (317 տոննա) և 0.5% (200 տոննա) 2016թ-ին:

Արտահանման արժեքի կառուցվածքը արտահանվող երեք հիմնական երկրների համար ներկայացված է Հավելված 8-ում:

էին Միացյալ Արաբական  
Եմիրությունները՝ 1.7% (463  
հազար ԱՄՆ դոլար), մինչդեռ  
Բելառուսի և Իրաքի  
մասնաբաժինները արտահանման  
ընդհանուր արժեքում կազմում  
էին յուրաքանչյուրը մոտ 0.2%  
(համապատասխանաբար 57  
հազար ԱՄՆ դոլար և 66 հազար  
ԱՄՆ դոլար): Ավելին, 2016թ-ին  
Բելառուսը և Իրաքը  
բանջարեղենի արտահանման նոր  
երկրներ էին, քանի որ նախորդ  
տարիններին այս երկրներ

**Ուստաստան արտահանումների արժեքի բացվածքն ըստ դասերի,  
2016թ.**




*Աղյուսք՝ Trade Map*

2016թ-ին Ուստաստան կատարվող արտահանումների արժեքը նախորդ տարվա համեմատ կտրուկ աճել էր 148.8%-ով, ինչը հիմնականում պայմանավորված էր բանջարեղենի հիմնական արտահանվող դասի՝ լոլիկի արտահանման արժեքի մոտ 15 անգամ աճով նախորդ տարվա համեմատ, որը կազմում էր Ուստաստան արտահանումների ընդհանուր արժեքի 83.2% (22,612 հազար ԱՄՆ դոլար և 35,842 տոննա):

Հավելված 9-ում ներկայացված է Հայաստանից Ուստաստան արտահանման համեմատաբար փոքր կատեգորիաների մանրամասն վերլուծությունը:

**Միավորված Արարական Էմիրություններ արտահանումների  
արժեքի բացվածքն ըստ դասերի, 2016թ.**




*Աղյուսք՝ Trade Map*

արտահանման աճով, որն ապահովում էր Միացյալ Արարական Էմիրություններ արտահանումների գրեթե ամբողջ արժեքը (99.1%)՝ կազմելով 459 հազար ԱՄՆ դոլար (143 տոննա) 2016թ-ին:

Հավելված 10-ում ներկայացված է Հայաստանից դեպի ԱՄԷ արտահանման համեմատաբար փոքր կատեգորիաների մանրամասն վերլուծությունը:

**2015թ-ին գրանցված  
82.8% նվազումից  
հետո Միացյալ  
Արարական  
Էմիրությունների  
արտահանումների  
արժեքը աճել էր մոտ 9  
անգամ 2016թ-ին: Այս  
հանգանաքը պայմանավորված էր  
արտահանվող  
հիմնական դասի՝  
սնկի, գետնասնկի,  
դրմի, սմբուկի,  
սպանախի,  
ձիթապտղի, տաքրեղի**


### Բանջարեղենի արտահանման դիմամիկան 2017թ-ին



Կազմում էր 2017թ. առաջին կիսամյակի արտահանումների ընդհանուր արժեքի 35.5%-ը: Արտահանման արժեքի ամենացածր ցուցանիշը գրանցվել էր մայիսին՝ 4,273 հազար ԱՄՆ դոլար (7,811 տոննա): Այն դոլար (496 տոննա):

2017թ. առաջին վեց ամիսների արտահանումների կառուցվածքը ներառում է բանջարեղենային մշակաբույսերի 7 դաս:

### Բանջարեղենի արտահանման արժեքն ըստ դասերի, 2017թ.




Արտահանումների արժեքի կտրվածքով ամենամեծ մասնաբաժինը բաժին էր ընկնում լոլիկին՝ 9,252 հազար ԱՄՆ դոլար (18,455 տոննա), որը կազմում էր արտահանումների ընդհանուր արժեքի 76.8%-ը: Սնկի, գետնասուրճի, դդմի, սմբուկի, սպանախի, ձիթապտուղի և տաքրեղի դասին բաժին էր ընկնում 20%-ը՝ կազմելով 2,151 հազար ԱՄՆ դոլար (2,184 տոննա): Երրորդ ամենախոշոր դասը գազարի, շաղցամի, սեղանի ճակնդեղի, քոշմորուքի, արնասային նեխուրի, ամսական բողկի և այլ նույնանման ուտելի արմատապտուղների դասն էր, որն ապահովում էր արտահանումների ընդհանուր արժեքի միայն 2.8%-ը՝ կազմելով 338 հազար ԱՄՆ դոլար (706 տոննա): Մնացած բոլոր դասերի մասնաբաժինը արտահանումների ընդհանուր արժեքում ցածր էր 2%-ից 2017թ. առաջին կիսամյակում:

**2017թ. առաջին վեց ամիսների ընթացքում բանջարեղենի արտահանման արժեքը կազմել էր 12,041 հազար ԱՄՆ դոլար, իսկ ծավալը՝ 22,034 տոննա:**

Արտահանման արժեքի ամենաբարձր ցուցանիշը գրանցվել էր մայիսին՝ 4,273 հազար ԱՄՆ դոլար (7,811 տոննա): Այն դոլար (496 տոննա):

### **1.5.5. Թարմ կամ սառեցված կարտոֆիլի արտահանում**

#### **Թարմ/սառեցված կարտոֆիլի արտահանման դիմամիկա**



[Աղյուսակ 22 ԱՎԾ](#)

Հայաստանից երկու հիմնական երկրներ կատարվող արտահանումների արժեքի նվազում էր, նաև նաև կորապես, Վրաստան իրականացվող արտահանումները նվազել էին 59.2%-ով՝ ի համեմատություն նախորդ տարվա, իսկ Ռուսաստանի Դաշնության արտահանման շուկան Հայաստանն ընդհանրապես կորցրել էր 2016թ-ին:

2016թ-ին Հայաստանը կարտոֆիլ արտահանում էր միայն Վրաստան և արտահանման արժեքը կազմում էր 140 հազար ԱՄՆ դոլար (1,381 տոննա):

2013-2016թթ. ընկած ժամանակաշրջանում կարտոֆիլի արտահանման արժեքն աճել էր 67.7% ԲՄՏԱՏ-ով, սակայն ծավալը նվազել էր 46.8% ԲՄՏԱՏ-ով: Ի համեմատություն նախորդ տարվա՝ 2016թ-ին կարտոֆիլի արտահանման արժեքը նվազել է գործեն 80%-ով՝ կազմելով 140 հազար ԱՄՆ դոլար (1,381 տոննա): Այս փոփոխության հիմնական պատճառը

կազմելով 140 հազար ԱՄՆ դոլար (1,381 տոննա): Այս փոփոխության հիմնական պատճառը

# Տեղական վերամշակման ամփոփ պատկերը

## Հիմնական ուսումնափրկած բանջարեղենը

- Վարունգ
- Լոլիկ
- Պղպեղ (քաղցր և կծու)
- Սմբուկ
- Կանաչ լոբի
- Սխտոր
- Գազար



Վերամշակված բանջարեղենի տեղական  
արտադրությունը  
8,720 տոննա 2016թ.-ին  
970 տոննա 2017թ.-ի առաջին եռամյակում



## Արտադրության դինամիկան

32% ծավալի աճ 2016թ.-ին  
14% FUSUS ծավալի աճ 2013-2016թթ.



## Արտադրության կառուցվածքը

Դահձոյացված բանջարեղեն – 67%  
Կետչուալ և այլ տոմատի սոուսներ – 33%



## Վաճառքի կառուցվածքը

HoReCa – 5%  
Մանրածախ – 13%  
Արտահանում – 82%



## Բանջարեղենի վերամշակման ընկերությունները Հայաստանում

51 պահածոների գործարան, որոնց  
մեծամասնությունը գտնվում է Արմավիրի մարզում -  
11, Երևանում – 14 և Կոտայքի մարզում - 9



## Արտադրական ներուժը

Արտադրական ներուժի մոտ 47.6% -ը  
օգտագործվում է ՀՀ վերամշակող  
ընկերությունների կողմից

## Տնտեսական հարաբերությունները



## Բանջարեղենի տեղափոխումը

Թարմ բանջարեղենի տեղափոխում է վերամշակող  
ընկերություններին՝  
Սատակարարներ - 46%  
Վերամշակողներ - 54%



## Սանակիցների համագործակցությունը

Պայմանագրային – 60%  
Բանավոր – 40%



## Սատակարարներին վճարումները

Առձեռն՝ ապրանքը ստանալու պահին

## Վերամշակման տեխնոլոգիաներ

- 1 Հումքի ընդունում
- 2 Նախնական տեսակավորում
- 3 Հումքի լվացում
- 4 Տեսակավորում,  
դասակարգում և մաքրում
- 5 Կտրատում և մանրացում
- 6 Շոգեխաշում և տապակում
- 7 Բաշխում և կշռում
- 8 Տարաների մեջ տեղափորում և  
փակում
- 9 Մանրէազերծում
- 10 Սառեցում
- 11 Պահեստավորում
- 12 Պիտակավորում
- 13 Տեղավորում և  
տեղափոխում

## **2. Հայաստանի Հանրապետությունում մշակվող թարմ բանջարեղենի վերամշակման վերլուծություն**


### **2.1 Հայաստանի Հանրապետության վերամշակված բանջարեղենի արտադրության դինամիկայի և հիմնական վերամշակվող ընկերությունների նկարագիրը**

2013-2016թթ. ընկած ժամանակաշրջանում վերամշակված բանջարեղենի տեղական արտադրության ծավալն աճել էր 14% ԲԱՏԱՏ-ով:

2016թ-ին վերամշակված բանջարեղենի արտադրությունը նախորդ տարվա համեմատ աճել էր 32%-ով՝ կազմելով 8,720 տոննա, որը 2013թ-ից հետո գրանցված ամենաբարձր ցուցանիշն էր: Վերամշակված բանջարեղենի ընդհանուր արտադրության 66.7%-ը կազմում էր պահածոյացված բանջարեղենը և 33.3%՝ կետչուայը և տոմատային այլ սուսները:

2017թ. առաջին եռամյակում տեղական արտադրությունն աճել էր գրեթե երեք անգամ, կազմելով 970 տոննա՝ ի համեմատություն նախորդ տարվա նույն ժամանակահատվածի: Մասնավորապես, 2017թ. առաջին եռամյակում գրանցված աճը հիմնականում պայմանավորված էր պահածոյացված բանջարեղենի արտադրության գրեթե 5 անգամ (384%) աճով, կազմելով 885 տոննա՝ ի համեմատություն 2016թ. առաջին եռամյակի: Սակայն աճը մասամբ փոխհատուցվել էր կետչուայի և տոմատային այլ սոուսների արտադրության ծավալի 60.7% նվազումով՝ մինչև 85 տոննա, ի համեմատություն նախորդ տարվա նույն ժամանակահատվածի:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է թարմ և վերամշակված բանջարեղենային արտադրատեսակների հիմնական տեսակները, որոնք ընտրվել են իրականացված հարցման և Հայաստանի Հանրապետության վերամշակված բանջարեղենի շուկայի վերլուծության հիման վրա:



**Ուսումնասիրվող թարմ և վերամշակված բանջարեղենային արտադրատեսակներ**

| Տեսակը      | Թարմ բանջարեղեն       | Վերամշակված բանջարեղեն                                                                                               | Չորացրած/Սառեցրած                         |
|-------------|-----------------------|----------------------------------------------------------------------------------------------------------------------|-------------------------------------------|
| Հիմնական    | Վարունգ               | Սարինացված վարունգ                                                                                                   | Կիրառելի չէ                               |
| Հիմնական    | Լոլիկ                 | Տոմատային կետչուակ և տոմատային այլ սոուսներ<br>Մարինացված լոլիկ<br>Բանջարեղենի խառնուրդներ                           | Չորացրած լոլիկ                            |
| Հիմնական    | Տաքդեղ (քաղցր և կծու) | Լցոնած տաքդեղ<br>Բանջարեղենի խառնուրդներ<br>Մարինացված տաքդեղ (քաղցր, կծու, կանաչ տաքդեղ)<br>Բանջարեղենի խառնուրդներ | Սառեցրած տաքդեղ<br>Սառեցրած կարմիր տաքդեղ |
| Հիմնական    | Սմբուկ                | «Խորոված» սմբուկ<br>Բանջարեղենի խառնուրդներ                                                                          | Չորացրած սմբուկ                           |
| Հիմնական    | Կանաչ լոբի            | Մարինացված կանաչ լոբի                                                                                                | Սառեցրած կանաչ լոբի                       |
| Հիմնական    | Կանաչ լոբի            | Մարինացված կանաչ լոբի                                                                                                | Սառեցրած կանաչ լոբի                       |
| Երկրորդական | Սխտոր                 | Մարինացված լոլիկ, վարունգ և այլն<br>Բանջարեղենի խառնուրդներ                                                          | Կիրառելի չէ                               |
| Երկրորդական | Գազար                 | Լցոնած տաքդեղ<br>Բանջարեղենի խառնուրդներ                                                                             | Կիրառելի չէ                               |

*Աղյուս՝ Քեյ-Փի-Էմ-Զի-ի հարցումը և վերլուծությունը*

Պատմականորեն մարզի կառուցվածքը մշակաբույսերի մշակման և բերքատվության տեսանկյունից եղել է կարևոր որոշիչ գործոն վերամշակող ընկերությունների տեղակայման համար:

Մեր հետազոտությունների համաձայն՝ ներկայում Հայաստանում գործում են 51 բանջարեղեն վերամշակող ընկերություններ: Զարտեզում ներկայացված է վերամշակող ընկերությունների աշխարհագրական տեղաբաշխվածությունն ըստ մարզերի:

Արդյունքները ցույց են տալիս, որ ընտրված 51 պահածոն արտադրող ընկերություններից վերամշակողների մեծ մասը գտնվում է Արմավիրում (11), Երևանում (14) և Կոտայքում (9):

Հարկ ենք համարում նշել, որ պահածոն արտադրող ընկերությունների մեծամասնությունը վերամշակում է թե՝ միրգ և թե՝ բանջարեղեն: Սասակիցներից ոչ մեկը չի արտադրում օրգանական սերտիֆիկացված արտադրանք:

**Քարտեզ 2. ՀՀ վերամշակող ընկերությունների ըստ մարզերի**




*Աղյուս՝ Քեյ-Փի-Էմ-Զի-ի վերլուծությունը*

**Հարցման մասնակիցների ընդհանուր մասնաբաժինը ՀՀ շուկայում կազմում է ավելի քան 50%<sup>12</sup>:** Պահածո արտադրող ընկերությունների ամբողջական ցանկը ներկայացված է Հավելված 11-ում:

Մասնակիցների կարծիքով՝ արտադրական ներուժի միջինում մոտ 47.6%-ն օգտագործվում է Հայաստանի Հանրապետության վերամշակող ընկերությունների կողմից: Մասնակիցներից մեկը նշեց, որ արտադրական ներուժն ամբողջությամբ չօգտագործելու հիմնական պատճառն էլեկտրաէներգիայի և ջրային ռեսուրսների մատակարարման խափանումներն են, որոնք հանգեցնում են ֆինանսական և ժամանակային ռեսուրսների կորստի՝ հատկապես ակտիվ սեզոնների ընթացքում: Հարցման մասնակիցների նշեցին արտադրության ընդլայնման հետևյալ հիմնական խոչընդոտները.

**Վաճառքի կառուցվածքը, 2017թ.**

- Եներգետիկ ռեսուրսների բարձր գները,
- Շրջանառու կապիտալի բացակայությունը և ներդրումների կարիքը,
- Ոչ բավարար ներկայացվածությունը և ապրանքանիշերի ճանաչվածությունն արտաքին շուկաներում,
- Արտաքին շուկաներում հուսալի գործընկեր գտնելու դժվարությունները,
- Արտադրույթի փոխարժեքների տատանումները:



*Աղյուրը՝ Թեյ-Փի-Էմ-Զի-ի վերուժությունը*

Բոլոր մասնակիցները վերամշակված բանջարեղենը մատակարարում են վաճառքի կետեր իրենց սեփական տրանսպորտային միջոցներով: Գծապատկերում ցույց է տրված վաճառքի միջին ծավալի կառուցվածքն ըստ հարցման մասնակիցների կողմից տրամադրված տեղեկատվությամբ:

Հարցմանը մասնակից բոլոր վերամշակող ընկերությունները նշել են, որ համագործակցում են թարմ բանջարեղենի միայն տեղական մատակարարների հետ և չեն իրականացնում թարմ բանջարեղենի ներմուծում, սակայն վերամշակված ապրանքների փաթեթավորումը հիմնականում ներմուծվում է՝ հաշվի առնելով ներմուծված փաթեթավիրման բարձր որակը:

Վերամշակված ապրանքների արժեշությաի հիմնական մասնակիցներն են՝

- Տեղացի ֆերմերները, ովքեր մատակարարում են թարմ բանջարեղեն
- Փարեթավորում մատակարարող արտասահմանյան ընկերությունները
- Թարմ բանջարեղեն վերամշակող ընկերությունները
- Վաճառքի կետերը, ինչպիսիք են խանութները/սուպերմարկետները, HoReCa ոլորտը և արտասահմանյան դիստրիբյուտորները, տեղական ֆիրմաների ներկայացուցիչները արտասահմանյան շուկաներում, արտասահմանյան սուպերմարկետները (որոշ դեպքերում)

## 2.2 Հարաբերությունների մատակարարների հետ

Հարցման բոլոր մասնակիցներն ունեն գյուղացիական տնտեսությունների որոշված խնդեր, որոնցից գնում են թարմ բանջարեղեն, և եթե անհրաժեշտ է համագործակցել նոր մատակարարի հետ, վերամշակողները պահանջում են հատուկ ծագման վկայական, որը

<sup>12</sup> Հստամասնակիցների կողմից իրենց մասնաքայլությամբ արտադրության շուկայի վերաբերյալ այլ սրամադրված տեղեկատվությունները

տրամադրվում է գյուղական տարածքների տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, համոզվելու համար, որ արտադրանքը գողացված չէ: Հարցման միայն մեկ մասնակից է հանգործակցում գործակալների հետ և միշտ պահանջում է մատակարարվող արտադրանքի ծագման վկայական:

Թարմ բանջարեղենի վերամշակման ակտիվ սեզոնը տևում է հունիսից հոկտեմբեր: Բոլոր վերամշակող ընկերությունները նշել են, որ թարմ բանջարեղենի վերամշակումն իրականացվում է այն անմիջապես ստանալուց հետո, և սառնարանում կարող է պահպել առավելագույնը մեկ օր: Հարցման մասնակիցների համաձայն՝ միջինում դեպքերի 46%-ում է թարմ բանջարեղենն առաքվում վերամշակող ընկերություններին մատակարարների կողմից, մնացած 54%-ում փոխադրումն իրականացվում է վերամշակող ընկերությունների կողմից: Մասնակիցների 60%-ը համագործակցում է մատակարարների հետ պայմանագրերի հիմն վրա, մինչդեռ մնացած 40%-ը հիմնականում համագործակցում են բանավոր համաձայնության հիմն վրա: Ինչպես նշվեց, պայմանագրերի հիմն վրա համագործակցելու հիմնական առավելությունը թարմ բանջարեղենի ժամանակին առաջընթաց է, որը մատակարարվում է նախապես սահմանված գներով, քանակով և որակով: Եվ հակառակը, հարցման այն մասնակիցները, որոնք համագործակցում են բանավոր համաձայնության հիմն վրա, նշեցին, որ պայմանագրերի ստորագրումը լրացնեցիչ բյուրոկրատիա է, մատակարարների կողմից պայմանագիրը խախտելու դեպքում, վերամշակող ընկերությունները սովորաբար չեն օգտվում պայմանագրի իրավական ուժից՝ հաշվի առնելով յուրաքանչյուր առանձին մատակարարի փոքր մասնաբաժինը:

Համաձայն ֆերմերների միջև իրականացրած հարցմանը, պայմանագրի կամ բանավոր համաձայնությամբ աշխատելու հիմնական առավելությունները և թերությունները հետևյալն են՝

## Պայմանագիր

### Առավելությունները

- Ապրանքի վաճառքը նախապես որոշված է և բացակայում են իրացման հետ կապված խնդիրները
- Գինը նախապես սահմանված է

### Թերությունները

- Սովորաբար ապրանքը ընդունվում է պարտքով և ապրանքի դիմաց վճարն ուշանում է

### Բանավոր համաձայնություն

### Առավելությունները

- Գինը որոշվում է ապրանքի մատակարարման պահին
- Ապրանքի դիմաց վճարն իրականացվում է կանխիկով
- Ժամանակի խնայողություն
- Հաշվեյալ թղթաբանության բացակայություն
- Գնորդի ազատ ընտրություն

### Թերությունները


- Գինը նախապես որոշված չէ

- Սովորաբար գինը որոշվում է ավելի ցածր քան շուկայականն է, քանի որ գինը թելադրում է գնորդը
- Մատակարարված ապրանքը կարող է հետ վերադարձվել ցանկացած պահի
- Ապրանքի վաճառքը նախապես որոշված չէ և կարող են իրացման խնդիրներ առաջանալ

Հարցմանը մասնակցած բոլոր վերամշակող կազմակերպությունները նշել են, որ մատակարարներին վճարումները կատարվում են կանխիկով՝ թարմ բանջարեղենը ստանալուց հետո կամ ստանալու պահին և գործարքը չի իրականացվում կանխավճարային հիմունքներով:

Հիմք ընդունելով ֆերմերների միջև անցկացված հարցումը՝ ներքեւում գժապատկերը ներկայացնում է ֆերմերներին վերամշակող ընկերությունների վճարման տարբերակները

#### **ԴՅ Վերամշակող ընկերությունների վճարման տարբերակները**



*Աղյուսք՝ ԱՅ ԷՄ ԱՌ - ի հարցում և Քեյ-Փի-Էմ-Զի-ի վերլուծություն*

### **2.3 Հայաստանի Հանրապետությունում կիրառվող թարմ բանջարեղենի վերամշակման տեխնոլոգիաների նկարագիր**

Ներկայումս Հայաստանում արտադրվում է վերամշակված բանջարեղենային պահածոների լայն տեսականի: Չնայած բաղադրատոմսերում առկա որոշակի տարբերությունների, մշակաբույսերի վերամշակման համար կիրառվում են նմանատիպ ստանդարտներ և ընթացակարգեր: Պահածոյացման համար օգտագործվող բոլոր բաղադրատարերն ու հումքը և արտադրության մեջ օգտագործվող տեխնիկական սարքավորումները սահմանվում են պետական ԳՕՍՏ ստանդարտներով և վերամշակման տեխնոլոգիաներին համապատասխան և կարգավորվում են Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության Ստանդարտների ազգային ինստիտուտի կողմից:

Ստորև բերվող գժապատկերում ներկայացված է բանջարեղենային պահածոների պատրաստման հիմնական տեխնոլոգիական քայլերը: Յարկ է նշել, որ վերամշակման գործընթացի քայլերի հաջորդականությունը կարող է տարբեր լինել կախված վերամշակվող մշակաբույսերից:

## Թարմ բանջարեղենի վերամշակում



Աղյուրը՝ Քեյ-Փի-Էմ-Ջի հարցագրույցներ և վերլուծություններ  
Պետական ԳՕՍ ստանդարտներ

Ըստ իրենց արտադրական տեխնոլոգիային նմանության՝ բանջարեղենային պահածոները բաժանվում են երեք խմբի.

- ✓ Տոմատի մածուկ
- ✓ Բանջարեղենի մարինադներ
- ✓ Բանջարեղենային խառնուրդներ

Թարմ լոլիկն օգտագործվում է տոմատի մածուկի դասի ապրանքատեսակների, այդ թվում՝ տոնատի խյուսի, մածուկի, սոուսի, սեփական հյութում կեղևահանած լոլիկի պահածոների պատրաստման համար: Բանջարեղենի մարինադները ներառում են վարունգի, լոլիկի և այլ բանջարեղենի պահածոներ՝ պատրաստված քացախով կամ քացախաթթվով: Բանջարեղենի խառնուրդները ներառում այնպիսի բանջարեղենային պահածոներ, որոնց համար անհրաժեշտ է եփած կամ տապակած բանջարեղեն՝ պատրաստված ձեթով:

### Տոմատի մածուկ

Տոմատի մածուկի արտադրության տեխնոլոգիան ընթանում է թարմ բանջարեղենի վերամշակման գծապատկերում ներկայացված գործընթացի ընդհանուր քայլերով: Տոմատի մածուկը պատրաստվում է առողջ լոլիկների քաղցր տեսակներից՝ չոր նյութերի առվագն 5% պարունակությամբ:

Ստորև որպես օրինակ ներկայացված է սեփական հյութում կեղևահանած լոլիկի պահածոների արտադրության գործընթացը:

1



Գործարանում **ստացված** թարմ լոլիկը պետք է համապատասխանի Մաքսային միության «Աննդի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգի պահանջներին (TR TS 021/2011).

2



Նախնական տեսակավորումն իրականացվում է հատուկ տեխնոլոգիական սեղաններին վրա, որտեղ լոլիկը տեսակավորվում է ըստ որակի՝ առանձնացնելով վնասվածները: Այնուհետև, ընտրված լոլիկները տեսակավորվում են ըստ չափի և բաժանվում են երկու խմբի:

3



**Լվացումն** իրականացվում է օդ մղող սարքերով կամ հատուկ լվացարաններում ջրի բարձր ճնշման տակ:

4



**Շոգեխաչումն** իրականացվում է տաք գոլորշիով, ժապավենային շոգեխաչի սարքով՝ 10-20 վայրկյան, այնուհետև հումքը սառեցվում է սառը ջրով: Շոգեխաչի բացակայության դեպքում, կեղևահաման համար լոլիկի լցվում է ջրի մեջ ներկառուցված երկու բաժնով կաթսայում, որից հետո սառեցվում սառը ջրով սառեցման միջոցով: Գործընթացը կարող է իրականացվել նաև ձեռքով:

Թարմ լոլիկի մի մասը կորատվում և մանրացվում է հյութը պատրաստելու համար: Զանգվածին ավելացվում է աղ, որը պատրաստ է դառնում տարաներ տեղավորելու համար:

5



Կեղևահամված լոլիկը կշռվում է և տեղավորվում է ապակյա տարաներում՝ տարայի ընդհանուր ծավալի 55-60% հարաբերակցությամբ:

6



Լոլիկը տարաներում տեղավորելուց հետո ավելացվում է հյութը և տարաները մակափակվում են:

7



**Մանրէազերծումն** իրականացվում է ավտոկլավներում՝ հետևելով մանրէազերծման հետևյալ պայմաններին. 0.5 լիտր տարողությամբ տարան մանրէազերծվում է 25 րոպե, 1 լիտր տարողությամբ տարայի համար պահանջվում է 40 րոպե, տաքացման փուլում ջերմաստիճանը 70°C-ից բարձրանում է մինչև 100°C, իսկ ավտոկլավի ճնշումը տատանվում է 20-98 կՊա ջերմաստիճանի սահմաններում:

Մանրէազերծման գործընթացը կարող է իրականացվել նաև այլ ռեժիմով, որի դեպքում պահանջվում է համեմատաբար ցածր ճնշում ավտոկլավում: 80°C-ից 100°C ջերմաստիճանի սահմաններում, ավտոկլավի ճնշումը կազմում է 20-59 կՊա տաքացման փուլում:

8



Մանրէազերծմանը հաջորդում է հովացման փուլը, որի ժամանակ չերմաստիճանը  $90^{\circ}\text{C}$ -ից իջեցվում է  $40^{\circ}\text{C}$ , իսկ ճնշումը 98 կՊա-ից՝ 20 կՊա:

Մանրէազերծման մյուս ռեժիմի դեպքում հովացման փուլում չերմաստիճանը  $90^{\circ}\text{C}$ -ից իջեցվում է  $40^{\circ}\text{C}$ , որի դեպքում ավտոկլավի ճնշումը կազմում է 49-10 կՊա:

9



**Պիտակավորումը** կատարվում է նախքան վերջնական արտադրանքի փաթեթավորումը: Պիտակը պետք է համապատասխանի ստանդարտի պահանջներին և ներառի հետևյալ տվյալները. արտադրող ընկերության անվանումը և հասցեն, արտադրողի ապրանքային նշանը (եթե կիրառելի է), արտադրանքի անվանումը, բաղադրատարրերը, «մանրէազերծված է» նշումը, արտադրության ամսաթիվը, օգտագործման ժամկետը, պահպանման պայմանները, շտրիխ կոդը (եթե կիրառելի է), զուտ քաշը գրամերով, սննդային և էներգետիկ արժեքը և ստանդարտով սահմանված այլ անհրաժեշտ տեղեկատվությունը:

10



Տարաները դասավորվում են ծալքավոր ստվարաթղթե արկղերում և պահպան են պահեստում ևս 15 օր, որպեսզի համային հատկանիշները հասունանան նախքան առաքումը:

## **Բանջարեղենի մարինադներ**

Մարինադը պատրաստում են թարմ կամ նախօրոք աղ դրած բանջարեղենից 0.5-0.7%-ոց քացախաթթվով, որը ճնշում է միկրոօրգանիզմների զարգացումը: Բանջարեղենը մարինացվում է ամբողջական կամ կտրատված: Բացի հիմնական բանջարեղենից, մարինադների բաղադրության մեջ սովորաբար օգտագործվում են սխտորը, զազարը և համեմունքները՝ սև պղպեղ, դափնետերն, կանաչեղեն և այլն: Ստանդարտի համաձայն՝ 1 կգ մարինադի բաղադրության մեջ մարինադացվող բանջարեղենը կազմում է 55-80%, համեմունքները՝ 3-7%: Մարինադի ընդհանուր ծավալում բանջարեղենի մասնաբաժինը կախված է տարբեր արտադրողների կողմից օգտագործվող բաղադրատոմսերից:

Հայաստանում արտադրվող մարինացված բանջարեղենի հիմնական տեսակներն են լոլիկի, վարունգի, ծաղկակաղամբի մարինադները, բանջարեղենային խառնուրդները (ասորտի), տաքդեղի (կարմիր և կանաչ, կծու և քաղցր) մարինադը և լցոնած տաքդեղը:

Ստորև ներկայացված է բանջարեղենի մարինադի արտադրության գործընթացը:

1




Բանջարեղենի մարինադի արտադրության գործընթացը սկսվում է թարմ բանջարեղենի ընդունումից:

2



Այնուհետև, բանջարեղենն անցնում է տեսողական ստուգում և նախնական տեսակավորում: Ընդունվում է միայն համապատասխան չափի, տեսքի և որակի բանջարեղենը: Սովորաբար բանջարեղենը պետք է լինի միջին կամ փոքր չափի, լավ տեսք ունենա, չպետք է լինի վնասված կամ հասած:

3



Վնասված և ուտելու համար ոչ պիտանի հատվածները հեռացնելուց հետո բանջարեղենը պահպում է սառը ջրում 1-2 ժամ, որից հետո լվացվում է հատուկ օդափոխվող բարձրացնող սարքերում հոսող ջրի տակ: Վերջնական լվացումը կատարվում է խոզանակներով և ջրի շիթեր արձակող սարքերով: Լվացման ընթացքում ջրի ճնշումը չպետք է պակաս լինի 250 կՊա (2.5 բար) և պետք է փոխվի օրը 4 անգամ:

4



Լվացված բանջարեղենը կշռվում է ապակյա տարաների մեջ լցվելու համար:

5



Մարինադային հյութը պատրաստելու համար աղ և շաքար պարունակող ջրային լուծույթը եռացվում է 5-10 րոպե, այնուհետև զտվում է, ավելացվում են համեմունքներ, 80% խտությամբ քացախաթթու և ջուր: Եթե համեմունքները լցվում են անմիջապես տարաների մեջ, ապա ջրային լուծույթին ավելացվում են միայն ջուր և քացախաթթու: Մարինադների որոշ տեսակների համար սոուսը պատրաստվում է տապակած բանջարեղենով, հավելումներով և համեմունքներով՝ արևածաղկի ձեթով:

6



Բանջարեղենը լցվում է 0.5, 0.65 և 0.1 լիտրամոց ապակյա տարաների մեջ, որոնք արդեն իսկ ախտահանված են և լցված են համեմունքներով: Բոլոր անհրաժեշտ բաղադրատարրերը տարաներում դասավորելուց հետո լցվում է մարինադային հյութը, և տարաները հերմետիկ փակվում են մետաղյա կափարիչներով:

7



Մանրէազերծումն իրականացվում է ավտոկլավերում: Մանրէազերծման տևողությունը կախված է բանջարեղենի նրբությունից և միջինում տևում է 4-7 րոպե: Տաքացման փուլում մանրէազերծումը կարող է իրականացվել երկու ռեժիմով: Առաջին ռեժիմի դեպքում ջրի ջերմաստիճանը և ճնշումը տատանվում են 70-110°C և 20-98 կՊա (0.2-1 բար), իսկ երկրորդ ռեժիմի դեպքում կազմում են՝ 80-110°C և 20-59 կՊա (0.2-0.6 բար):

8



Հովացման փուլում ավտոկլավում ջրի ջերմաստիճանը և ճնշումը կազմում են 90-40°C և 98-20 կՊա (1-0.2 բար) առաջին ռեժիմի դեպքում և 90-40°C և 49-10 կՊա (0.5-0.1 բար)՝ երկրորդ ռեժիմի դեպքում:

9



Մանրէազերծումից հետո տարաները տեղափոխվում են պահեստ, որտեղ մաքրվում են, չորացվում և դարսակներ կազմվում: Մարինացված բանջարեղենը պետք է պահվի պահեստում առնվազն 15 օր, որպեսզի համային հատկանիշները հասունանան:

10



**Պիտակավորումը** կատարվում է նախքան վերջնական արտադրանքի փաթեթավորումը: Պիտակը պետք է համապատասխանի ստանդարտի պահանջներին և ներառի հետևյալ տվյալները. արտադրող ընկերության անվանումը և հասցեն, արտադրողի ապրանքային նշանը (եթե կիրառելի է), արտադրանքի անվանումը, բաղադրատարրերը, «մանրէագերծված է» նշումը, արտադրության ամսաթիվը, օգտագործման ժամկետը, պահպանման պայմանները, շտրիխ կոդը (եթե կիրառելի է), գուտ քաշը գրամերով, սննդային և էներգետիկ արժեքը և ստանդարտով սահմանված այլ անհրաժեշտ տեղեկատվությունը:

11



Արտադրության գործընթացի վերջին փուլը պահեստավորումն ու առաքումն է: Տարաները դասավորվում են ստվարաթղթե արկղերում կամ փաթեթավորվում են պոլիէթիլենային բաղանթով՝ ջերմակծկումային եղանակով: Այնուհետև, արկղերը տեխսափոխվում են պահեստ, որտեղ պահվում են դարակների վրա՝ 0-20 °C ջերմաստիճանի և ոչ ավել քան 75% օդի հարաբերական խոնավության պայմաններում: Նախքան վերջնական արտադրանքը պահեստից առաքելը, այն անցնում է լաբորատոր ստուգում ընտրանքային կարգով՝ արտադրանքի որակը ստուգելու համար: Բանջարեղենի մարինադների միջին օգտագործման ժամկետը կազմում է 24 ամիս:

## Բանջարեղենի խառնուրդներ

Հայաստանում ներկայումս արտադրվող պահածոյացված բանջարեղենի խառնուրդների հիմնական տեսակներն են՝ խորոված բանջարեղենը, խավիարը, եփած բանջարեղենը, լեզոն, աջափսանդալը, իմամ բայալդին: Բանջարեղենի խառնուրդների տարբեր տեսակների համար կիրառվում է նույն տեխնոլոգիամ՝ պահածոյացման հետ կապված որոշ առանձնահատկություններով տարբեր փուլերում:

Ստորև ներկայացված է բանջարեղենի խառնուրդների արտադրության գործընթացը:

1



Բանջարեղենի խառնուրդի արտադրության գործընթացը սկսվում է թարմ բանջարեղենի ընդունումից:

2



Հումքի ընդունմանը հաջորդում է բանջարեղենի նախնական տեսակավորումը: Չափի, հասունության ստանդարտ պահանջներին չհամապատասխանող կամ վնասված բանջարեղենը տեսակավորվում է:

**3**



**Լվացումն** իրականացվում է հատուկ լվացման սարքերում կամ լվացարաններում՝ հոսող ջրի տակ: Բանջարեղենի որոշ տեսակներ անհրաժեշտ է 5 րոպե պահել 12%-ոց աղային լուծություն՝ դառնությունը մեղմացնելու համար: Լվացումից հետո բանջարեղենը անցնում է արտադրության հաջորդ փուլ: Կանաչեղենը լվացվում է օդ մղող սարքերով կամ լվացարաններում՝ հոսող ջրի տակ:

**4**



**Լվացված բանաջարեղենն** անցնում է **կտրատման** և **շոգեխաշման** փուլը, որի ընթացքում ձեռքով՝ հատուկ դանակներով հեռացվում են սերմերը, պտղակոթը և բաժակաթերթիկները (տաքեղի սերմերը հեռացնելու համար կարող է պահանջվել հոսող ջուր), բանջարեղենի որոշ տեսակներ կեղևահանվում են, որից հետո բանջարեղենը կտրատվում է կտորների կամ շերտերի:

**5**



**Պահածոների** յուրաքանչյուր տեսակի պատրաստման տեխնոլոգիան ունի իր առանձնահատկությունները: Խառնուրդների որոշ տեսակի պահածոների համար բանջարեղենը տապակվում է արևածաղկի ձեթում՝ ամբողջական կամ կտրատված կտորներով/շերտերով: Մյուս տեսակների համար բանջարեղենն անբողջական կամ աղացած վիճակով եփվում է ջրում կամ պատրաստվում է վակուումային սարքում՝ հետևելով բաղադրատոմսին և ջերմային պայմաններին: Բանջարեղենի որոշ տեսակներ պատրաստվում են առանձին՝ նախքան բանջարեղենի խառնուրդ ավելացվելը: Խավիարի և խորովածի համար բանջարեղենը խորովվում է գազով աշխատող հատուկ վառարաններում, որից հետո կեղևահանվում է՝ սառ ջրի տակ:

**6**



Եթե խառնուրդը պատրաստ է, այն լցվում է լվացած և մաքուր ապակյա տարաների մեջ: Բանջարեղենի պահածոների որոշ տեսակների դեպքում բանջարեղենը նախ դասավորվում է տարաներում, իսկ հետո ավելացվում է պատրաստված խառնուրդը: Տարայի տարողությունը կարող կազմել 0.33-ից 1 լիտր:

7



Մանրէազերծումն իրականացվում է ավտոկլավերում՝ հետևելով հետևյալ պայմաններին. տաքացման փուլում ջերմաստիճանը  $70^{\circ}\text{C}$ -ից բարձրանում է  $100^{\circ}\text{C}$ , իսկ որոշ պահածոների դեպքում մինչև  $120^{\circ}\text{C}$ , մինչդեռ ճնշումն ավտոկլավում տատանվում է  $20\text{-}98$  կՊա՝ ջերմաստիճանի սահմաններում:

Մանրէազերծման գործընթացը կարող է իրականացվել նաև այլ ռեժիմներում, որի դեպքում պահանջվում է համեմատաբար ցածր ճնշում ավտոկլավում:  $80^{\circ}\text{C}$ -ից  $100^{\circ}\text{C}$  ջերմաստիճանի սահմաններում, ավտոկլավի ճնշումը կազմում է  $20\text{-}59$  կՊա տաքացման փուլում:

Խավիարի մանրէազերծման համար պահանջվում է մինչև  $120\text{-}130$   $^{\circ}\text{C}$  ջերմաստիճան, իսկ ավտոկլավի ճնշումը պետք է կազմի  $245\text{-}265$  կՊա:

8



Մանրէազերծմանը հաջորդում է **հովացման** փուլը, որի ժամանակ ջերմաստիճանը  $90^{\circ}\text{C}$  -ից իջեցվում է  $40^{\circ}\text{C}$ , իսկ ճնշումը  $98$  կՊա-ից  $20$  կՊա:

Մանրազերծման մյուս ռեժիմի դեպքում հովացման փուլում ջերմաստիճանը  $90^{\circ}\text{C}$ -ից իջեցվում է  $40^{\circ}\text{C}$ , որի դեպքում ավտոկլավի ճնշումը կազմում է  $49\text{-}10$  կՊա:

9



**Պիտակավորումը** կատարվում է նախքան վերջնական արտադրանքի փաթեթավորումը: Պիտակը պետք է հանապատճենած ստանդարտի պահանջներին և ներառի հետևյալ տվյալները. արտադրող ընկերության անվանումը և հասցեն, արտադրողի ապրանքային նշանը (Եթե կիրառելի է), արտադրանքի անվանումը, բաղադրատարրերը, «մանրէազերծված է» նշումը, արտադրության ամսաթիվը, օգտագործման ժամկետը, պահպանան պայմանները, շտրիխ կոդը (Եթե կիրառելի է), զուտ քաշը գրամներով, սննդային և էներգետիկ արժեքը և ստանդարտով սահմանված այլ անհրաժեշտ տեղեկատվությունը:

10



Տարաները դասավորվում են ծալքավոր ստվարաթղթե արկղերում և պահվում են պահեստում նախքան առաքումը պատրաստ լինելը:


Վերամշակող ընկերությունները կարող են իրականացնել լաբորատոր ստուգումներ պատահականության հիմունքով՝ արտադրանքի բարձր որակն ապահովելու համար: Հարցման մասնակիցներից երկուսն ունեն որակի վերահսկողության սեփական լաբորատորիաներ, իսկ մյուսները համագործակցում են անկախ լաբորատորիաների հետ: Հարցման արդյունքների համաձայն, Հայաստանի Հանրապետությունում վերամշակող ընկերությունների արտադրության գործընթացը կիսաավտոմատացված է, և ծերքի

աշխատանքն օգտագործվում է ավելի մեծ ծավալով քան սարքավորումներինը: Բոլոր մասնակիցները նշեցին, որ մանրէազերծման և սառեցման փուլերն ավտոմատացված են, և միայն մեկ մասնակից ունի ամբողջությամբ ավտոմատացված արտադրական գործընթաց:

Հարցման մասնակիցները նշեցին, որ միշտ չէ, որ արտադրության գործընթացի ավտոմատացումը հանգեցնում արտադրվող ապրանքատեսակների որակի բարձրացմանը, մասնավորապես, բանջարեղենի խառնուրդների, հատուկ բաղադրատոմսեր և յուրահատուկ բաղադրիչներ ունեցող պահածոների դեպքում՝ ծեռքի աշխատանքն ավելի է գնահատվում սպառողների կողմից:

Ի հակադրություն, մասնակիցները վստահեցնում են, որ արտադրության ավտոմատացման արդյունքում կրարձրանա արտադրողականությունը և կնվազի միավորի վաճառքի ինքնարժեքը: Ստորև բերվող պատկերում ներկայացված է միջին ինքնարժեքի կառուցվածքը վերամշակված բանջարեղենի երեք սահմանված տեսակների համար:

### **Ինքնարժեքի կառուցվածք**



- Թարմ բանջարեղեն
- Ելեկտրաէներգիա, Գազ
- Զուր, տրամսպորտ, այլ ուղղակի ծախսեր
- Փարերավորում (տարա, պիտակ, կափարիչ և այլն)
- Աշխատուժ

[Աղյուրը՝ Քեյ-Փի-Էմ-Զի-ի հարցումը և վերլուծությունը](#)

# Տեղական շուկայի ամփոփ պատկերը



Ըսդհանուր վերամշակված  
բանջարեղենի ներմուծումը 2016թ.  
6,181 հազար ԱՄՆ դոլար  
6,897 տոննա



Ըսդհանուր ներմուծման  
դինամիկան 2015-2016թ.  
Արժեքի նվազում – 19.6%  
Ծավալի նվազում – 11.9%



Ամենամեծ դասի տոկոսային բաժինը  
Պահածոյացված բանջարեղեն  
47.7%



Առավել ներմուծվող ապրանքը  
Առանց քացախի կամ քացախաթթվի  
պատրաստված կամ պահածոյացված  
կանաչ ոլոր "Pisum Sativum", որը  
կազմում է պահածոյացված բանջա-  
րեղենի 49.8%-ը



Պահածոյացված բանջարեղենի  
ներմուծման երկների կառուցվածքը  
Հունգարիա – 27.2%  
Ռուսաստան – 26.9%  
Չինաստան – 9.7%  
Հնդկաստան – 9.3%

## Վաճառքի կառուցվածքը

Տեղական վերամշակված արտադրանք – 65.7%  
Ներմուծված վերամշակված արտադրանք – 34.3%

## Տեղականիամ

Ըստ տեղական վերամշակողների՝ վերամշակված արտադրանքը  
տեղականիւում է վաճառքի կետեր հիմնականում սեփական  
տրանսպորտային միջոցներով:

## Վաճառքի կետերի շահութաբերության մարժան

Ըստ վաճառքի կետերի մասնակիցների հարցման՝ տեղական  
շուկաների/սուպերմարկետների միջին եկամտաբերությունը  
համապատասխանաբար տեղական և ներկրված վերամշակված  
արտադրանքի համար կազմում է 20% և 11%:

## Հիմնական ներմուծված ապրանքանիշերը

- Հողանդական ապրանքանիշ – Unilever-ին պատկանող Calve-ն
- Ամերիկյան ապրանքանիշ – H.J.Heinz Company-ին պատկանող Heinz-ը
- Ֆրանսիական ապրանքանիշ – Bonduelle-ին պատկանող Bonduelle-ն
- Բալկանական ապրանքանիշ – Coopoliva-ին պատկանող Coopoliva-ն
- Ուկրաինական ապրանքանիշ – Volyn Holding-ին պատկանող Torchin-ը
- Ուկրաինական ապրանքանիշ – Chumak-ին պատկանող Chumak-ը
- Ամերիկյան ապրանքանիշ – Eurovision UPC-ին պատկանող Lutik-ը

## ՀՀ հիմնական դիստրիբյուտորները

- "ARAS FOOD" Co.Ltd
- "MEGAFOOD" LLC
- "EUROPRODUCT" LLC
- "VEGECOM" LLC
- "POLITAN" LLC
- "MINI BASKONIA" Co.Ltd

### 3. Հայաստանի Հանրապետության վերամշակված բանջարեղենի արտադրատեսակների շուկայի վերլուծություն

#### 3.1 Վերամշակված բանջարեղենի վաճառքի վերլուծություն տեղական շուկայում

Այս բաժնում իրականացված վերլուծությունը հիմնված է Երևանի, Գյումրիի և Վանաձորի 50 մարկետների/սուպերմարկետների շրջանում անցկացված հարցման վրա:

Ըստ հարցման մասնակից տեղական մարկետների/սուպերմարկետների, Հայաստանի Հանրապետության շուկայում վաճառվում է տեղական և ներկրված վերամշակված բանջարեղենի լայն տեսականի: Ավելին, 2016թ-ին վաճառված վերամշակված ապրանքատեսակների **65.7%-ը** տեղական արտադրությունն էր, իսկ մնացած **34.3%-ը** ներմուծված ապրանքատեսակներն էին:

Հավելված 12-ում ներկայացված է մանրամասն տեղեկատվություն մանրածախ առևտորի կետերի վերամշակված բանջարեղենի գնումների և վաճառքի ծավալների վերաբերյալ:

Հարցմանը մասնակցած վերամշակող ընկերությունների համաձայն՝ վերամշակված արտադրանքը փոխադրվում է վաճառքի կետեր հիմնականում սեփական տրանսպորտային միջոցներով: Ըստ վերամշակող ընկերությունների շրջանում անցկացված հարցման արդյունքների՝ տեղական շուկայում տարեկան միջին տրանսպորտային ծախսերը կազմում են 2 միլիոն ՀՀ դրամ՝ մեկ առաքող մեքենայի համար:

Հարցման արդյունքների համաձայն՝ տեղական մարկետների/սուպերմարկետների միջին եկամտաբերությունը տեղական և ներմուծված վերամշակված ապրանքատեսակների գծով կազմում է համապատասխանաբար 20% և 11%:

Ենուաբար, միջինում ներմուծված վերամշակված ապրանքատեսակների առք ու վաճառքի գները բարձր են տեղական վերամշակված ապրանքատեսակների գներից համապատասխանաբար մոտ 11%-ով և 2%-ով:

Վերամշակված բանջարեղենի համար տեղական մանրածախ առևտորի կետերում կիրառվող առք ու վաճառքի գները մանրամասն ներկայացված են Հավելված 13-ում:

Ինչպես նշեցին հարցման մասնակից համեմատած տեղական վաճառքի կետերը, տեղական ապրանքատեսակները հիմնականում փոխարինողներն են հետևյալ ապրանքանիշերի ապրանքները:

- «Յունիլեվեր» ընկերությանը պատկանող հոլանդական ապրանքանիշ՝ Կալվե
- «Յ. Զ. Հայնց» ընկերությանը պատկանող ամերիկյան ապրանքանիշ՝ Յայնց
- «Բոնյուել» ընկերությանը պատկանող ֆրանսիական ապրանքանիշ՝ Բոնյուել
- «Կոպոլիվա» ընկերությանը պատկանող իսպանական ապրանքանիշ՝ Կոպոլիվա
- «Վոլինոլիհինգ» ընկերությանը պատկանող ուկրաինական ապրանքանիշ՝ Տորչին
- «Չումակ» ընկերությանը պատկանող ուկրաինական ապրանքանիշ՝ Չումակ
- «Եվրովիճն» ՍՊԸ հոլդինգին պատկանող ամերիկյան ապրանքանիշը՝ Լյուստիկ

Տեղական և արտրերկրյա ապրանքանիշերի վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Հավելված 14-ում:

Հարցմանը մասնակցած ՀՀ վերամշակող ընկերությունների տրամադրած տեղեկատվության համաձայն՝ միայն տեղական թարմ բանջարեղենն է օգտագործվում վերամշակված ապրանքների արտադրության համար և կիսաֆարրիկատներ չեն ներմուծվում՝ արտադրության պրոցեսում ներառելու նպատակով:

Սակայն, համաձայն վերամշակող ընկերությունների շրջանում հարցման արդյունքների՝ վերամշակվող ապրանքների համար անհրաժեշտ փաթեթավորումը ներմուծվում է արտասահմանյան ընկերություններից: Ներմուծման համար կիրառվող արժույթը կախված է անհատական պայմանագրից և համագործակցող երկրից:

Վերամշակված բանջարեղենի ներմուծումը ՀՀ հիմնականում իրականացվում է դիստրիբյուտորների միջոցով: Ներքեւում ներկայացված են հիմնական դիստրիբյուտորները, որոնք ներմուծում և տեղական շուկայում վաճառում են վերամշակված բանջարեղենը.

- **ԱՐԱՍ ՖՈՒԴ ՍՊԸ** – ներմուծում է Calve ապրանքանիշի ապրանքներ
- **ՄԵԳԱՖՈՒԴ ՍՊԸ** - ներմուծում է Heinz և Torchin ապրանքանիշերի ապրանքներ
- **ԵՎՐՈՊՐՈԴՈՒԿՏ ՍՊԸ** - ներմուծում է Bonduelle ապրանքանիշի ապրանքներ
- **ՎԵԳԵՔՈՍ ՍՊԸ** - ներմուծում է Coopoliva ապրանքանիշի ապրանքներ
- **ՊՈԼԻՏԱՍ ՍՊԸ** - ներմուծում է Chumak ապրանքանիշի ապրանքներ
- **ՄԻՆԻ ԲԱՍԿՈՆԻԱ ՍՊԸ** - ներմուծում է Lutik ապրանքանիշի ապրանքներ


Համաձայն հարցմանը մասնակցած վերամշակող ընկերությունների՝ տեղական շուկա մուտք գործելու համար բացակայում են լուրջ արգելքներ, սակայն արտադրության ընդլայնման և զարգացման միակ խնդիրը տեղական շուկայի փոքր չափսերն են, ինչի հետևանքով տեղական վերամշակող ընկերությունների արտադրության հիմնական մասը արտահանվում է:

### 3.2 Վերամշակված բանջարեղենի ներմուծման վերլուծություն


2013-2016թթ. ընկած ժամանակաշրջանում վերամշակված բանջարեղենի ներմուծումը նվազել էր 10.8% ԲՄՏԱՏ-ով, կազմելով 6,897 տոննա 2016թ-ին, որն արժեքի տեսանկյունից իրենից ներկայացնում էր 19.6% նվազում նախորդ տարվա ցուցանիշի համեմատ (6,181 հազար ԱՄՆ դոլար): Նույն ժամանակաշրջանի համար վերամշակված բանջարեղենի ներմուծման ծավալը նվազել էր 4.7% ԲՄՏԱՏ-ով: Սա 2013թ-ից հետո գրանցված ամենացածր ցուցանիշն էր թե՛ ներմուծման արժեքի և թե՛ ծավալի տեսանկյունից:

**Վերամշակված բանջարեղենի հիմնական ներմուծվող տեսակներն են՝ պահածոյացված, չորացրած, սառեցրած բանջարեղենը, ինչպես նաև կետչուազը և տոմատային այլ սոուսները:**

**Վերամշակված բանջարեղենի ներմուծման արժեքի կառուցվածքն ըստ տեսակների**




**Վերամշակված բանջարեղենի ներմուծման արժեքը**



2016թ. առաջին կիսամյակից 2017թ. առաջին կիսամյակն ընկած ժամանակահատվածի ընթացքում գրանցվել էր վերամշակված բանջարեղենի հիմնական տեսակների ներմուծման աճ 2017թ. առաջին կիսամյակում՝ ի համեմատություն նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշի:

2016թ. երկրորդ կիսամյակից 2017թ. երկրորդ կիսամյակն ընկած ժամակահատվածուն արձանագրվել էր սառեցրած բանջարեղենի ներմուծման ամենաբարձր աճը (95.2%), որին հաջորդում էին պահածոյացված բանջարեղենը (31.6%) և չորացրած բանջարեղենը (2.7%).

**Պահածոյացված բանջարեղենի ներմուծման արժեքի կառուցվածքն ըստ  
ապրանքատեսակների, 2017թ. 1-ին կիսամյակ**




*Աղյուսք՝ ՀՀ ԱՎԾ*

2017թ. առաջին կիսամյակի ընթացքում վերամշակված բանջարեղենի ընդհանուր ներմուծման արժեքում ամենամեծ մասնաբաժին էր կազմում պահածոյացված բանջարեղենի ներմուծման արժեքը (70.7%), որին հաջորդում էին չորացրած բանջարեղենը (21.4%) և սառեցրած բանջարեղենը (7.8%): Վերամշակված բանջարեղենի ընդհանուր ներմուծման և պահածոյացված բանջարեղենի ներմուծման մեջ մեծ մասնաբաժին էր կազմում առանց քացախի կամ քացախաթթվի հավելման պատրաստված կամ պահածոյացված և չսառեցրած բանջարեղենային պատրաստումների ներմուծման արժեքը:

Վերամշակված բանջարեղենի ներմուծման ըստ ապրանքատեսակների մանրամասն վերլուծությունը 2017թ. առաջին կիսամյակի համար ներկայացված է Հավելված 15-ում:

### 3.2.1 Պահածոյացված բանջարեղենի ներմուծում

**Պահածոյացված բանջարեղենի ներմուծման դիմանիկա**



2013-2016թթ.


ընկած ժամանակաշրջանում պահածոյացված բանջարեղենի ներմուծման արժեքը նվազել էր 9.5% ԲՈՒՏԱՏ-ով, իսկ ծավալը՝ 0.5%-ով: 2016թ-ին պահածոյացված բանջարեղենի ներմուծման արժեքը նախորդ տարվա համեմատ նվազել էր 17.5%-ով՝ կազմելով 2,949 հազար ԱՄՆ դոլար (2,715 տոննա), որը 2013թ. հետո գրանցված ամենացածր ցուցանիշն էր թե՝ արժեքի և թե՝ ծավալի տեսանկյունից:

*Աղյուսք՝ Trade Map*

2016թ-ին ներմուծված պահածոյացված բանջարեղենի հիմնական տեսակն առանց քացախի կամ քացախաթթվի հավելման պատրաստված կամ պահածոյացված (քացախությամբ սառեցրած) ոլորն էր (*Pisum Sativum*), կազմելով պահածոյացված

բանջարեղենի ներմուծման արժեքի **49.8%-ը**, որին հաջորդում էին առանց քացախի հավելման պատրաստված կամ պահածոյացված, չսառեցրած բանջարեղենը և բանջարեղենի խառնուրդները (**12.4%**) և քացախի կամ քացախաթթվի հավելմանը պատրաստված վարունգն ու մանրավարունգը (11.2%):

#### Պահածոյացված բանջարեղենի ներմուծման արժեքի կառուցվածքը ըստ ապրանքի, 2016



- Ոլոտ (Pisum Sativum)` պատրաստված կամ պահածոյացված առանց քացախի կամ քացախաթթվի հավելման (բացառությամբ սառեցրածի)
- Բանջարեղեն և բանջարեղենի խառնուրդներ՝ պատրաստված կամ պահածոյացված առանց քացախի հավելման, չսառեցրած
- Վարունգ և մանրավարունգ պատրաստված կամ պահածոյացված քացախի կամ քացախաթթվի հավելմանը
- Լոլիկ՝ պատրաստված կամ պահածոյացված առանց քացախի կամ քացախաթթվի հավելման (բացառությամբ ամբողջականի կամ կտրատվածի)
- Բանջարեղեններ, մրգեր, ընկույզներ և բույսերի այլ ուտելի մասեր՝ պատրաստված կամ պահածոյացված քացախի կամ քացախաթթվի հավելմանը (բացառությամբ վարունգի և մանրավարունգի)
- Չոնդենացածք բանջարեղեն, նախատեված որպես մանկական կամ դիետիկ սնունդ մանրածախ վաճառքի համար՝ բաժնեօրարված 250 գ-ից ոչ ավելի զուտ զանգվածով փաթեթվածքներուն
- Agaricus ցեղի սննիք պատրաստված կամ պահածոյացված առանց քացախի կամ քացախաթթվի հավելման
- Չկելահանած լոլի (Vigna spp., Phaseolus spp.) պատրաստված կամ պահածոյացված առանց քացախի կամ քացախաթթվի հավելման (բացառությամբ սառեցրածի)
- Պահածոյացված վարունգ և մանրավարունգ
- Լոլիկ, ամբողջական կամ կտրատված՝ պատրաստված կամ պահածոյացված առանց քացախի կամ քացախաթթվի հավելման
- Կերևահանած լոլի (Vigna spp., Phaseolus spp.) պատրաստված կամ պահածոյացված առանց քացախի կամ քացախաթթվի հավելման (բացառությամբ սառեցրածի)
- Պահածոյացված բանջարեղեն և բանջարեղենի խառնուրդներ՝ կարճաժամկետ պահպաննան համար (բացառությամբ ձիթապտղի, վարունգի, մանրավարունգի, սննիք և գետնասննի, չխառնած)
- Սունկ և գետնասունկ՝ պատրաստված կամ պահածոյացված առանց քացախի կամ քացախաթթվի հավելման (բացառությամբ Agaricus ցեղի սննիքի)
- Ծներեկ՝ պատրաստված կամ պահածոյացված առանց քացախի կամ քացախաթթվի հավելման (բացառությամբ սառեցրածի)

#### Մուրայք՝ Trade Map

Ի համեմատություն 2015թ.- 2016թ-ին առանց քացախի կամ քացախաթթվի հավելման պատրաստված կամ պահածոյացված, չսառեցրած բանջարեղենի և բանջարեղենի խառնուրդների ներմուծման արժեքը աճել էր **431.9%-ով՝ կազմելով 367 հազար ԱՄՆ դոլար (367 տոննա):**


Նախորդ տարվա համենատ գրանցվել էր երրորդ առավել կարևոր տեսակի՝ քացախի կամ քացախաթթվի հավելմանը պատրաստված կամ պահածոյացված վարունգի և մանրավարունգի ներմուծման արժեքը **նվազում 48.5%-ով՝ կազմելով 329 հազար ԱՄՆ դոլար (325 տոննա):**

2016թ-ին լոլիկի ներմուծումը նույնական նվազել էր նախորդ տարվա համենատ: Մասնավորապես, առանց քացախի կամ քացախաթթվի հավելման պատրաստված կամ պահածոյացված (բացառությամբ ամբողջականի կամ կտրատվածի) լոլիկի ներմուծման արժեքը **նվազել էր 42.7%-ով՝ նախորդ տարվա համենատ՝ կազմելով 297 հազար ԱՄՆ դոլար (251 տոննա):**

Ստորև ներկայացված է պահածոյացված բանջարեղենի ներմուծման կառուցվածքը 2017թ. առաջին կիսամյակի համար:

- ✓ Առանց քացախի կամ քացախաթթվի հավելման պատրաստված կամ պահածոյացված, չսառեցրած բանջարեղենային պատրաստուկներ՝ 2,824 հազար ԱՄՆ դոլար (1,788 տոննա),
- ✓ Ժամանակավոր պահածոյացնող լուծույթի մեջ պահածոյացված բանջարեղեն՝ 534 հազար ԱՄՆ դոլար (740 տոննա),
- ✓ Քացախի կամ քացախաթթվի հավելմանբ պատրաստված կամ պահածոյացված բանջարեղեն՝ 282 հազար ԱՄՆ դոլար (235 տոննա):

**Պահածոյացված բանջարեղենի ներմուծման արժեքի  
կառուցվածքն ըստ երկրների, 2016թ.**



- Հունգարիա
- Ռուսաստան
- Չինաստան
- Ռեհաստան
- Ռումինիա
- Վիետնամ
- Մոլդովա
- Այլ


Առանց քացախի կամ քացախաթթվի հավելման պատրաստված կամ պահածոյացված, չսառեցրած բանջարեղենի ներմուծման արժեքը հազար ԱՄՆ դոլար (221 տոննա):

2016թ-ին պահածոյացված բանջարեղենի ներմուծման արժեքի տեսանկյունից երեք հիմնական մատակարարներն են՝ Հունգարիան, Ռուսաստանը և Չինաստանը, որոնցից կատարվող ներմուծումների արժեքը կազմում էր համապատասխանաբար 801 հազար ԱՄՆ դոլար (661 տոննա), 794 հազար ԱՄՆ դոլար (820 տոննա) և 286

### 3.2.2 Չորացրած բանջարեղենի ներմուծում

2013-2016թթ. ընկած ժամանակահատվածում չորացրած բանջարեղենի ներմուծման արժեքը նվազել էր 11.6% ԲՄՏԱՏ-ով, իսկ ծավալը նվազել էր 8.1%-ով: 2016թ-ին չորացրած բանջարեղենի ներմուծման արժեքը նախորդ տարվա համեմատ նվազել էր 27%-ով, կազմելով 2,018 հազար ԱՄՆ դոլար (3,052 տոննա), որը 2013թ. հետո գրանցված ամենացածր ցուցանիշն էր թե՛ արժեքի և թե՛ ծավալի տեսանկյունից:

#### Չորացրած բանջարեղենի ներմուծման դիմամիկա




2013-2016թթ. ընկած ժամանակաշրջանում չորացրած բանջարեղենի ներմուծման արժեքը նվազել էր 11.6% ԲՄՏԱՏ-ով, իսկ ծավալը նվազել էր 8.1%-ով: 2016թ-ին չորացրած բանջարեղենի ներմուծման արժեքը նախորդ տարվա համեմատ նվազել էր 27%-ով, կազմելով 2,018 հազար ԱՄՆ դոլար (3,052 տոննա), որը 2013թ. հետո գրանցված ամենացածր ցուցանիշն էր թե՛ արժեքի և թե՛ ծավալի տեսանկյունից:

2016թ-ին ներմուծվող չորացրած բանջարեղենի հիմնական տեսակը չորացրած, կեղևահանած ոսպն էր (կճեպով կամ առանց կճեպի, մանրատված կամ չմանրատված), որը կազմում էր չորացրած բանջարեղենի ներմուծման արժեքի 63.5%-ը, դրան հաջորդում էին չորացրած, կեղևահանած ոլոռը (*Pisum sativum*) (կճեպով կամ առանց կճեպի,

մանրատված կամ չմանրատված՝ (23.3%) և չորացրած, կեղևահանած լորին (*Phaseolus vulgaris*) (կճեպով կամ առանց կճեպի, մանրատված կամ չմանրատված) (5.9%):

**Չորացրած բանջարեղենի ներմուծման արժեքի կառուցվածքն ըստ ապրանքատեսակների,  
2016թ.**



- Չորացրած կեղևահանած ոսպ՝ կճեպով կամ առանց կճեպի
- Չորացրած կեղևահանած լորի (*Pisum sativum*) կճեպով կամ առանց կճեպի, մանրատված կամ չմանրատված
- Չորացրած կեղևահանած տվյալական լորի (*Phaseolus vulgaris*) կճեպով կամ առանց կճեպի, մանրատված կամ չմանրատված
- Չորացրած կեղևահանած լորի (*Vigna* և *Phaseolus*)
- Չորացրած բանջարեղեն և բանջարեղենի խառնուրդներ՝ ամբողջական, կտրատված, շերտերի տեսքով, մանրատված կամ փոշու տեսքով, բայց որևէ այլ եղանակով չպատրաստված
- Չորացրած լորձանկեր (*Tremella* spp.)՝ ամբողջական, կտրատված, շերտերի տեսքով, մանրատված կամ փոշու տեսքով, բայց որևէ այլ եղանակով չպատրաստված
- Չորացրած լորձանկեր (*Auricularia* spp.)՝ ամբողջական, կտրատված, շերտերի տեսքով, մանրատված կամ փոշու տեսքով, բայց որևէ այլ եղանակով չպատրաստված
- Չորացրած ականջանկեր (*Auricularia* spp.)՝ ամբողջական, կտրատված, շերտերի տեսքով, մանրատված կամ փոշու տեսքով, բայց որևէ այլ եղանակով չպատրաստված


#### *Ալրյուրը՝ Trade Map*

2016թ-ին չորացրած բանջարեղենի գրեթե բոլոր տեսակների ներմուծման արժեքը նվազել էր նախորդ տարվա համեմատ: Չորացրած բանջարեղենի այն տեսակները, որոնց ներմուծման արժեքը աճել էր 2016թ-ին, ոչ էական բաժնեմաս էին կազմում չորացրած բանջարեղենի ընդհանուր ներմուծման արժեքում:

Ի համեմատություն 2015թ.-2016թ-ին չորացրած, կեղևահանած ոսպի (կճեպով կամ առանց կճեպի, մանրատված կամ չմանրատված) ներմուծման արժեքը նվազել էր՝ կազմելով 1,281 հազար ԱՄՆ դոլար (1,617 տոննա): Չորացրած, կեղևահանած լորի (*Phaseolus vulgaris*) (կճեպով կամ առանց կճեպի, մանրատված կամ չմանրատված) ներմուծման արժեքի գծով գրանցվել էր նախորդ տարվա համեմատ ավելի մեծ նվազում՝ 10.1%-ի չափով՝ կազմելով 470 հազար ԱՄՆ դոլար (1,177 տոննա) 2016թ-ին: Ներմուծման արժեքի ամենամեծ նվազումը (70.6%) գրանցվել էր չորացրած, կեղևահանած լորի (*Phaseolus vulgaris*) (կճեպով կամ առանց կճեպի, մանրատված կամ չմանրատված) գծով՝ կազմելով 119 հազար ԱՄՆ դոլար (119 տոննա) 2016թ-ին:

Չորացրած բանջարեղենը և բանջարեղենի խառնուրդները (ամբողջական, կտրատված, շերտերի տեսքով, մանրատված կամ փոշու տեսքով, բայց որևէ այլ եղանակով չպատրաստված) կազմում էին չորացրած բանջարեղենի 2016թ. ընդհանուր ներմուծման միայն 2.1%-ը, որն իրնեց ներկայացնում էր 26.3% նվազում նախորդ տարվա համեմատ՝ կազմելով 42 ԱՄՆ դոլար (37 տոննա) 2016թ-ին:

**Չորացված բանջարեղենի ներմուծման  
կտրուցվածքն ըստ երկրների, 2016թ.**




*Աղյուր՝ Trade Map*

2016թ-ին պահածոյացված բանջարեղենի ներմուծման արժեքը տեսանկյունից երեք հիմնական մատակարարներն էին՝ Ռուսաստանը, Կանադան և Ուգրեկստանը, որոնցից կատարվող ներմուծումների արժեքը կազմում էր համապատասխանաբար 1,446 հազար ԱՄՆ դոլար (2,456 տոննա), 276 հազար ԱՄՆ դոլար (251 տոննա) և 113 հազար ԱՄՆ դոլար (117 տոննա):

### 3.2.3 Սառեցրած բանջարեղենի ներմուծում

2013-2016թթ. ընկած ժամանակաշրջանում սառեցրած բանջարեղենի ներմուծման արժեքը նվազել էր 14.7% ԲՄՏԱՏ-ով, մինչեւ ծավալի տեսանկյունից այն աճել էր 8.2% ԲՄՏԱՏ-ով: 2016թ-ին սառեցրած բանջարեղենի ներմուծման արժեքը նախորդ տարվա համեմատ նվազել էր 18.2%-ով, կազմելով 36 հազար ԱՄՆ դոլար (38 տոննա), որը 2013թ. հետո գրանցված ամենացածր ցուցանիշն էր արժեքի տեսանկյունից:

#### Սառեցրած բանջարեղենի ներմուծման դիմամիկա




2016թ-ին ներմուծվող սառեցրած բանջարեղենի հիմնական տեսակը՝ հում կամ պատրաստված՝ շղգեխաշելով կամ եռացող ջրի մեջ եփելով, սառեցրած բանջարեղենն էր, որը կազմում էր պահածոյացված բանջարեղենի ներմուծման արժեքի 38.9%-ը, որան հաջորդում էին կեղևահանած կամ չկեղևահանած ոլոռը (*Pisum sativum*)՝ հում կամ պատրաստված՝ շղգեխաշելով կամ եռացող ջրի մեջ եփելով, սառեցրած (27.8%) և բանջարեղենի խառնուրդները՝ հում կամ պատրաստված՝ շղգեխաշելով կամ եռացող ջրի մեջ եփելով, սառեցրած (13.9%):

Ի համեմատություն 2015թ.-2016թ-ին հում կամ պատրաստված՝ շղգեխաշելով կամ եռացող ջրի մեջ եփելով, սառեցրած բանջարեղենի ներմուծման արժեքը նվազել էր 36.4%-ով՝ կազմելով 14 հազար ԱՄՆ դոլար (23 տոննա):

Ի տարբերություն, հաջորդ երկու խոշոր տեսակների՝ ոլոռի (*Pisum sativum*)՝ հում կամ պատրաստված՝ շղգեխաշելով կամ եռացող ջրի մեջ եփելով, սառեցրած և բանջարեղենի խառնուրդների՝ հում կամ պատրաստված՝ շղգեխաշելով կամ եռացող ջրի մեջ եփելով, սառեցրած, ներմուծման արժեքը նախորդ տարվա համեմատ աճել էր 25%-ով և 400%-ով՝

Կազմելով համապատասխանաբար 10 հազար ԱՄՆ դոլար (8 տոննա) և 5 հազար ԱՄՆ դոլար (3 տոննա) 2016թ-ին:

**Սառեցրած բանջարեղենի ներմուծման արժեքի կառուցվածքն ըստ ապրանքատեսակների,  
2016թ.**




- Բանջարեղեն՝ հում կամ պատրաստված՝ շոգեխաշելով կամ եռացող ջրի մեջ եփելով, սառեցրած
- Կեղևահանած կամ չկեղևահանած ոլոր (Pisum sativum)՝ հում կամ պատրաստված՝ շոգեխաշելով կամ եռացող ջրի մեջ եփելով, սառեցրած
- Բանջարեղենի խառնուրդներ՝ պատրաստված կամ պահածոյացված առանց քացախի կամ քացախաթրվի հավելման, սառեցրած (քացառությամբ շաքարի օգնությամբ պահածոյացվածի և լոլիկի, սմկի, գետնասմկի և կարտոֆիլի, չխառնած)
- Սպանախ, նորզելանդական սպանախ և հսկա սպանախ հում կամ պատրաստված՝ շոգեխաշելով կամ եռացող ջրի մեջ եփելով, սառեցրած

*Աղյուր՝ Trade Map*

2016թ-ին սառեցրած բանջարեղենի ներմուծման արժեքի տեսանկյունից երեք հիմնական մատակարարներն են՝ Ռուսաստանը, Լեհաստանը և Բելգիան, որոնցից կատարվող ներմուծումների արժեքը կազմում էր համապատասխանաբար 15 հազար ԱՄՆ դոլար (26 տոննա), 10 հազար ԱՄՆ դոլար (5 տոննա) և 5 հազար ԱՄՆ դոլար (2 տոննա):

**Սառեցրած բանջարեղենի ներմուծման կառուցվածքն ըստ երկրների, 2016թ.**




*Աղյուր՝ Trade Map*

### 3.2.4 Տոմատային կետչուայի և տոմատային այլ սոուսների ներմուծում

2013-2016թթ. ընկած ժամանակաշրջանում տոմատային կետչուայի և տոմատային այլ սոուսների ներմուծման արժեքը նվազել էր 12.4% ԲՄՏԱՏ-ով, իսկ ծավալը նվազել էր 4.5%-ով: 2016թ-ին տոմատային կետչուայի և տոմատային այլ սոուսների ներմուծման արժեքը նախորդ տարվա համեմատ նվազել էր 10%-ով՝ կազմելով 1,178 հազար ԱՄՆ դոլար (1,092 տոննա), որը 2013թ. հետո գրանցված ամենացածր ցուցանիշն էր արժեքի տեսանկյունից:

Տոմատային կետչուափի և տոմատային այլ սուսների ներմուծման նվազման միտումը կարող է պայմանավորված լինել ապրանքատեսակի տեղական արտադրության ծավալի աճով:  
**ԲՄՏԱՏ-ով**

**Տոմատային կետչուափի և տոմատային այլ սուսների ներմուծման կառուցական ծավալը՝ 2016թ.**



2016թ-ին տոմատային կետչուափի և տոմատային այլ սոսների տեղական արտադրությունն աճել է 65.3%-ով՝ ի համեմատություն 2015թ.: 2016թ-ին երեք հիմնական երկրները, որոնցից ներմուծվում էին տոմատային կետչուափը և տոմատային այլ սոսները, Ուստանան էր, Ուկրաինան և Վիետնամը, որտեղ ամենամեծ մասնաբաժինը կազմում էր Ուստանան:


#### Սլրյուրը՝ Trade Map

Ուստանանից կատարվող ներմուծումների արժեքը (ծավալը) կազմում էր 579 հազար ԱՄՆ դոլար (518 տոննա), դրան հաջորդում էին Ուկրաինան՝ 310 հազար ԱՄՆ դոլար (302 տոննա) և Վիետնամը՝ 141 հազար ԱՄՆ դոլար (189 տոննա):

### 3.2.5 Վերամշակված կարտոֆիլի ներմուծում

2013-2016թթ. ընկած ժամանակաշրջանում վերամշակված կարտոֆիլի ներմուծման արժեքը նվազել էր 0.9% ԲՄՏԱՏ-ով, մինչդեռ ծավալի տեսանկյունից այն աճել էր 12% ԲՄՏԱՏ-ով: 2016թ-ին վերամշակված կարտոֆիլի ներմուծման արժեքը նախորդ տարվա համեմատ նվազել էր 9.5%-ով, կազմելով 1,701 հազար ԱՄՆ դոլար (806 տոննա), որը 2013թ. հետո գրանցված ամենացածր ցուցանիշն էր արժեքի տեսանկյունից:

#### Մշակված կարտոֆիլի ներմուծման դիմամիկա




#### Սլրյուրը՝ Trade Map

Վերամշակված կարտոֆիլի ներմուծման արժեքի և ծավալի հակադարձ դիմամիկան կարող է պայմանավորված լինել 2014թ-ից հետո գրանցած վերամշակված կարտոֆիլի համեմատաբար ցածր գներով:

Ներմուծվող վերամշակված կարտոֆիլի երկու հիմնական տեսակներն են՝ սառեցրած և չսառեցրած վերամշակված կարտոֆիլը, պատրաստված կամ պահածոյացված առանց քացախի կամ քացախաթթվի հավելման, որոնք կազմում էին 2016թ. ընթացքում ներմուծված վերամշակված կարտոֆիլի արժեքի համապատասխանարար 23.3%-ը և 76.7%-ը:

Վերամշակված կարտոֆիլի հիմնական տեսակների ներմուծման արժեքին և ծավալին վերաբերող վիճակագրական տվյալներն ավելի մանրամասն ներկայացված են Հավելված 16-ում:

**Վերամշակված կարտոֆիլի ներմուծման  
կառուցվածքն ըստ երկրների, 2016թ.**



Աղյուր՝ Trade Map

2016թ-ին վերամշակված կարտոֆիլի ներմուծման արժեքի տեսանկյունից երեք հիմնական մատակարարներն էին՝ Ռուսաստանը, Նիդերլանդները և Լեհաստանը, որոնցից կատարվող ներմուծումների արժեքը կազմում էր համապատասխանաբար 1,233 հազար ԱՄՆ դոլար (286 տոննա), 161 հազար ԱՄՆ դոլար (267 տոննա) և 121 հազար ԱՄՆ դոլար (110 տոննա):

# Արտաքին շուկաների ամփոփ պատկերը



Ըստհանուր վերամշակված  
բանջարեղենի արտահանումը 2016թ.  
7,128 հազար դոլար  
6,245 տոննա



Ըստհանուր արտահանման  
դինամիկան 2015-2016թ.  
Արժեքի աճ – 20.6%  
Ծավալի աճ – 4.8%



Ամենամեծ դասի տոկոսային բաժինը  
Պահածոյացված բանջարեղեն  
94.6%



Առավել արտահանվող ապրանքը  
Առանց քացախի  
պատրաստված կամ պահածոյացված  
բանջարեղեն և բանջարեղենային  
խառնուրդներ, որոնք կազմում են  
պահածոյացված բանջարեղենի  
61.5%-ը



Պահածոյացված բանջարեղենի  
արտահանման երկրի կառուցվածքը  
Ռուսաստանի դաշնություն – 73%  
ԱՄՆ – 14%  
Վրաստան – 5%

## Ռուսական շուկա



Ըստհանուր արտադրության  
դինամիկան 2015-2016թ.  
Ծավալի նվազում – 1.7%



Ամենամեծ դասի տոկոսային բաժինը  
Առանց քացախի կամ քացախաթթվի  
պահածոյացրած բանջարեղեն և սունկ  
– 75%,  
1,316 միլիոն պահածոյի տուփի



Վերամշակված կարտոֆիլի  
արտադրության դինամիկան  
Արժեքի աճ – 8.2%  
159 հազար տոննա

## Միջին տրանսպորտային ծախսը

Ռուսաստան արտահանումների միջին տրանսպորտային ծախսը կազմում է 0.13 ԱՄՆ դոլար 1 կգ արտադրանքի համար, իսկ ԵՄ արտահանումների միջին տրանսպորտային ծախսը կազմում է 0.29 եվրո:

## Հիմնական փոխարինողները

Հայտ տեղական վերամշակողների՝ ռուսական շուկայում ՀՀ արտադրության հիմնական փոխարինողներն են բելառուսական և ուկրաինական արտադրանքը:

## Հահութաբերության մարժան

Հայտ հարցման մասնակիցների, ՀՀ վերամշակող ընկերությունների միջին շահութաբերությունը արտաքին շուկայում կազմում է 18.6%:

## Հայաստանը և Եվրոպական Միությունը

Անդամակցությունը Եվրոպական միության (ԵՄ) Նախագաղտվությունների ընդհանրացված համակարգին (ՆՀՀ +) զգալի տնտեսական և առևտրային ազդեցություն է ունեցել ՀՀ-ի վրա, առաջարկելով Հայաստանի արտահանողներին արտոնյալ պայմաններով մուտք գործել ԵՄ շուկա տուրքի զրոյական դրույքաշափով մոտ 6,400 սակագնային դիրքերի համար:

## Հայաստանը և այլ երկրներ

ՀՀ կառավարությունը ներկայում աշխատում է Մերձավոր Արևելքի երկրների՝ մասնավորապես ԱՄԷ-ի, ինչպես նաև Իրանի և Վրաստանի հետ նոր կապեր հաստատելու և առկա կապերն ամրապնդելու ուղղությամբ:

## Հայաստանը և Եվրասիական տնտեսական միությանը (ԵԱՏՄ)

Անդամակցությունը ԵԱՏՄ-ին ընձեռեց նոր հնարավորություններ արտահանման ուղղությունների դիվերսիֆիկացիայի համար: Ռուսաստանը Հայաստանի համար ռազմավարական առևտրային գործընկեր է և ԱՊՀ երկրներից հիմնական արտահանման ուղղություն:

## Ապրանքի որակի վերահսկումը

Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության Ստանդարտների ազգային ինստիտուտը հանդիսանում է ՀՀ հիմնական սերտիֆիկացման մարմնը, որը կարգավորում է միջազգային (ISO), միջազիստական (ԳՈՒՏ), տարածաշրջանային (EN), հայկական (ՀԱՏ) և այլ ստանդարտների կիրառումը:



Ըստհանուր ներմուծումը  
2016թ.  
457.6 միլիոն ԱՄՆ դոլար  
558 հազար տոննա



Ըստհանուր ներմուծման  
դինամիկան  
Արժեքի նվազում – 8.6%  
Ծավալի նվազում – 6.9%



Վերամշակված կարտոֆիլի  
ներմուծումը 2016թ.  
109.3 հազար ԱՄՆ դոլար  
109.5 հազար տոննա



Վերամշակված կարտոֆիլի  
ներմուծման դինամիկան  
Արժեքի աճ – 12%  
Ծավալի աճ – 3.3%




Առավել ներմուծվող  
ապրանքը  
Պահածոյացված  
բանջարեղեն – 69%



Պահածոյացված բանջարեղենի  
ներմուծման երկրի  
կառուցվածքը  
Չինաստան – 43%,  
Իտալիա – 8%,  
Հունգարիա – 7%

# Վրացական շուկա




## 4. Վերամշակված բանջարեղենի արտադրության արտերկրյա շուկաների ուսումնասիրություն

### 4.1. Վերամշակված ապրանքատեսակների արտահանման ուսումնասիրություն

2013-2016թթ. ընկած ժամանակաշրջանում վերամշակված բանջարեղենի արտահանման արժեքն աճել էր 15.1% ԲՄՏԱՏ-ով, 2016թ-ին հասնելով առավելագույն ցուցանիշի՝ 7,128 հազար ԱՄՆ դոլարի, որը 20.6%-ով բարձր էր նախորդ տարվա ցուցանիշից: Նույն ժամանակաշրջանում վերամշակված բանջարեղենի արտահանման ծավալն աճել էր 26% ԲՄՏԱՏ-ով, որը նույնպես ամենաբարձր ցուցանիշն էր նշված ժամանակաշրջանի համար:


Ինչպես և ներմուծման արժեքի կառուցվածքի դեպքում, 2016թ-ին վերամշակված բանջարեղենի հիմնական արտահանվող տեսակներն էին՝ պահածոյացված, չորացրած, սառեցրած բանջարեղենը, ինչպես նաև կետչուազը և տոմատային այլ սոուսները: 2016թ-ին արտահանման արժեքի 94.6%-ը բաժին էր ընկնում պահածոյացված բանջարեղենին, մինչդեռ կետչուազի և տոմատային այլ սոուսների մասնաբաժինը կազմում էր 4.6%: Չորացրած և սառեցրած բանջարեղենի մասնաբաժիններն արտահանման արժեքուն եական չեին:

**Վերամշակված բանջարեղենի արտահանման արժեքի կառուցվածքն ըստ տեսակների**



*Աղյուրը՝ Trade Map*

**Վերամշակված բանջարեղենի արտահանման արժեքի կառուցվածքն ըստ  
ապրանքատեսակների, 2017թ. 1-ին կիսամյակ**



*Մորյուր՝ Trade Map*

2017թ. առաջին կիսամյակի ընթացքում գրացվել էր վերամշակված բանջարեղենի բոլոր երեք տեսակների (պահածոյացված, չորացրած և սառեցրած) արտահանման աճ ի համեմատություն նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշի:


Մասնավորապես, պահածոյացված, չորացրած և սառեցրած բանջարեղենի արտահանման արժեքն աճել էր 51.5%-ով, 19.2%-ով և 34.3%-ով՝ համապատասխանաբար կազմելով 3,126 տոննա, 1.4 տոննա և 58.4 տոննա 2017թ. 1-ին կիսամյակում:

2016թ. երկրորդ կիսամյակից 2017թ. երկրորդ կիսամյակն ընկած ժամակաշրջանուն ծավալի տեսանկյունից արձանագրվել էր պահածոյացված բանջարեղենի արտահանման ամենաբարձր աճը (57.8%), որին հաջորդում էին սառեցրած բանջարեղենը (81.2%) և չորացրած բանջարեղենը (42%):

2017թ. առաջին կիսամյակի ընթացքում վերամշակված բանջարեղենի ընդհանուր արտահանման արժեքում ամենամեծ մասնաբաժին էր կազմում պահածոյացված բանջարեղենի արտահանման արժեքը (99.1%), որի հաջորդում էին սառեցրած բանջարեղենը (0.7%) և չորացրած բանջարեղենը (0.2%):

#### **4.1.1. Պահածոյացված բանջարեղենի արտահանում**


2013-2016թթ. ընկած ժամանակաշրջանում պահածոյացված բանջարեղենի արտահանման արժեքն աճել էր 14.9% ԲՄՏԱՏ-ով, իսկ ծավալը նվազել էր 25%-ով: 2016թ-ին պահածոյացված բանջարեղենի արտահանման արժեքը նախորդ տարվա համենատ աճել էր 21.3%-ով՝ կազմելով 6,744 հազար ԱՄՆ դոլար (5,868 տոննա), որը 2013թ. հետո գրանցված ամենաբարձր ցուցանիշն էր թե՛ արժեքի և թե՛ ծավալի տեսանկյունից:



2016թ-ին արտահանված պահածոյացված բանջարեղենի հիմնական տեսակն առանց քացախի հավելման պատրաստված կամ պահածոյացված, չսառեցրած բանջարեղենն ու բանջարեղենի խառնուրդներն էին, կազմելով պահածոյացված բանջարեղենի արտահանման արժեքի 61.5%-ը, որին հաջորդում էին քացախի կամ քացախաթթվի հավելմանը պատրաստված կամ պահածոյացված բանջարեղենը, մրգերը, ընկույզները և բույսերի այլ ուտելի մասերը (քացառությամբ վարունգի և մանրավարունգի) (15.8%) և առանց քացախի կամ քացախաթթվի հավելման պատրաստված լոլիկը (քացառությամբ ամբողջականի կամ կտրատվածի) (13.9%):

Ի համենատություն 2015թ.-2016թ-ին առանց քացախի հավելման պատրաստված կամ պահածոյացված, չսառեցրած բանջարեղենի և բանջարեղենի խառնուրդների արտահանման արժեքն աճել էր 5%-ով՝ կազմելով 4,148 հազար ԱՄՆ դոլար (3,516 տոննա): Բացի այդ, քացախի կամ քացախաթթվի հավելմանը պատրաստված կամ պահածոյացված (բանջարեղենի, մրգերի, ընկույզների և բույսերի այլ ուտելի մասերի քացառությամբ վարունգի և մանրավարունգի) արտահանման արժեքն աճել էր 35.1%-ով նախորդ տարվա համենատ՝ կազմելով 1,067 հազար ԱՄՆ դոլար (962 տոննա) 2016թ-ին:

**Պահածոյացված բանջարեղենի արտահանման արժեքի կառուցվածքն ըստ  
ապրանքատեսակների, 2016թ.**




- Բանջարեղեն և բանջարեղենի խառնուրդներ՝ պատրաստված կամ պահածոյացված առանցքային հավելման, չսառեցրած
- Բանջարեղեն, մրգեր, թթվապտղեր և բույսերի այլ ուտելի նաև կամ պահածոյացված քացախի կամ քացախաթթվի հավելմանը (բացառությամբ վարունգի և մանրավարունգի)
- Լոլիկ՝ պատրաստված կամ պահածոյացված առանցքային հավելման (բացառությամբ ամբողջականի կամ կտրատվածի)
- Լոլիկ, անթոքական կամ կտրատված՝ պատրաստված կամ պահածոյացված առանցքային հավելման
- Agaricus ցեղի սնկեր՝ պատրաստված կամ պահածոյացված առանցքային հավելման քացախաթթվի հավելման
- Վարունգ և մանրավարունգ՝ պատրաստված կամ պահածոյացված քացախի կամ քացախաթթվի հավելմանը
- Չկեղևահանած կամ չկեղևահանած լորի (Vigna spp., Phaseolus spp.)՝ պատրաստված կամ պահածոյացված առանցքային հավելման (բացառությամբ սառեցրածի)
- Ոլոռ (Pisum Sativum)՝ պատրաստված կամ պահածոյացված առանցքային հավելման (բացառությամբ սառեցրածի)

*Ալրյուրը՝ Trade Map*

2016թ-ին առանցքային հավելման պատրաստված կամ պահածոյացված (բացառությամբ ամբողջականի կամ կտրատվածի) լոլիկի և առանցքային հավելման պատրաստված կամ պահածոյացված ամբողջական կամ կտրատված լոլիկի արտահանման արժեքը նախորդ տարվա համեմատ աճել էր 209.27%-ով և 53.57%-ով՝ կազմելով համապատասխանաբար դ տարվա համեմատ՝ կազմելով 940 հազար ԱՄՆ դոլար (834 տոննա) և 244 հազար ԱՄՆ դոլար (264 տոննա):

Քացախի կամ քացախաթթվի հավելմանը պատրաստված կամ պահածոյացված վարունգը և մանրավարունգը պահածոյացված բանջարեղենի միակ տեսակն էր, որի արտահանման արժեքը 2016թ-ին 2015թ. համեմատ նվազել էր 39.3%-ով՝ կազմելով 142 հազար ԱՄՆ դոլար (88 տոննա):

**Պահածոյացված բանջարեղենի արտահանման  
կառուցվածքն ըստ երկրների, 2016թ.**



*Ալրյուրը՝ Trade Map*

2016թ-ին պահածոյացված բանջարեղենի արտահանման արժեքի տեսանկյունից երեք հիմնական երկրներն էին՝ Ռուսաստանը, ԱՄՆ և Վրաստանը, որտեղ արտահանումների արժեքը կազմում էր համապատասխանաբար 4,920 հազար ԱՄՆ դոլար (4,731 տոննա), 962 հազար ԱՄՆ դոլար (522 տոննա) և 363 հազար ԱՄՆ դոլար (314 տոննա):


Ստորև ներկայացված է պահածոյացված բանջարեղենի արտահանման կառուցվածքը 2017թ. առաջին կիսամյակի համար:

- Առանց քացախի կամ քացախաթթվի հավելման պատրաստված կամ պահածոյացված, չսառեցված բանջարեղենային պատրաստուկներ՝ 2,882 հազար ԱՄՆ դոլար (2,166 տոննա),
- Քացախի կամ քացախաթթվի հավելմամբ պատրաստված բանջարեղեն՝ 625 հազար ԱՄՆ դոլար (475 տոննա),
- Առանց քացախի կամ քացախաթթվի հավելման պատրաստված կամ պահածոյացված լոլիկ՝ 434 հազար ԱՄՆ դոլար (467 տոննա),
- Առանց քացախի կամ քացախաթթվի հավելման պատրաստված կամ պահածոյացված սունկ և գետնասունկ՝ 35 հազար ԱՄՆ դոլար (18 տոննա):

#### **4.1.2. Չորացրած բանջարեղենի արտահանում**

2013-2016թթ. ընկած ժամանակաշրջանում չորացրած բանջարեղենի արտահանման արժեքը աճել էր 8% ԲՈՏԱՏ-ով, իսկ ծավալը նվազել էր 3.1%-ով: 2016թ-ին չորացրած բանջարեղենի արտահանման արժեքը նախորդ տարվա համեմատ նվազել էր 23.1%-ով, կազմելով 28 հազար ԱՄՆ դոլար (10 տոննա), որը 2013թ. հետո գրանցված ամենացածր ցուցանիշն էր թե՛ արժեքի և թե՛ ծավալի տեսանկյունից:


**Չորացրած բանջարեղենի արտահանման  
դիմամիկա**



*Աղյուսք՝ Trade Map*

2016թ-ին չորացրած բանջարեղենին և բանջարեղենի խառնուրդներին՝ ամբողջական, կտրատված, շերտերի տեսքով, մանրատված կամ փոշու տեսքով, բայց որևէ այլ եղանակով չպատրաստված (բացառությամբ սոխի, սնկի և գետնասնկի, չխառնված) բաժին էր ընկած չորացրած բանջարեղենի արտահանման արժեքի 96.4%-ը՝ 27 հազար ԱՄՆ դոլար (9 տոննա):

**Չորացրած բանջարեղենի արտահանման կառուցվածքն  
ըստ երկրների, 2016թ.**



*Աղյուսք՝ Trade Map*

Կիսամյակում չորացրած բանջարեղենի արտահանվող հիմնական տեսակն ամբողջական, կտրատված, շերտերի տեսքով, մանրատված կամ փոշու տեսքով, բայց որևէ


2016թ-ին չորացրած բանջարեղենը Հայաստանից արտահանվում էր հիմնականուն երկու երկիր՝ Ռուսաստան և ԱՄՆ, որտեղ արտահանումների արժեքը կազմում էր համապատասխանաբար 15 հազար ԱՄՆ դոլար (7 տոննա) և 11 հազար ԱՄՆ դոլար (2 տոննա):

2017թ. առաջին


այլ եղանակով չպատրաստված չորացրած բանջարեղենն էր (79%), որը կազմում էր 5.7 հազար ԱՄՆ դոլար (0.8 տոննա), իսկ չորացրած բանջարեղենի արտահանման արժեքի 21%-ը բաժին էր ընկնում չորացրած պատիճառվոր բանջարեղենին՝ կեղևահանած, կծեպով կամ առանց կծեպի, մանրատված կամ չմանրատված, որոնք կազմում էին 1.5 հազար ԱՄՆ դոլար (0.6 տոննա):

#### **4.1.3. Սառեցրած բանջարեղենի արտահանում**

2013-2016թթ. ընկած ժամանակաշրջանում սառեցրած բանջարեղենի արտահանման արժեքը աճել էր 19.1% ԲՄՏԱՏ-ով, իսկ ծավալն աճել էր՝ **88.8% ԲՄՏԱՏ-ով**: 2016թ-ին սառեցրած բանջարեղենի արժեքը նախորդ տարվա համեմատ նվազել էր 74.3%-ով, կազմելով 27 հազար ԱՄՆ դոլար (74 տոննա): Սառեցրած բանջարեղենի արտահանման ամենաբարձր ցուցանիշը գրանցվել էր 2015թ-ին՝ կազմելով 105 հազար ԱՄՆ դոլար (77 տոննա):



#### **Սառեցրած բանջարեղենի արտահանման արժեքի կառուցվածքը ըստ ապրանքատեսակների, 2016թ.**



*Աղյուրը՝ Trade Map*

բանջարեղենի խառնուրդների՝ պատրաստված կամ պահածոյացված քացախի կամ քացախաբթի հավելման, սառեցրած (բացառությամբ շաքարով պահածոյացվածների, լոլիկի, սկնի և գետնասնկի և կարտոֆիլի, չխառնված) արտահանումը դադարեցվել էր 2016թ-ին:

**2016թ-ին հում կամ պատրաստված՝ շոգեխաշելով կամ եռացող ջրի մեջ եփելով, սառեցրած սպանախի, նորգեւանդակմ սպանախի և հակա սպանախի արտահանման արժեքը նախորդ տարվա համեմատ նվազել էր 98.3%-ով՝ կազմելով 1 հազար ԱՄՆ դոլար (2 տոննա):**

2016թ-ին սառեցրած բանջարեղենի բոլոր տեսակների գծով գրանցվել էր արտահանման արժեքի նվազում նախորդ տարվա համեմատ: 2015թ-ին արտահանված բանջարեղենի երկու տեսակների՝ պատիճառվոր բանջարեղենի՝ կեղևահանած կամ կեղևով, հում կամ պատրաստված՝ շոգեխաշելով կամ եռացող ջրի մեջ եփելով, սառեցրած (բացառությամբ ոլոռը և լոբին) և բանջարեղենի և

կեղևահանած կամ կեղևով, հում կամ պատրաստված՝ շոգեխաշելով կամ եռացող ջրի մեջ եփելով, սառեցրած (բացառությամբ ոլոռը և լոբին) և բանջարեղենի և


Բացի այդ, հում կամ պատրաստված՝ շղգեխաշելով կամ եռացող ջրի մեջ եփելով, սառեցրած բանջարեղենի արտահանման արժեքը նախորդ տարվա համեմատ նվազել էր 22 հազար ԱՄՆ դոլարով (67 տոննա), մինչդեռ 2016թ-ին հում կամ պատրաստված՝ շղգեխաշելով կամ եռացող ջրի մեջ եփելով, սառեցրած կեղևահանած կամ չկեղևահանած լոբու (Vigna spp., Phaseolus spp.) արտահանման արժեքը չէր փոփոխվել ի համեմատություն 2015թ.:

2016թ-ին արժեքի տեսանկյունից սառեցրած բանջարեղենի Յայստան ներմուծման հիմնական երկրներն էին՝ Ռուսաստանը և Չինագարիան, որոնց մասնաբաժինները հավասարապես կազմում էին 27 հազար ԱՄՆ դոլար (74 տոննա):

2017թ. առաջին կիսամյակի ընթացքում սառեցրած բանջարեղենի արտահանման հիմնական մասնաբաժինը պատկանում էր հում կամ պատրաստված՝ շոգեխաշելով կամ եռացող ջրի մեջ եփելով, սառեցրած բանջարեղենին (99.3%)՝ կազմելով 29 հազար ԱՄՆ դոլար (58 տոննա), իսկ սառեցրած բանջարեղենի արտահանման արժեքի 0.7%-ը բաժին էր ընկնում առանց քացախի կամ քացախաթթվի հավելման պատրաստված կամ պահածոյացված, սառեցրած բանջարեղենին՝ կազմելով 0.2 հազար ԱՄՆ դոլար (0.1 տոննա):

#### **4.1.4. Տոմատային կետչուայի և տոմատային այլ սոուսների արտահանում**

Կետչուայի և սովորական այլ սոուսների  
արտահանման արժեքի բացվածքը ըստ  
երկրների



2013-2016թթ. ընկած ժամանակաշրջանում տոմատային կետչուափի և տոմատային այլ սոուսների արտահանման արժեքը նվազել էր 23.2% ԲՄԱԾ-ով, իսկ ծավալը կազմել էր 45.1%: 2016թ-ին տոմատային կետչուափի և տոմատային այլ սոուսների արտահանման արժեքը նախորդ տարվա համեմատ աճել էր 58.9%-ով՝ կազմելով 329 հազար ԱՄՆ դոլար (293 տոննա): 2016թ-ին երեք հիմնական երկրները, ուրագությունը կետչուափը և տոմատային այլ սոուսները, Ուլսաստանն էր,

**Թուրքմենստանը և Վրաստանը, որտեղ կատարվող արտօհանումները կազմում էին համապատասխանաբար 271 հազար ԱՄ դոլար (258 տոննա), 23 հազար ԱՄ դոլար (13 տոննա) և 13 հազար ԱՄ դոլար (9 տոննա):**

#### **4.1.5. Վերամշակված կարտոֆիլի արտահանում**

2016թ-ին Հայաստանի Հանրապետությունից վերամշակված կարտոֆիլ չի արտահանվել։ Վերամշակված կարտոֆիլի՝ առանց քացախի կամ քացախաթթվի հավելման

պատրաստված կամ պահածոյացված, սառեցրած կարտոֆիլի վերջին արտահանումն իրականացվել էր 2015թ-ին Ռուսաստան՝ կազմելով 1 հազար ԱՄՆ դոլար (1 տոննա):

## 4.2 Վերամշակված արտադրանքի վաճառքի վերլուծություն

### 4.2.1 Հայաստանի Հանրապետության տրանսպորտային ծախսերը և վաճառքի բնութագրերը արտաքին շունակերում

Հարցման մասնակիցների կարծիքով, տեղական վերամշակող ընկերություններն իրենց արտադրանքը վաճառում են արտաքին շուկաներում հիմնականում իրենց սեփական ներկայացուցիչների միջոցով՝ Ռուսաստանի շուկայի դեպքում, և կամ համագործակցելով համապատասխան արտերկրյա իրացնող ընկերությունների հետ: Վաճառքի այս մեթոդները նրանց հնարավորություն են տալիս կիրառել ավելի լավ գնային քաղաքականություն և մուտք գործել ավելի մեծ շուկա: Արտաքին մանրածախ շուկա ուղղակի վաճառքը լայնորեն չի կիրառվում Հայաստանի վերամշակող ընկերությունների կողմից:

Հարցման մասնակիցների կարծիքով, Ռուսաստան արտահանումների միջին տրանսպորտային ծախսը կազմում է 0.13 ԱՄՆ դոլար 1 կգ վերամշակված արտադրանքի համար: Մասնակիցների կողմից նշված արտահանման մյուս հիմնական ուղղություններն են ԱՄՆ և ԵՄ: ԵՄ արտահանումների միջին տրանսպորտային ծախսը կազմում էր 0.29 եվրո, ԱՄՆ արտահանումների տրանսպորտային ծախսերի մասին տվյալները չեն տրանադրվել գաղտնիության հարցերից ելնելով կամ այն պատճառով, որ արտահանումները կանոնավոր բնույթ չեն կրում և ծախսերն եապես տարբերվում են՝ կախված ժամանակից, արտադրանքի տեսակից և արտահանվող ծավալից:

Հայկական արտադրանքի հիմնական սպառողներն են համապատասխան օտարերկրյա երկրների բնակիչները, ովքեր գնահատում են ծեռքի աշխատանքը և հայկական արտադրանքի համային առանձնահատկությունները: Ըստ տեղական վերամշակող ընկերությունների՝ Հայաստանի արտադրանքը արտաքին շուկաներում կայուն դիրք է գրադեցնում որպես բարձրորակ արտադրանք:

Ըստ տեղական վերամշակող ընկերությունների՝ Ռուսաստանի շուկայում Հայաստանի արտադրանքի հիմնական փոխարինողն է Բելառուսի և Ուկրաինայի արտադրանքը: Բելառուսում և Ուկրաինայում հնարավոր է վերամշակել մեծ քանակությամբ թարմ բանջարեղեն, այդ իսկ պատճառով, այս երկներն արտադրում են մեծ քանակությամբ բանջարեղեն և մուտք են գործում ավելի մեծ շուկաներ: Բացի այդ, ի համեմատություն Հայաստանի արտադրանքի, տրանսպորտային ծախսերը և էներգետիկ ռեսուրսների ծախսերն ավելի ցածր են Բելառուսի և Ուկրաինայի արտադրանքի համար, ինչն ազդում է վերամշակված արտադրանքի վաճառքի գների վրա:


Հայաստանի վերամշակված ապրանքատեսակներ չեն գրադեցնում մեծ մասնաբժիններ այլ արտերկրյա շուկաներում (ԱՄՆ, ԵՄ), այդ իսկ պատճառով, հարցման մասնակիցները չեն կարող նշել արտադրանքի այն խնբերը, որոնք հիմնականում փոխարինում են Հայաստանի արտադրանքը:

## 4.2.2 Հայաստանի վերամշակող ընկերությունների վաճառքի գները և միջին շահութաբերությունն արտաքին շուկաներում

Գրաֆիկը ցույց է տալիս վերամշակված բանջարեղենի վաճառքի միջին գները Ուստաստանում և ԱՄՆ-ում:

ԵՄ-ի վաճառքի գները ներկայացված չեն, քանի որ հարցման մասնակիցները նշել են տարբեր արտահանման շուկաներ ԵՄ-ում, որտեղ տեղական վերամշակող ընկերությունների արտահանումների մասնաբաժիններն էական չեն:


### Վաճառքի միջին գին



*Արյուրը՝ (1) Euromonitor International  
(2) Քեյ-Փի-Էմ-Զի-ի վերլուծությունները*

Վերամշակված բանջարեղենի գրեթե բոլոր տեսակները, բացառությամբ երկարաժամկետ պահպանման համար պիտանի բանջարեղենի (բացառությամբ լոլիկի և լոբու) և սառեցրած վերամշակված կարտոֆիլի, ավելի բարձր գներ ունեն ԱՄՆ-ում, քան Ուստաստանում: Գների տարբերությունները էական չեն գրեթե բոլոր ապրանքատեսակների համար, բացառությամբ սառեցված վերամշակված բանջարեղենի, որն ԱՄՆ-ում ավելի թանկ է քան Ուստաստանում՝ 2.4 ԱՄՆ դոլարով մեկ կիլոգրամի համար:

### **Հայաստանի մատակարման միջին զին**



Աղյուսը՝ Քեյ-Փի-Էմ-Զի-ի հարցումը

Նշում՝ Միջին գնի փոխարկման համար կիրառվել էր 14/09/17թ. դրույամբ գործող 478.37ՀՀ դրամ/ԱՄՆ դրամ փոխարժեքը:

Քանի որ Հայաստանի վերամշակող ընկերությունները չեն իրականացնում ուղղակի վաճառք արտաքին շուկաներում, նրանք արտադրանքը մատակարարում են արտերկրյա իրացնող ընկերություններին և օգտագործում են գրաֆիկում ներկայացված միջին գները:

Հարցման մասնակիցների կարծիքով, Հայաստանի վերամշակող ընկերությունների միջին շահութաբերությունն արտաքին շուկաներում կազմում է 18.6%:

#### **4.3 Հայաստանի ընկերությունների համար արտաքին շուկա մուտք գործելու հետ կապված հնարավորությունների և սպառնալիքների ուսումնասիրություն**

##### **4.3.1. Հայաստանի Հանրապետության արտահանման շուկաների հիմնական բնութագրերը**

Հայաստանի Հանրապետության վերամշակող ընկերություններում անցկացված հարցման համաձայն՝ Հայաստանի համար հիմնական արտահանման երկիր է հանդիսանում Ռուսաստանը, որին բաժին է ընկնում Հայաստանի վերամշակված բանջարեղենի ընդհանուր արտահանման **83.8%-ը**: Հարցման մասնակիցները նշել են, որ արտաքին շուկաներում մեծ պահանջարկ է վայելում հիմնականում այն արտադրանքը, որի արտադրությունն ամբողջովին ավտոմատացված չէ, և գործընթացի համար պահանջվում է ձեռքի աշխատանք: Հայկական ապրանքատեսակները, որոնք արտադրվում են սահմանված տեխնոլոգիայով և ներառում են յուրահատուկ բաղադրիչներ, որոնք համային առանձնահատկություններ են հաղորդում արտադրանքին, մեծ պահանջարկ են վայելում և մեծ ներուժ ունեն արտաքին շուկայում իրենց մասնաբաժինն ավելացնելու համար:

Մասնավորապես, հայկական ծագում ունեցող հետևյալ ապրանքատեսակները ներկայացվել են որպես արտաքին շուկաներում մեծ պահանջարկ ունեցող:

- Կիսապատրաստված պահածոյացված բանջարեղեն, որը կարելի է խառնել սննդի հետ և պատրաստել
- «Բարի ախորժակ»՝ վերամշակցված տաքդեղի, վերամշակված լոլիկի և համեմուներքի խառնուրդ
- Ապիստած բանջարեղեն
- Խորոված բանջարեղեն
- Իմամ Բայալիի
- Աջիկա
- Պահածոյացված կարմիր տաքդեղ
- Սմբուկի խավիար

Հիմնական խնդիրը, որին բախվում են Հայաստանի վերամշակող ընկերություններն այն է, որ որոշ գործընկերներ համագործակցում են միայն այն դեպքում, երբ տեղական վերամշակող ընկերությունները մատակարարում են ապրանքի սահմանված քանակությունը: Քանի որ վերամշակման ակտիվ սեզոնը Հայաստանում տևում է ընդամենը 1.5 ամիս, տեղական վերամշակող ընկերությունները դժվարանում են գտնել համապատասխան մեծ քանակությամբ և լավ որակի թարմ բանջարեղեն:

Հարցման մասնակիցների կարծիքով, Հայաստանի արտադրողներն առավել մրցունակ կուտանան արտաքին շուկաներում, եթե առաջարկեն ավելի ցածր գներ և ընդլայնեն մատակարարվող ապրանքների տեսականին, որը կներառի համապատասխան արտաքին շուկա ներկայացված նոր ապրանքատեսակներ:

#### **4.3.2. Հայաստանի ընկերությունների համար արտաքին շուկա մուտք գործելու հետ կապված հնարավորությունները և սպառնալիքները**

##### **Հայաստան և Ռուսաստան**

ԱՊՀ երկրներ հայկական արտադրանքի արտահանման շրջանակներում գերակայում է արտահանումը Ռուսաստանի Դաշնություն: Ռուսաստանը և այլ ԱՊՀ երկրներն իրենցից նեկայացնում են մեծ զարգացող շուկա, և այն ընկերություններ, որոնք ցանկանում են մուտք գործել այդ շուկա, պետք է ձեռք բերեն ԳՕՍ ստանդարտներ: Ռուսաստանի համար, մասնավորապես, ներմուծվող սննդամբերի համար ընդունելի է ազգային ԳՕՍ Ռ ստանդարտը, որը դժվար չէ ձեռք բերել: Բացի այդ, ազգային ստանդարտը նույնական է սննդի անվտանգության միջազգային ISO 22000: 2005 ստանդարտին:

Հայաստանի վերամշակող ընկերությունները կարող են ձեռք բերել ԱՊՀ երկրներ արտահանման համար պահանջվող ստանդարտները «Ստանդարտների ազգային իմստիտուտ» ՓԲԸ-ից (այսուհետև՝ «Ինստիտուտ»), որը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության ներքո գործող սերտիֆիկացման հիմնական մարմինը: Ստանդարտացման ոլորտում ինստիտուտի կողմից մատուցվող ծառայությունների հիմնական խնդիրներն են:

- արտադրանք արտադրող և ծառայություն մատուցող կազմակերպությունների միջև փոխհանձնաժողովական ապահովումը ստանդարտների նախագծերի մշակման, քննարկման և ընդունման գործընթացներում,
- ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի վերաբերյալ տեղեկատվության ապահովումը:

Մասնավորապես, «Խնաժիտություն»-ը վարում է Հայաստանի Հանրապետության ստանդարտների ցանկը, որը ներառում է՝

- Միջազգային (ISO),
- Միջազգային (ԳՕՍ),
- Տարածաշրջանային (ԵԱ),
- Ազգային (ՀԱՏ) և այլ ստանդարտները:

Ներկայումս սննդամթերքի մեջ մասի, ծխախոտի արտադրանքի, ալկոհոլային խմիչքների և նավթամթերքի համար պահանջվում են Ինստիտուտի կողմից տրամադրված կամ ընդունված որակի/անվտանգության սերտիֆիկատները: Հայաստանը ստանդարտացման ոլորտում համագործակցության պայմանագրեր ունի Վրաստանի, Բելառուսի, Թուրքմենստանի, Ղազախստանի, Ղրղզստանի, Ուկրաինայի, Ռուսաստանի, Չինաստանի, Հնդկաստանի, Սլովակիայի և Իրանի հետ:

Բացի այդ, անդամակցությունը Եվրասիական տնտեսական միությանը (ԵԱՏՄ) 2015թ. հունվարին ընձեռեց նոր հնարավորություններ արտահանման ուղղությունների դիվերսիֆիկացիայի համար և ընդլայնեց Հայաստանի ներկայությունը 180 միլիոն բնակչությանք համաշխարհային շուկայում: ՀՀ գյուղատնտեսության նախարարության 2016թ. հայտարարության համաձայն՝ շուրջ 10 երկրների հետ նախատեսվող ազատ առևտության պայմանագրերը կստեղծեն նոր արտահանման հնարավորություններ և կպարզեցնեն նաև լոգիստիկայի հետ կապված ընթացակարգերը:

Ռուսաստանը Հայաստանի համար համար համակարգում է ռազմավարական առևտորային գործընկեր և արտահանման հիմնական ուղղությունն ԱՊՀ երկրներում և ԵԱՏՄ անդամ պետություններում: Այն Հայաստանում արտադրված բանջարեղենի հիմնական ներմուծողն է, քանի որ բանջարեղենի արտահանման աճը հիմնականում պայմանավորված էր Ռուսաստան իրականացվող արտահանումներով: Արդյունքում Հայաստանի արտահանման ոլորտը հայտնվում է մեջ կախման մեջ Ռուսաստանի բանջարեղենի պահանջարկից: Այնուամենայնիվ, Ռուսաստանի տնտեսությունը բացում է հեռանկարներ բանջարեղենի արտահանման և ընդհանրապես Հայաստանի տնտեսության աճի համար:

## Հայաստանը և Եվրոպական միությունը

ԵՄ-ի նախապատվությունների ընդհանրացված համակարգը (ՆԸՀ) նպատակ ունի օգնել գործընկեր երկրներին զարգացնել իրենց տնտեսությունները միջազգային առևտության օգուտ քաղելու միջոցով: Այն նախատեսում է նվազեցրած կամ զրո սակագներ ԵՄ իրականացվող ներմուծումների համար՝ ավելի հեշտացնելով նուտքը ԵՄ շուկաներ: Անդամակցությունը Եվրոպական միության (ԵՄ) նախապատվությունների ընդհանրացված համակարգին (ՆԸՀ +) զգալի տնտեսական և առևտության ազդեցություն է ունեցել Հայաստանի Հանրապետության վրա: Այս համաձայնագիրը հնարավորություն է տալիս Հայաստանի արտահանողներին արտոնյալ պայմաններով մուտք գործել ԵՄ շուկա, քանի

որ նախատեսում է տուրքի գրոյական դրույքաչափ մոտ 6,400 սակագնային դիրքերի համար: Մասնավորապես, համաձայնագրից շահող հիմնական արտահանվող ապրանքատեսակներն են հագուստը, այսունինը, խեցետինը, ընկուզեղենը և այլ սերմերը, հյութերը, ջեմերը և այլ վերամշակված սմունդը: ԵՄ շուկաներ մուտք գործելը ռազմավարական նշանակություն ունի Հայաստանի համար և բացում է նոր շուկաներ հայկական ապրանքների արտահաննան համար:

ԵՄ բանջարեղենային ապրանքատեսակներ արտահանելու համար Հայաստանի վերամշակող ընկերություններին անհրաժեշտ են հատուկ սերտիֆիկատներ, որոնց ձեռքբերումը պահանջում է լրացուցիչ ժամանակ և ֆինանսական ռեսուրսներ: Մասնավորապես, վերամշակող ընկերությունները պետք է համապատասխանեն սննդամթերքի անվտանգության կառավարման համակարգի պահանջներին՝ վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի ներդրված համակարգի (HACCP) համաձայն: Թարմ արտադրանքի համար առավել հաճախակի պահանջվող սերտիֆիկացման համակարգը Global GAP-ն է: Ներմուծման սակագները դասվում են ամենացածրերի շարքին ԵՄ-ում:

Հայաստանի Հանրապետության արտադրողները կարող են ձեռք բերել արտահանման համար պահանջվող սերտիֆիկատները «ՆԱՐԵԿ» գիտահետազոտական ձեռնարկություն ՓԲԸ-ից, որը տեղական հաստատություն է:

### **Հայաստանը և այլ երկրներ**

Բացի ԵՄ և ԵԱՏՄ անդամ պետություններից, Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայում աշխատում է Մերձավոր Արևելքի երկրների հետ նոր կապեր հաստատելու և առկա կապերն ամրապնդելու ուղղությամբ: Մասնավորապես, կառավարությունը աշխատում է Արաբական Միացյալ Էմիրություններ (ԱՄԷ) գյուղատնտեսական արտադրանքի արտահանման հնարավորությունների ստեղծման ուղղությամբ:

**Ամերիկայի Միացյալ Նահանգները և Հայաստանն ունեն մի շարք պայմանագրեր, որոնք ազդեցություն ունեն այս երկու երկների միջև առևտությունների վրա, այդ թվում՝**

- Առեւտություն և ներդրումների շրջանակային համաձայնագիր (ԱՆՇԴ),
- Առևտրային հարաբերությունների համաձայնագիր,
- Ներդրումների խրախուսման համաձայնագիր,
- Երկկողմանի ներդրումային պայմանագիր (ԵՆՊ),

Հայաստանն առաջարկվել է որպես Նախապատվությունների ընդհանրացված համակարգի (ՆԾԴ) ծրագրի շահառու երկիր, որի շրջանակներում մի շարք ապրանքատեսակներ, որոնք Հայաստանը կարող է ցանկանալ արտահանել, իրավունք ունեն մուտք գործել Ամերիկայի Միացյալ Նահանգներ առանց հարկի վճարման: ՆԾԴ ծրագիրը խրախուսում է ներդրողներին ապրանքներն արտադրել Հայաստանում և արտահանել ընտրված ապրանքատեսակներն ԱՄՆ-ի շուկա առանց հարկ վճարելու:

2017թ. առաջին կիսամյակում Հայաստանը և Իրանը ձեռնարկել են կարևոր քայլեր երկու երկների տնտեսական համագործակցության բարելավնան ուղղությամբ՝ հատկապես գյուղատնտեսության ոլորտում: 2017թ. մայիսի 24-ին ՀՀ գյուղատնտեսության

Նախարարությունը հրապարակել է հայ-իրանական տնտեսական համագործակցության օրակարգը: 2017թ. մայիսի 31-ին ստորագրվել է փոխընթացական հուշագիր՝ երկու երկուների միջև երկկողմ համագործակցությունը խթանելու նպատակով: Միջազգային հարաբերությունների հետ կապված իրականացվող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Հավելված 17-ում:

ԱՄՆ արտահանումներ իրականացնելու համար Հայաստանի վերամշակող ընկերությունների առաքումները պետք է համապատասխանեն ԱՄՆ-ի պահանջներին, ինչը պահանջում է լրացուցիչ ժամանակ և ֆինանսական ռեսուլրսներ: ԱՄՆ ներմուծվող սննդամթերքը ենթարկվում է ՍԴՎ (Աննդի և դեղամիջոցների վարչության) ստուգման: ՍԴՎ-ն կարող է առգրավել ներմուծման համար առաջարկվող ապրանքները, եթե առաջումները չեն համապատասխանեն ԱՄՆ-ի պահանջներին:

ԱՄՆ-ի Ներքին անվտանգության վարչության Մաքսային և սահմանային պաշտպանությունը (ՍՍՊ) կիրառում է APHIS կանոնակարգերը մուտքի նավահանգիստներում: ՍՍՊ-ի գյուղատնտեսության ոլորտի մասնագետները ստուգում են ներմուծվող ապրանքների առաքումները և հավաստիանում են, որ անհրաժեշտ թույլտվությունները, բանջարեղենի և մրգերի ֆիտոսանիտարական սերտիֆիկատները ուղեկցում են յուրաքանչյուր առաքումը: Սանհիտարական և ֆիտոսանիտարական սերտիֆիկատներն իրենցից ներկայացնում են արտահանող երկրի կողմից տրված իրավական փաստաթղթերը, որոնք հաստատում են, որ առաքումը համապատասխանում է ԱՄՆ-ի բույսերի և կենդանիների առողջության ստանդարտներին:

Հայաստանի Հանրապետության արտադրողները կարող են ձեռք բերել ԱՄՆ արտահանման համար պահանջվող սերտիֆիկատները «ՆԱՐԵԿ» գիտահետազոտական ձեռնարկություն ՓԲԸ-ից, որը տեղական հաստատություն է:

Չնայած ԵԱՏՄ-ին անդամակցելուն՝ Հայաստանը պահպանել է Վրաստանի հետ ազատ առևտորի համաձայնագիրը կիրառելու իրավունքը: Առևտորային ուղղվածության տարբերության առանցքային ոլորտներից մեկն այն է, որ Վրաստանը և Հայաստանը կը նույն արտադրանքի ստանդարտների և արտադրանքի անվտանգության համակարգերի հետ կապված տարբեր ուղիներ երկարաժամկետ հեռանկարում: Վրաստանը կմիանա ԵՄ համակարգին, իսկ Հայաստանը կկիրարի ԵԱՏՄ-ի կանոնակարգերը: Արդյունքում, կանոնակարգերի և ստանդարտների հետ համապատասխանությունն ապահովելու ծախսերը կարող են աճել Հայաստանից Վրաստան իրականացվող արտահանումների համար և հակառակը, քանի որ կպահանջվեն լրացուցիչ և հնարավոր է թանկ թեստեր, մասնավորապես՝ գյուղատնտեսական սննդամթերքի համար:

## Դայաստամը և օրգանական արտադրանքը

Տեղական արտադրողները հնարավորություն ունեն ստանալ «Եկոգլոբ» օրգանական սերտիֆիկացման մարմնի կողմից տրամադրվող օրգանական արտադրանքի սերտիֆիկատները, որն աջակցում է տեղական օրգանական շուկաների զարգացմանը և մուտքի հնարավորություն է տալիս համաշխարհային շուկաներ: Կազմակերպությունն իրականացնում է սերտիֆիկացում հետևյալ ոլորտներում:

- Գյուղատնտեսական արտադրություն (բուսաբուծություն, անասնապահություն, մեղվաբուծություն, վայրի բույսերի հավաք),
- Գյուղատնտեսական արտադրանքի վերամշակում,
- Գյուղատնտեսական արտադրանքի արտահանում (ներմուծում), կարգավորում/առևտուր:

Կազմակերպությունը սերտիֆիկատները տրամադրում է հետևյալ ստանդարտների համաձայն:

- EU Regulations 834/2007, 889/2008 և 1235/2008 համարժեք
- SWISS Organic Farming Ordinance equivalence/ Շվեյցարիայի օրգանական գյուղատնտեսության օրինակարգի համարժեք
- USDA NOP 7 CFR 205 (գործում է ԱՄՆ-ի և Կանադայի համար)
- «Եկոգլոբ»-ի «Գրին Կովկաս» մասնավոր օրգանական ստանդարտ
- WHO/FAO Codex Alimentarius


## 4.4 Ուսաստանի շուկայի համառոտ վերլուծություն

### 4.4.1 Կերամշակված բանջարեղենի և կարտոֆիլի հիմնական տեսակները

Ուսաստանում արտադրվող վերամշակված բանջարեղենի և կարտոֆիլի հիմնական տեսակներն են՝

- 1) Բանջարեղեն և սունկ՝ պահածոյացված առանց քացախի կամ քացախաթթվի հավելման,
- 2) Բանջարեղեն և սունկ՝ պահածոյացված քացախի կամ քացախաթթվի հավելմամբ,
- 3) Սառեցրած միրգ և բանջարեղեն,
- 4) Վերամշակված և պահածոյացված կարտոֆիլ:

**Վերամշակված բանջարեղենի տեղական արտադրությունը**




*Աղյուր՝ Ռ-ՊՎԴԸ*

2013-2016թթ. ընկած ժամանակաշրջանում առաջին երկու տեսակների ընդհանուր արտադրությունն աճել էր 12% ԲՄՏԱՏ-ով: 2016թ-ին գրանցված քացախի կամ քացախաթթվի հավելմամբ և առանց հավելման պահածոյացված բանջարեղենի և սնկի արտադրությունը 1.7%-ով ցածր էր 2015թ. ցուցանիշից: Նվազումը պայմանավորված էր քացախի կամ քացախաթթվի հավելմամբ պահածոյացված բանջարեղենի և սնկի արտադրության ծավալի 20.9% կրճատումով՝ նախորդ տարվա համեմատ:

Արտադրության ծավալի տեսանկյունից առանց քացախի կամ քացախաթթվի հավելման պահածոյացված բանջարեղենին և սնկին բաժին էր ընկնում շուկայի ամենամեծ մասնաբաժինը՝ 75%, որին հաջորդում էին քացախի կամ քացախաթթվի հավելմամբ պահածոյացված բանջարեղենը և սունկը՝ 25% մասնաբաժինով, որոնց արտադրությունը կազմում էր համապատասխանաբար 1,316 միլիոն և 431 միլիոն պահածոյի տուփ:

### **Սառեցրած միջոց եւ բանջարեղեն**




*Աղյուսք՝ ՌԴՎՀԸ*

2013-2015թթ. ընկած ժամանակաշրջանում վերամշակված և պահածոյացված կարտոֆիլի բանջարեղենի և մրգի արտադրությունն աճել էր 11% ԲՄՏԱՏ-ով, իսկ նախորդ տարվա համեմատ արտադրության աճը կազմել էր 21%:

2013-2015թթ. ընկած ժամանակաշրջանում վերամշակված և պահածոյացված կարտոֆիլի արտադրության ծավալը նվազել էր 7.8% ԲՄՏԱՏ-ով, մինչդեռ 2015թ-ին նախորդ տարվա ցուցանիշի համեմատ գրանցվել էր 8.2% աճ\*:

2015թ-ին վերամշակված և պահածոյացված կարտոֆիլի արտադրության ծավալը կազմել էր 159 հազար տոննա, որը 2014թ-ին գրանցված երկրորդ ամենացած ցուցանիշն էր 2013-2015թթ. ընկած ժամանակաշրջանի համար:

### **Վերամշակված բանջարեղենի առևտուրի դինամիկան Ուսուաստանում**



*Աղյուսք՝ Trade Map*

\* Նշում՝ Վերամշակված և պահածոյացված կարտոֆիլի արտադրության 2016թ. տվյալները հասանելի չեն:

Ուսուաստանում վերամշակված բանջարեղենի և կարտոֆիլի արտադրությանը վերաբերող 2010-2016թթ. ընկած ժամանակաշրջանն ընդգրկող նախորդ ժամանակաշրջանների տվյալները ներակայացված են Հավելված 18-ում:

2013-2016թթ. ընկած ժամանակաշրջանում վերամշակված բանջարեղենի առևտուրի դինամիկայի հետ կապված գրանցվել էին եական բարելավումներ՝ պայմանավորված արտահանումների աճով և ներմուծումների նվազումով:

2013-2016թթ. ընկած ուսումնասիրվող ժամանակաշրջանում ԱՄՆ դոլարով արտահայտված ներմուծման արժեքը նվազել էր 13% ԲՄՏԱՏ-ով, իսկ ԱՄՆ դոլարով արտահայտված արտահանման արժեքն աճել էր 19%-ով: 2016թ-ին զուտ առևտուրի


ցուցանիշը բարելավվել էր գրեթե երկու անգամ նախորդ տարվա համեմատ՝ 105,588 հազար ԱՄՆ դոլարով:

#### **4.4.2 Վերամշակված բանջարեղենի ներմուծում**

2016թ-ին Ռուսաստանում վերամշակված բանջարեղենի ներմուծման արժեքը նվազել էր մինչև 457,600 հազար ԱՄՆ դոլար (մոտ 558 հազար տոննա), որը 9%-ով ցածր էր նախորդ տարվա ցուցանիշից: Սա 2013թ-ից հետո գրանցված ամենացածր ցուցանիշն էր:

Վերամշակված բանջարեղենի հիմնական տեսակները, որոնք ազդեցություն ունեին ներմուծման նվազման վրա 2016թ-ին, պահածոյացված բանջարեղենն ու սառեցրած բանջարեղենն էին, որոնց բաժին էին ընկենում վերամշակված բանջարեղենի ներմուծման արժեքի համապատասխանաբար 69.1% և 10.8% 2016թ-ին: Մասնավորապես պահածոյացված բանջարեղենի ներմուծման արժեքը նվազել էր 6.4%-ով՝ կազմելով 316,133 հազար ԱՄՆ դոլար (405,718 տոննա), իսկ սառեցրած բանջարեղենի ներմուծման արժեքը նվազել էր 29.6%-ով՝ կազմելով 49,602 հազար ԱՄՆ դոլար (81,338 տոննա):

**Ռուսաստանի վերամշակված բանջարեղենի արժեքի բացվածքը, 2016**



Վերամշակված բանջարեղենի ներմուծման արժեքի նվազումը հիմնականում պայմանավորված էր պահածոյացված բանջարեղենի՝ մասնավորապես, լոլիկի, վարունգի և մանրավարունգի, ինչպես նաև սառեցրած բանջարեղենի ներմուծման արժեքի նվազմամբ: Վերամշակված բանջարեղենի ներմուծման էական նվազման մանրամասն վերլուծությունը ներկայացված է Հավելված 19-ում:

**Չորացրած բանջարեղենի երկու հիմնական տեսակներն են՝**

- ✓ Չորացրած բանջարեղենը և բանջարեղենի խառնուրդները՝ ամբողջական, կտրատված, շերտերի տեսքով, մանրատված կամ փոշով տեսքով, բայց որևէ այլ եղանակով չպատրաստված (բացառությամբ սոխի, սնկի և գետնասնկի, չխառնած), որոնց բաժին էր ընկենում չորացրած բանջարեղենի ընդհանուր ներմուծման արժեքի 49%-ը:


- ✓ Չորացրած կեղևահանած լոբին (*Phaseolus vulgaris*) կճեպով կամ առանց կճեպի, մանրատված կամ չմանրատված, որին բաժին էր ընկնում չորացրած բանջարեղենի ընդհանուր ներմուծման արժեքի 20%-ը:

2016թ-ին չորացրած բանջարեղենին բաժին էր ընկնում վերամշակված բանջարեղենի ընդհանուր ներմուծման արժեքի երկրորդ ամենամեծ մասնաբաժինը՝ 17.1%-ի չափով, և գրանցվել էր չորացրած բանջարեղենի ներմուծման 1% աճ կազմելով 78,119 հազար ԱՄՆ դոլար (57,453 տոննա):

**Տոմատային կետչուպի և տոմատային այլ սոուսների ներմուծման արժեքը կազմում էր վերամշակված բանջարեղենի ընդհանուր ներմուծման արժեքի 3%-ը, որը 2016թ-ին նվազել էր 9.2%-ով՝ կազմելով 13,747 հազար ԱՄՆ դոլար (13,552 տոննա)՝ ի համեմատություն 2015թ:**

Վերամշակված բանջարեղենի ներմուծման ոլորտում Ռուսաստանի կարևոր գործընկերներից մեկը՝ Զինաստանն էր: 2016թ-ին այս երկրին բաժին էին ընկնում պահածոյացված, չորացրած և սառեցրած բանջարեղենի ներմուծումների ամենամեծ մասնաբաժինները: Ռուսաստանի ներմուծումների արժեքի կառուցվածքն ըստ երկների առավել մանրամասն ներկայացված է Հավելված 20-ում:

#### Ներմուծում Հայաստանից, արժեք




**2016թ-ին Հայաստանից Ռուսաստանի հրականացվող վերամշակված բանջարեղենի ներմուծումները կազմել էին 5,459 հազար ԱՄՆ դոլար (5,423 տոննա): Ի համեմատություն 2016թ՝ Հայաստանից վերամշակված բանջարեղենի ներմուծումն աճել էր թե՛ արժեքի և թե՛ ծավալի տեսանկյունից՝ կազմելով համախատախանաբար 62.6% և 62.7%:**

Աճը հիմնականում պայմանավորված էր նախորդ տարվա համեմատ պահածոյացված բանջարեղենի ներմուծման արժեքի 60.6% աճով՝ կազմելով 5,160 հազար ԱՄՆ դոլար (5,112 տոննա) 2016թ-ին:

#### **4.4.3 Վերամշակված կարտոֆիլի ներմուծում**

2013-2016թթ. ընկած ժամանակաշրջանում վերամշակված կարտոֆիլի ընդհանուր ներմուծման արժեքը աճել էր 3% ԲՄՏԱՏ-ով: 2016թ-ին ներմուծման արժեքը նախորդ տարվա համեմատ աճել էր 12%-ով՝ կազմելով 109,281 հազար ԱՄՆ դոլար (109,519 տոննա), որից 78%-ը բաժին էր ընկնում սառեցրած կարտոֆիլին, իսկ 22%-ը՝ ոչ սառեցրածին:



Վերամշակված կարտոֆիլի ներմուծման արժեքի 80% ապահովում էին Լեհաստանը, Նիդերլանդները և Ուկրաինան, որոնց մասնաբաժինները վերամշակված կարտոֆիլի ընդհանուր ներմուծման արժեքում կազմում էին համապատասխանաբար 35.2%, 34.5% և 10.1%:

#### **4.4.4 Վերամշակված բանջարեղենի արտահանում**

2016թ-ին Ռուսաստանից վերամշակված բանջարեղենի արտահանման արժեքը աճել էր մինչև 276,545 հազար ԱՄՆ դոլար (մոտ 774,953 տոննա), որը 29.2%-ով բարձր էր նախորդ տարվա ցուցանիշից: Սա 2013թ-ից հետո գրանցված ամենաբարձր ցուցանիշն էր:

2016թ-ին գրանցված աճը հիմնականում պայմանավորված էր պահածոյացված և չորացրած բանջարեղենի արտահանման 31.9% և 28.5% աճով՝ կազմելով համապատասխանաբար 31,373 հազար ԱՄՆ դոլար (31,995 տոննա) և 219,946 հազար ԱՄՆ դոլար (723,762 տոննա): Այս երկու տեսակին բաժին էին ընկնում Ռուսաստանից արտահանվող վերամշակված բանջարեղենի ընդհանուր արտահանման արժեքի համապատասխանաբար 11.3%-ը և 79.5%-ը: Սառեցրած բանջարեղենի արտահանման արժեքը, որը կազմում էր ընդհանուր արտահանման արժեքի 3.4%-ը, կտրուկ աճել էր մոտ 142%-ով՝ մինչև 9,207 հազար ԱՄՆ դոլար (3,837 տոննա):

**Չորացրած կեղևահանած ոլորին (Pisum sativum)` կճեպով կամ առանց կճեպի, մանրատված կամ չմանրատված, բաժին էր ընկնուն չորացրած բանջարեղենի ընդհանուր արտահանման 90.8% ամենամեծ մասնաբաժինը, կազմելով 199,174 հազար ԱՄՆ դոլար (մոտ 702,002 տոննա) 2016թ-ին, որը 23.9%-ով բարձր էր 2015թ. գրանցված ցուցանիշից:**

Ստորև ներկայացված են պահածոյացված բանջարեղենի այն հիմնական տեսակները, որոնք խթանում էին վերամշակված բանջարեղենի արտահանման արժեքի աճը:


- ✓ Ոլոր (Pisum Sativum)` պատրաստված կամ պահածոյացված առանց քացախի կամ քացախաթթվի հավելման (բացառությամբ սառեցրածի) – 101% աճ նախորդ տարվա համեմատ արժեքի տեսանկյունից՝ կազմելով 10,000 հազար ԱՄՆ դոլար (12,220 տոննա),
- ✓ Բանջարեղեն և բանջարեղենի խառնուրդներ՝ պատրաստված կամ պահածոյացված առանց քացախի հավելման, չսառեցրած – 98.1% աճ նախորդ տարվա համեմատ արժեքի տեսանկյունից՝ կազմելով 4,489 հազար ԱՄՆ դոլար (5,286 տոննա):

2016թ-ին սառեցրած բանջարեղենի արտահանման արժեքի 88.5%-ը բաժին էր ընկնուն բանջարեղենին՝ հում կամ պատրաստված՝ շղթեխաշելով կամ եռացող ջրի մեջ եփելով, սառեցրած։ Վերամշակված բանջարեղենի արտահանման էական աճն առավել մանրամասն ներկայացված է Հավելված 21-ում։


2016թ-ին տոմատային կետչուափի և տոմատային այլ սոուսների արտահանման արժեքն աճել էր 4.4%-ով՝ կազմելով 15,956 հազար ԱՄՆ դոլար (15,359 տոննա)՝ ի համեմատություն 2015թ.։

2016թ-ին Ռուսաստանից իրականացվող արտահանումների արժեքի կառուցվածքն ըստ երկրների հետևյալն էր.

- ✓ Պահածոյացված բանջարեղենի հիմնական ներմուծողներն էին՝ Ղազախստանը (31.7%), Բելառուսը (21.2%) և Ուկրաինան (17.5%),
- ✓ Չորացրած բանջարեղենի հիմնական ներմուծողներն էին՝ Թուրքիան (49.5%), Հնդկաստանը (11.1%) և Լատվիան (7.2%),
- ✓ Սառեցրած բանջարեղենի հիմնական ներմուծողներն էին՝ Լիտվան (30.7%), Իտալիան (12.7%) և Սերբիան (12.3%),



- ✓ Տոմատային կետչուայի և տոնդատային այլ սոուսների հիմնական ներմուծողներն են՝ Ղազախստանը (35.3%), Բելառուսը (24.3%) և Ադրբեյջանը (9.2%):




**2016թ-ին Ռուսաստանից Հայաստան իրականացվող վերամշակված բանջարեղենի արտահանումները կազմել էին 4,245 հազար ԱՄՆ դոլար (3,730 տոննա): Ի համեմատություն 2016թ.՝ Հայաստան վերամշակված բանջարեղենի արտահանումն աճել էր թե՛ արժեքի և թե՛ ծավալի տեսանկյունից՝ կազմելով համախատասխանաբար 13.8% և 29.3%:**

Աճը հիմնականում պայմանավորված էր նախորդ տարվա համեմատ չորացրած բանջարեղենի արտահանման արժեքի 52.4% աճով՝ կազմելով 1,373 հազար ԱՄՆ դոլար (2,120 տոննա) 2016թ-ին:

#### **4.4.5 Վերամշակված կարտոֆիլի արտահանում**

2013-2016թթ. ընկած ժամանակաշրջանում վերամշակված կարտոֆիլի արտահանման արժեքը նվազել էր 15.1% ԲԱՏԱՏ-ով:



**2016թ-ին վերամշակված կարտոֆիլի արտահանման արժեքը նվազել էր 7.5%-ով՝ կազմելով 42,643 հազար ԱՄՆ դոլար (17,365 տոննա), որից 96.2%-ը բաժին էր ընկնում չսառեցրած կարտոֆիլին, իսկ մնացած 3.8%-ը՝ սառեցրածին:**

Վերամշակված կարտոֆիլի արտահանման արժեքի 74.8%-ն ապահովում են Ղազախստանը, Բելառուսը և Ուկրաինան, որոնց մասնաբաժինները կազմում էին համապատասխանաբար 34.4%, 32.3% և 8.1%:

#### **4.4.6 Վերամշակված բանջարեղենի սպառում և վաճառք**

2013-2016թթ. ընկած ժամանակաշրջանում վերամշակված բանջարեղենի ընդիանուր վաճառքը ծավալի տեսանկյունից աճել էր 0.9%-ով ԲՄՏԱՏ-ով, իսկ արժեքի տեսանկյունից նվազել էր 9.5% ԲՄՏԱՏ-ով:

Ի համեմատություն նախորդ տարվա՝ 2016թ-ին վերամշակված բանջարեղենի ընդիանուր վաճառքի արժեքն աճել էր 1.5%, կազմելով 1,953 միլիոն ԱՄՆ դոլար (730 հազար տոննա), իսկ ռուբլու արտահայտմամբ գրացվել էր 7.4% աճ:

2016թ-ին վերամշակված բանջարեղենի վաճառքն՝ արտահայտված ռուբլով, աճել էր, որը հիմնականում պայմանավորված էր Երկարաժամկետ պահպանման համար պիտանի բանջարեղենի ավելացող պահանջարկով, որի վաճառքի արժեքը նախորդ տարվա համեմատ աճել էր 11.7%-ով՝ ռուբլու արտահայտմամբ<sup>13</sup>: Եվ հակառակը, վերամշակված բանջարեղենի վաճառքի աճը մասնակիորեն փոխադարձ էր սառեցրած բանջարեղենի վաճառքի 4.1% նվազումը՝ ռուբլու արտահայտմամբ, նախորդ տարվա համեմատ:


Արժեքի տեսանկյունից Երկարաժամկետ պահպանման համար պիտանի բանջարեղենի վաճառքը կազմում էր վերամշակված բանջարեղենի ընդիանուր վաճառքի 76%-ը, մնացած 24%-ը բաժին էր ընկնում սառեցրած բանջարեղենի վաճառքին:

Երկարաժամկետ պահպանման համար պիտանի և սառեցրած բանջարեղենին վերաբերող նախորդ ժամանակաշրջանների տվյալները և աճի տեմպերը ներկայացված են Հավելված 22-ում:

Երկարաժամկետ պահպանման համար պիտանի բանջարեղենի (բացառությամբ լոլիկի և լոբու) վաճառքը կազմում էր վերամշակված բանջարեղենի ընդիանուր վաճառքի

Վաճառքի արժեքում Երկարաժամկետ պահպանման համար պիտանի բանջարեղենի (բացառությամբ լոլիկի և լոբու) մասնաբաժինը կազմում էր 70%, Երկարաժամկետ պահպանման համար պիտանի լոբունը՝ 3.7%:

**Վերամշակված բանջարեղենի վաճառքի դինամիկան  
Շուկաստանում**




<sup>13</sup> Յուրաքանչյուր տարվա արտարժույթի փոխարժեքը հաշվարկվում է որպես համապատասխան տարվա միջին փոխարժեք:

**Բանջարեղենի այս տեսակի վաճառքին էականորեն նպաստել էր բարձր բանջարեղենի շուկայում դիտվող ակտիվության նվազումը:** Ներմուծման էմբարգոյի պատճառով, բարձր բանջարեղենի գինն աճել էր՝ ստիպելով սպառողներին փոխարենն օգտագործել երկարաժամկետ պահպանման համար պիտանի բանջարեղենը: 2016թ-ին երկարաժամկետ պահպանման համար պիտանի լոբու և լոլիկի վաճառքի արժեքը նվազել էր

4.0%-ով և 1.6%-ով, մինչեւ այլ բանջարեղենի (բացառությամբ լոլիկի և լոբու) վաճառքի արժեքն աճել էր 4.5%-ով, կազմելով հանապատասխանաբար 54 միլիոն ԱՄՆ դոլար, 389 միլիոն ԱՄՆ դոլար և 1,034 միլիոն ԱՄՆ դոլար՝ ի համեմատություն նախորդ տարվա:


**Սառեցրած բանջարեղենի ապրանքատեսակները մեծապես կախված են ներկուղու հումքից և չեն արտադրվում բավարար քանակությամբ տեղական արտադրողների կողմից:** Այդ իսկ պատճառով, սառեցրած վերամշակված բանջարեղենի ապրանքատեսակների գինը ենթարկվում է փոխարժեքի տատանումներին: Փաստորեն, որւրաւ արժեզրկման պատճառով, 2016թ-ին սառեցրած վերամշակված բանջարեղենի միավորի միջին գինն աճել էր 6%-ով՝ ի համեմատություն 2015թ.:

#### Սառեցված բանջարեղենի վաճառք ըստ տեսակի, արժեքի բացվածքը, 2016



*Աղյուսակ՝ Euromonitor International*

#### Երկարաժամկետ պահպանման համար պիտանի բանջարեղենի վաճառքի ծավալի դիմացիկան



*Աղյուսակ՝ Euromonitor International*


**Սպառողի նախապատվությունը կարևոր գործոն է սառեցրած բանջարեղենի վաճառքի շուկայում:** Չնայած այն հանգամանքին, որ վիտամինները և հանքանյութերը հաճախ ավելի լավ են պահպանվում սառեցրած ապրանքատեսակներում, Ռուսաստանի սպառողները, որպես կանոն, խուսափում են սառեցրած ապրանքատեսակներ օգտագործելուց՝ գտնելով, որ սառեցրած ապրանքատեսակներն առողջ սննումն չեն համարվում:

Սպառողների հիմնական խումբը ներառում է խոշոր քաղաքների բնակիչներին, որոնք գնահատում են սննդի արագ պատրաստման հանգամանքը: Այնուամենայնիվ, սառեցրած բանջարեղենի սպառման հետ կապված հիմնական խոչընդոտը մնում է գինը:

#### **4.4.7 Վերամշակված կարտոֆիլի սպառում և վաճառք**

2013-2016թթ. ընկած ժամանակաշրջանում սառեցրած վերամշակված կարտոֆիլի վաճառքի արժեքը նվազել էր 12% ԲՄՏԱՏ-ով, կազմելով 30 միլիոն ԱՄՆ դոլար 2016թ-ին, իսկ ռուբլու արտահայտմամբ այն աճել էր 12.6% ԲՄՏԱՏ-ով նույն ժամանակաշրջանում: 2016թ-ին վաճառքի ծավալը նվազել էր մինչև նվազագույն ցուցանիշը՝ 8.6 հազար տոննան:

Ինչպես և սառեցրած բանջարեղենը, սառեցրած կարտոֆիլը գրեթե ամբողջովին բաղկացած է ներմուծված ապրանքներից (սառեցրած կարտոֆիլի վաճառքի դինամիկան 2011-2016թթ. համար ներկայացված Հավելված 22-ում):




#### **4.4.8 Մրցումակ միջավայր**

«Բոնյուել Կուրան» ՍՊԸ-ն իր «Բոնյուել» ապրանքանիշով եղել է առաջատարը վաճառքի արժեքի տեսանկյունից 2013-2016թթ. ընկած ժամանակաշրջանում: 2016թ-ին ընկերությունը պահպանել էր 10.5% ամենամեծ մասնաբաժինը մանրածախ շուկայում, նրան հաջորդում էին «Դյաղյա Վանյա Յոլդինգ»-ը (6.9%), «Վեգդա Փրոդաքթ» ՍՊԸ-ն (5.5%) և «ԱյսԲիթ» ՓԲԸ-ն (4.9%): «Բոնյուել» ապրանքանիշը ներկայացնում է երկարաժամկետ պահպաննամ համար պիտանի լորի և բանջարեղեն, ինչպես նաև սառեցրած վերամշակված բանջարեղեն:

«Եվրոմոնիտոր»-ի հետազոտությունների արդյունքները ցույց են տալիս, որ 2016թ-ին Ռուսաստանի վերամշակված մրգի և բանջարեղենի շուկայում գերակայում էին տեղական արտադրողները՝ չնայած «Բոնյուել Կուրան» ՍՊԸ-ի գրադեցրած առաջատար դիրքի: Ավելի փոքր տարածաշրջանային մասնակիցներն առաջարկում են վերամշակված բանջարեղենի առանձին տեսակներ համեմատաբար ցածր գներով և հաստատուն դիրք են գրադեցնում շուկայում:

Ստորև բերվող պատկերում ներկայացված են հիմնական վերամշակող ընկերությունների համապատասխան մասնաբաժիններն ընդհանուր մանրածախ վաճառքում

**Ընկերությունների մասսարաժինները վերամշակված բանջարեղենի և մրգի մանրածախ վաճառք  
արժեքում, %, 2016թ.**




Աղյուր՝ Euromonitor International

Յիմք ընդունելով բանջարեղեն և միրգ վերամշակող ընկերությունների ապրանքանիշերի մասնաբաժիններին տրված վարկանիշները՝ «Բոնյութել Կուրան» ՍՊԸ-ի «Բոնյութել» ապրանքանիշին բաժին էր ընկնում մանրածախ վաճառքի ընդհանուր արժեքի 10.5%-ը, որին հաջորդում էին «Վեգդա Փրոդաքթ» ՍՊԸ-ն՝ «Վեգդա Փրոդաքթ» ապրանքանիշով (5.5%), «ԱյսԲիթ» ՓԲԸ-ն՝ «4 սեզոն» ապրանքանիշով (4.9%) և «Պոմիդոր Թիոն» ՍՊԸ-ն՝ «Օգորոդնիկով» ապրանքանիշով (4.2%):

Ստորև բերվող պատկերում ներկայացված են վերամշակված բանջարեղենի հիմնական ապրանքանիշերի համապատասխան մասնաբաժիններն ընդհանուր մանրածախ վաճառքում:

**Ապրանքանիշերի մասսարաժինները վերամշակված բանջարեղենի և մրգի մանրածախ վաճառք  
արժեքում, %, 2016թ.**



Աղյուր՝ Euromonitor International

Հետազոտությունների արդյունքների համաձայն՝ որոշ ընկերությունների մասնավոր ապրանքանիշերը, մասնավորապես, «Դիկսի Գրուպ» ՍՊԸ-ի «Դ»-ն, «Աշան» ՍՊԸ-ի «Կամփի դեն»-ը և «Օ'KEY Գրուպ»-ի «Տո չոտ նադո»-ն, մեծ զարգացում են ունեցել վերամշակված մրգի և բանջարեղենի շուկայում ցածր գների և ժամանակակից մանրածախ նթերային խանութների շուկա ներթափանցման շնորհիվ: 2016թ-ին Ռուսաստանում մասնավոր ապրանքանիշերին բաժին էր ընկել վերամշակված մրգի և բանջարեղենի ընդհանուր վաճառքի արժեքի 7%-ը:

| Վերամշակված մրգի և բանջարեղենի մանրածախ վաճառքի<br>արժեքի բաշխումը, 2016թ. |        |
|----------------------------------------------------------------------------|--------|
| Խանութի միջոցով իրականացվող մանրածախ<br>առևտուր                            | 99.60% |
| - Մանրածախ մթերային խանութներ                                              | 99.3%  |
| -- Ժամանակակից մանրածախ մթերային խանութներ                                 | 74.9%  |
| -- Ամենօրյա պահանջարկի ապրանքների                                          |        |
| Խանութներ                                                                  | 24.1%  |
| -- Քիաերմարկետներ                                                          | 16.4%  |
| -- Սուպերմարկետներ                                                         | 34.4%  |
| -- Ավանդական մանրածախ մթերային խանութներ                                   | 25.1%  |
| -- Ամեկախ փոքր մթերային խանութներ                                          | 16.9%  |
| -- Այլ մթերային խանութներ                                                  | 7.6%   |
| - Համակցված մանրածախ վաճառքի կետեր                                         | 0.3%   |
| Խանութից դուրս իրականացվող մանրածախ<br>առևտուր                             | 0.6%   |
| - Մանրածախ առևտուր ինտերնետի միջոցով                                       | 0.4%   |

Աղյուրը՝ Euromonitor International


Ինչպես ներկայացված է ձախ կողմում բերված աղյուսակում, վերամշակված մրգի և բանջարեղենի վաճառքի գերակշիռ մասն ապահովում էին մանրածախ մթերային խանութները (99.3%), իսկ վաճառքի աննշան մասը բաժին էր ընկույն խանութից դուրս իրականացվող մանրածախ առևտուրին (0.6%)՝ հիմնականուն ինտերնետի միջոցով (0.1%):

#### **4.4.9 Վերամշակված բանջարեղենի վաճառքի կանխատեսումներ**

Կանխատեսումների համաձայն՝ 2016-2021թթ. ընկած ժամանակաշրջանում վերամշակված բանջարեղենի վաճառքի ծավալը կազի 1.9% ԲՄՏԱՏ-ով:

Մասնավորապես, ակնկալվում է, որ պակաս զարգացում ունեցող պահածոյացված և սառեցրած բանջարեղենը կցուցաբերի կայուն աճ, սառեցրած բանջարեղենի վաճառքը կազի ավելի արագ՝ 3.3% ԲՄՏԱՏ-ով՝ ի համեմատություն երկարաժամկետ պահպանման համար պիտանի բանջարեղենի վաճառքի աճի 1.4% ԲՄՏԱՏ-ով: Ակնկալվում է, որ վաճառքի ընդհանուր ծավալը կկազմի 802 հազար տոննա 2021թ-ին, որի 78%-ը բաժին կընկնի երկարաժամկետ պահպանման համար պիտանի բանջարեղենի, իսկ մնացած 22%-ը՝ սառեցրած բանջարեղենի վաճառքին:


**Վերամշակված բանջարեղենի վաճառքի կանխատեսում**



*Սորյուրը՝ Euromonitor International*

Ուրբար տեսանկյունից ակնկալվում է ծավալի փոքր աճ և արժեքի փոքր նվազում արտահանումից կախում ունեցող բանջարեղենի վաճառքի հետ կապված, որը ենթադրվում է ազգային արժույթի կայունացման և միավորի գնի աճի արդյունքում, միևնույն ժամանակ կանխատեսվում է վերամշակված մրգի և բանջարեղենի այլ տեսակների էժանացում:

#### **4.4.10 Վերամշակված կարտոֆիլի վաճառքի կանխատեսումներ**



Կանխատեսվում է, որ 2016-2021թթ. ընկած ժամանակաշրջանում սառեցրած կարտոֆիլի վաճառքի արժեքը կազի 0.1% ԲՄՏԱՏ-ով, իսկ ծավալը՝ 3.9% ԲՄՏԱՏ-ով:

Ակնկալվում է, որ վաճառքի արժեքը կնվազի 2%-ով՝ 2017թ-ին և 0.4%-ով՝ 2018թ-ին, իսկ այնուհետև կազի մոտ

Այնուամենայնիվ, ծավալի տեսանկյունից սառեցրած կարտոֆիլի վաճառքն ըստ կանխատեսումների կցուցաբերի աճի միտում ժամանակաշրջանի ընթացքում:

Վերամշակված բանջարեղենի և կարտոֆիլի վաճառքի (թե՛ ծավալի և թե՛ արժեքի) և տեսակների կտրվածքով ԲՄՏԱՏ-ին վերաբերող կանխատեսումները 2016-2021թթ. ընկած ժամանակաշրջանի համար ներկայացված են Հավելված 23-ում:


#### **4.5 Վրաստանի շուկայի համարոտ վերլուծություն**

##### **4.5.1 Վերամշակված բանջարեղենի և կարտոֆիլի հիմնական տեսակները**

Վրաստանում արտադրվող վերամշակված բանջարեղենի և կարտոֆիլի հիմնական տեսակներն են՝ քացախի կամ քացախաթթվի հավելմամբ պահծոյացված բանջարեղենը և վերամշակված կարտոֆիլը:


2013-2015թթ. ընկած ժամանակաշրջանում պահծոյացված բանջարեղենի արտադրության ծավալն աճել էր՝ կազմելով 1,933.2 տոննա 2015թ-ին: 2016թ-ին արտադրության ծավալը նվազել էր 38.2%-ով, կազմելով 1,194.7 տոննա, ինչը պայմանավորված էր թարմ բանջարեղենի արտադրության ծավալի նվազմամբ 10.6 հազար տոննայով 2016թ-ին:

##### **Պահծոյացված բանջարեղենի տեղական արտադրություն**



Այնուամենայնիվ, արժեքի տեսանկյունից 2014թ-ին պահածոյացված բանջարեղենի արտադրությունը նախորդ տարվա համեմատ նվազել էր 44.1%-ով (նախորդ տարվա համեմատ նվազումն արտահայտված լարիով կազմել էր 40.6%), ինչը վկայում էր այն մասին, որ պահածոյացված բանջարեղենի վաճառքի գների նվազել էին ուսումնասիրվող ժամանակաշրջանի ընթացքում<sup>14</sup>:

2013-2016թթ. ընկած ժամանակաշրջանում պահածոյացված բանջարեղենի արտադրությունը նվազել էր 5.3% ԲՄՏԱՏ-ով ծավալի տեսանկյունից և 23.4% ԲՄՏԱՏ-ով՝ ԱՄՆ դոլարով արտահայտված արժեքի տեսանկյունից:



*Աղյուրը՝ Trade Map*

Ժամանակաշրջանում վերամշակված բանջարեղենի առևտորի դինամիկայի հետ կապված գրանցվել էին աստիճանական բարելավումներ՝ պայմանավորված արտահանումների աճով և ներմուծումների նվազումով:

2013-2016թթ. ընկած ուսումնասիրվող ժամանակաշրջանում ԱՄՆ դոլարով արտահայտված ներմուծման արժեքը նվազել էր 2.3% ԲՄՏԱՏ-ով, իսկ ԱՄՆ դոլարով արտահայտված արտահանման արժեքը աճել էր 21.3%-ով նույն ժամանակաշրջանի ընթացքում: Այնուամենայնիվ, 2016թ-ին վերամշակված բանջարեղենի ներմուծման արժեքը գերազանցել էր արտահանման արժեքը 51 անգամ: Համապատասխանաբար, գրանցվել էր զուտ առևտորի բացասական արժեք՝ կազմելով 18,965 հազար ԱՄՆ դոլար 2016թ-ին:

#### **4.5.2 Վերամշակված բանջարեղենի ներմուծում**


2016թ-ին Վրաստանում վերամշակված բանջարեղենի ներմուծման արժեքը նվազել էր մինչև 19,342 հազար ԱՄՆ դոլար (21,892 տոննա), որը 6.6%-ով ցածր էր նախորդ տարվա ցուցանիշից:

<sup>14</sup> Յուրաքանչյուր տարվա արտարժույթի փոխարժեքը հաշվարկվում է որպես համապատասխան տարվա միջին փոխարժեք:

Հարկ է նշել, որ Վրաստանում արտադրվող վերամշակված կարտոֆիլի հիմնական տեսակը կարտոֆիլի չիպսերն են: Ներկայումս Վրաստանում գործում է միայն երկու գործարան, հետևաբար, այս ապրանքատեսակի շուկան մենաշնորհային է: Արտադրության ծավալի և արժեքի վերաբերյալ տեղեկատվությունը գաղտնի է և չի տրամադրվել Վրաստանի Ազգային վիճակագրական գրասենյակի (ՎԱՎԳ) կողմից: 2013-2016թթ. ընկած ժամանակաշրջանում վերամշակված բանջարեղենի առևտորի դինամիկայի հետ կապված գրանցվել էին աստիճանական բարելավումներ՝ պայմանավորված արտահանումների աճով և ներմուծումների նվազումով:

Վերամշակված բանջարեղենի միակ տեսակը, որն ազդեցություն ուներ ներմուծման նվազման վրա 2016թ-ին, պահածոյացված բանջարեղենն էր: Բացի այդ, 2016թ-ին այս տեսակին բաժին էր ընկնում վերամշակված բանջարեղենի ներմուծման արժեքի 50%-ը: Պահածոյացված բանջարեղենի ներմուծման արժեքը նվազել էր 15.1%-ով՝ կազմելով 9,651 հազար ԱՄՆ դոլար (9,634 տոննա):

**Վրաստանի վերամշակված բանջարեղենի ներմուծման արժեքի բացվածքը, 2016**



*Աղյուրը՝ Trade Map*

Պահածոյացված բանջարեղենի ներմուծման նվազումը հիմնականում պայմանավորված էր լոլիկի, վարունգի և մանրավարունգի, սնկի և գետնասնկի ներմուծման արժեքի նվազմամբ, մասնավորապես՝

- ✓ առանց քացախի կամ քացախաթթվի հավելման պատրաստված կամ պահածոյացված (քացառությանը ամբողջական կամ կտրատված) լոլիկի ներմուծման արժեքը նվազել էր 16%-ով՝ կազմելով 5,038 հազար ԱՄՆ դոլար, 2016թ-ին այս ապրանքատեսակին բաժին էր ընկնում պահածոյացված բանջարեղենի ներմուծման արժեքի 52%-ը:
- ✓ քացախի կամ քացախաթթվի հավելմամբ պատրաստված կամ պահածոյացված վարունգի և մանրավարունգի ներմուծման արժեքը նվազել էր 47%-ով՝ կազմելով 848 հազար ԱՄՆ դոլար, 2016թ-ին այս ապրանքատեսակին բաժին էր ընկնում պահածոյացված բանջարեղենի ներմուծման արժեքի 9%-ը:
- ✓ առանց քացախի կամ քացախաթթվի հավելման պատրաստված կամ պահածոյացված (քացառությանը ամբողջական կամ կտրատված) սնկի և գետնասնկի ներմուծման արժեքը նվազել էր 31%-ով՝ կազմելով 471 հազար ԱՄՆ դոլար, 2016թ-ին այս ապրանքատեսակին բաժին էր ընկնում պահածոյացված բանջարեղենի ներմուծման արժեքի 5%-ը:

Պահածոյացված բանջարեղենի ներմուծման նվազումը կարող է բացատրվել 2015թ-ին գրանցված արտադրության մեծ ծավալով, որի արդյունքում կուտակվել էին 2016թ-ին օգտագործման ենթակա պաշարներ: Այդ իսկ պատճառով, 2016թ-ին պահածոյացված բանջարեղենի թե՛ արտադրության և թե՛ ներմուծման ծավալները նվազել էին:

Չորացրած բանջարեղենը, որին բաժին էր ընկում վերամշակված բանջարեղենի ընդհանուր ներմուծման արժեքի երկրորդ ամենախոչոր մասնաբաժինը՝ 33%-ի չափով, ներմուծման տեսանկյունից ցուցաբերել էր ոչ էական աճ 1%-ի չափով՝ կազմելով 6,367 հազար ԱՄՆ դոլար (9,178 տոննա) 2016թ-ին:

Սառեցրած բանջարեղենի հիմնական տեսակների արտահանման արժեքն աճել էր 2016թ-ին: Սառեցրած բանջարեղենի ընդհանուր ներմուծման արժեքն աճել էր 34.6%-ով՝ կազմելով 342 հազար ԱՄՆ դոլար (204 տոննա):


Վերամշակված բանջարեղենի ներմուծման դինամիկայի մանրամասն վերլուծությունը ներկայացված է Հավելված 24-ում:

Տոմատային կետչուայի և տոմատային այլ սոուսների ներմուծման արժեքը կազմում էր վերամշակված բանջարեղենի ընդհանուր ներմուծման արժեքի 15.4%-ը, որը 2016թ-ին աճել էր 7.6%-ով, կազմելով 2,982 հազար ԱՄՆ դոլար (2,876 տոննա)՝ ի համեմատություն 2015թ.:

Վերամշակված բանջարեղենի ներմուծման ոլորտում Վրաստանի կարևոր գործընկերներից մեկը Թուրքիան էր: 2016թ-ին այս երկրին բաժին էին ընկում պահածոյացված բանջարեղենի և վերամշակված բանջարեղենի ներմուծումների ամենամեծ մասնաբաժինները, չորացրած և սառեցրած բանջարեղենի ու տոմատային կետչուայի և տոմատային այլ սոուսների ներմուծումների ոլորտում այն գտնվում էր առաջատար երկների շարքում: 2016թ-ին Վրաստանի ներմուծման արժեքի կառուցվածքն ըստ երկների հետևյալն էր:

- ✓ **Պահածոյացված բանջարեղենի հիմնական մատակարարներն էին՝ Թուրքիան (41.5%), Իտալիան (11.9%) և Չինաստանը (11.6%),**
- ✓ **Չորացրած բանջարեղենի հիմնական մատակարարներն էին՝ Ուզբեկստանը (50.4%), Ղրղզստանը (26.9%) և Չինաստանը (7.8%),**
- ✓ **Սառեցրած բանջարեղենի հիմնական մատակարարներն էին՝ Լեհաստանը (27.5%), Թուրքիան (24.9%) և Գերմանիան (16.4%),**
- ✓ **Տոմատային կետչուայի և տոմատային այլ սոուսների հիմնական մատակարարներն էին՝ Ուկրաինան (43%), Ռուսաստանի Դաշնությունը (23.2%) և Թուրքիան (21.9%):**

### Հայաստանից ներմուծումների արժեքը, 2016թ.




*Աղյուսք՝ Trade Map*

19.5%-աճով՝ կազմելով 361 հազար ԱՄՆ դոլար (329 տոննա) 2016թ-ին: 2016թ-ին Հայաստանից սառեցրած բանջարեղեն չէր ներմուծվել, իսկ 2015թ-ին սառեցրած բանջարեղենի ներմուծման արժեքը կազմել էր 5,000 ԱՄՆ դոլար:

### 4.5.3 Վերամշակված կարտոֆիլի ներմուծում

2013-2016թթ. ընկած ժամանակաշրջանում վերամշակված կարտոֆիլի ԱՄՆ դոլարով արտահայտված ընդհանուր ներմուծման արժեքն աճել էր 1.3% ԲԱՏԱՏ-ով: 2016թ-ին ներմուծման արժեքն աճել էր գորեք 11%-ով՝ կազմելով 4,338 հազար ԱՄՆ դոլար (2,978 տոննա), որից 47.5%-ը բաժին էր ընկնում պահածոյացված կարտոֆիլին, իսկ 52.5%-ը՝ սառեցրածին: Վերամշակված կարտոֆիլը ներմուծվում էր հիմնականում Լեհաստանից, Ուկրաինայից և Թուրքիայից, որոնց մասնաբաժինները վերամշակված կարտոֆիլի ընդհանուր ներմուծման արժեքում կազմում էին համապատասխանաբար 29%, 19.8% և 17.3%:



*Աղյուսք՝ Trade Map*

#### **4.5.4 Վերամշակված բանջարեղենի արտահանում**

2016թ-ին Վրաստանից վերամշակված բանջարեղենի արտահանման արժեքն աճել էր 7.4%-ով՝ կազմելով 377 հազար ԱՄՆ դոլար (256 տոննա):


2016թ-ին գրանցված աճը հիմնականում պայմանավորված էր պահածոյացված բանջարեղենի արտահանման **34.1%** աճով՝ կազմելով 220 հազար ԱՄՆ դոլար (162 տոննա): Արտահանվող այս հիմնական ապրանքատեսակին բաժին էր ընկնում ընդհանուր արտահանման արժեքի **58.4%-ը**:

**Տոմատային կետչուայի և տոմատային այլ սոուսների** արտահանման արժեքը, որոնց բաժին էր ընկնում ընդհանուր արտահանման արժեքի երկրորդ ամենախոշը՝ **մասնաբաժինը՝ 21.8%-ի** չափով, **2016թ-ին աճել էր 41.4%-ով՝ կազմելով 82 հազար ԱՄՆ դոլար (49 տոննա): Չորացրած և սառեցրած բանջարեղենի արտահանման արժեքները,** որոնց բաժին էր ընկնում ընդհանուր արտահանման արժեքի համապատասխանաբար **9.8%-ը** և **10.1%-ը, նվազել էին համապատասխանաբար 17.8%-ով և 54.8%-ով՝ կազմելով 37 հազար ԱՄՆ դոլար (24 տոննա) և 38 հազար ԱՄՆ դոլար (21 տոննա):**

Ստորև ներկայացված են պահածոյացված բանջարեղենի այն հիմնական տեսակները, որոնք խթանում էին վերամշակված բանջարեղենի արտահանման արժեքի աճը:

- ✓ Առանց քացախի կամ քացախաթթվի հավելման պատրաստված կամ պահածոյացված լոլիկ, որին 2016թ-ին բաժին էր ընկնում պահածոյացված

**Վրաստանի վերամշակված բանջարեղենի  
արտահանման արժեքը, 2016**



*Աղյուղ՝ Trade Map*

բանջարեղենի ընդհանուր արտահանման արժեքի **42.3%-ը՝ կազմելով 93 հազար ԱՄՆ դոլար (99 տոննա)**՝ ի համեմատություն 2015թ-ին բացակայող արտահանման:

- ✓ Առանց քացախի կամ քացախաթթվի հավելման պատրաստված կամ պահածոյացված բանջարեղենի կամ բանջարեղենի խառնուրդների արտահանումը, որոնց բաժին էր ընկնում պահածոյացված բանջարեղենի ընդհանուր արտահանման արժեքի **46.7%-ը**, աճել էր **46.7%-ով՝ կազմելով 66 հազար ԱՄՆ դոլար (29 տոննա) 2016թ-ին:**

Չորացրած բանջարեղենի արտահանման արժեքի նվազումը 2016թ-ին կախված էր հետևյալ տեսակների արտահանման արժեքի նվազումով:

- ✓ Ընդհանուր արտահանման արժեքի **60%-ը՝ կազմող չորացրած կեղևահանած լոբու (Phaseolus vulgaris), կճեպով կամ առանց կճեպի, մանրատված կամ չմանրատված, արտահանման արժեքը նվազել էր 21.4%-ով՝ կազմելով 22 հազար ԱՄՆ դոլար (22 տոննա):**

- ✓ Ընդհանուր արտահաննան արժեքի 17.8%-ը կազմող չորացրած կեղևահանած ոլոռի (*Risum sativum*), կճեպով կամ առանց կճեպի, մանրատված կամ չմանրատված, արտահաննան արժեքը նվազել էր և կազմել էր գրո 2016թ-ին:

Նվազումը մասնակիորեն փոխատուցվել էր չորացրած բանջարեղենի և բանջարեղենի խառնուրդների՝ ամբողջական, կտրատված, շերտերի տեսքով, մանրատված կամ փոշու տեսքով, բայց որևէ այլ եղանակով չպատրաստված, արժեքի 66.7% աճով, որը կազմել էր 15 հազար ԱՄՆ դոլար (2 տոննա): 2016թ-ին այս տեսակին բաժին էր ընկնում ընդհանուր արտահանման արժեքի մոտ 40%-ը:

Սառեցրած բանջարեղենի արտահանման արժեքի նվազման հիմնական պատճառը հում կամ պատրաստված՝ շղգեխաշելով կամ եռացող ջրի մեջ եփելով, սառեցրած բանջարեղենի արտահանման արժեքի նվազում էր 85.7%-ով, որը կազմել էր 12 հազար ԱՄՆ դոլար (7 տոննա) 2016թ-ին: Այս տեսակին բաժին էր ընկնում ընդհանուր արտահանման արժեքի 31.6%-ը:

2016թ-ին տոմատային կետչուայի և տոմատային այլ սոուսների արտահանման արժեքն աճել էր 41.4%-ով՝ կազմելով 82 հազար ԱՄՆ դոլար (49 տոննա):

2016թ-ին Վրաստանից իրականացվող արտահանումների արժեքի կառուցվածքն ըստ երկրների հետևյալն էր.


- ✓ Պահածոյացված բանջարեղենի հիմնական ներմուծողներն էին՝ Աղրբեջանը (40.5%), Ամերիկայի Միացյալ Նահանգները (23.6%) և Ռուսաստանի Դաշնությունը (20.9%),
- ✓ Չորացրած բանջարեղենի հիմնական ներմուծողներն էին՝ Աղրբեջանը (59.5%) և Ռուսաստանի Դաշնությունը (40.5%),
- ✓ Սառեցրած բանջարեղենի հիմնական ներմուծողներն էին՝ Ռուսաստանի Դաշնությունը (94.7%) և Թուրքիան (5.3%),
- ✓ Տոմատային կետչուայի և տոմատային այլ սոուսների հիմնական ներմուծողներն էին՝ Ռուսաստանի Դաշնությունը (39.0%), Չեխիայի Հանրապետությունը (22%) և Ամերիկայի Միացյալ Նահանգները (14.6%).

2016թ-ին վերամշակված բանջարեղենի շարքից Վրաստանից Հայաստան արտահանվում էր միայն պահածոյացված բանջարեղեն: Վերջինս նվազել էր 33.3%-ով՝ կազմելով 14 հազար ԱՄՆ դոլար (11 տոննա):

#### **4.5.5 Վերամշակված կարտոֆիլի արտահանում**

2016թ-ին, ի համեմատություն 2015թ., վերամշակված կարտոֆիլի արտահանման արժեքը աճել էր 7.1%-ով՝ կազմելով 15 հազար ԱՄՆ դոլար (5 տոննա): Բացի այդ, 2013թ-ին գրացված կարտոֆիլի արտահանման արժեքը հավասար էր 2016թ. նույն ցուցանիշին, այն դեպքում, եթե 2013թ-ին արտահանման ծավալը կազմել էր 10 տոննա՝ կրկնակի ավելի, քան 2016թ-ի արտահանման ծավալը:


#### **Վերամշակված կարտոֆիլի արտահանման դինամիկան**



**Իրանի համարական հանրապետությունը և Թուրքիան միակ երկրներին էին, որոնց բաժին էր ընկնում վերամշակված կարտոֆիլի ընդհանուր արտերի համապատասխանաբար 80%-ը և 20%-ը:**

#### **4.5.6 Վերամշակված բանջարեղենի սպառում և վաճառք**

##### **Վերամշակված բանջարեղենի վաճառքի դինամիկան Վրաստանում**



2013-2016թթ. ընկած ժամանակաշրջանում վերամշակված բանջարեղենի ընդհանուր վաճառքը կայում աճ էր ցուցաբերել թե՛ ծավալի և թե՛ արժեքի տեսանկյունից՝ համապատասխանաբար 3.9% ԲՄՏԱՏ-ով և 9.7% ԲՄՏԱՏ-ով՝ արտահայտված լարիով, մինչդեռ ԱՄՆ դոլարի արտահայտմամբ ընդհանուր վաճառքի արժեքը նվազել էր 2.5%:

**ԲՄՏԱՏ-ով:** Սա պայմանավորված էր լարի/ԱՄՆ դոլար փոխարժեքի տատանումներով ուսումնասիրվող ժամանակաշրջանի ընթացքում:


2016թ-ին վերամշակված բանջարեղենի ընդհանուր վաճառքի արժեքը նվազել էր 9.3%-ով, կազմելով 15.2 միլիոն ԱՄՆ դոլար (6,687 տոննա), ի համեմատություն նախորդ տարվա, մինչդեռ լարիի արտահայտմանը վաճառքի արժեքը աճել էր 14%-ով. տարբերությունը հիմնականում պայմանավորված էր լարի/ԱՄՆ դոլար փոխարժեքի տատանումներով:

2016թ-ին Երկարաժամկետ պահպանման համար պիտանի բանջարեղենի վաճառքի արժեքի մասնաբաժինը վերամշակված բանջարեղենի ընդհանուր վաճառքի արժեքուն կազմում էր 99.4%, իսկ մնացած 0.6%-ը բաժին էր ընկնում սառեցրած բանջարեղենի վաճառքին: Երկարաժամկետ պահպանման համար պիտանի և սառեցրած բանջարեղենի նախորդ ժամանակաշրջանների վաճառքների տվյալները և աճի տեսնպերը ներկայացված են Հավելված 25-ում:

2016թ-ին Վրաստանում գրանցված վերամշակված բանջարեղենի վաճառքի աճը պայմանավորված էր Երկարաժամկետ պահպանման համար պիտանի բանջարեղենի ավելացող պահանջարկով, որի վաճառքի արժեքը նախորդ տարվա համեմատ աճել էր 9.4%-ով, կազմելով 15.1 միլիոն ԱՄՆ դոլար (6,669 տոննա), և աճել էր 14.1%-ով՝ լարիի արտահայտմամբ:

2013-2016թթ. ընկած ժամանակաշրջանում սառեցրած բանջարեղենի վաճառքի արժեքը մնացել էր անփոփոխ, տարեկան կազմելով 0.2 միլիոն լարի, իսկ ԱՄՆ դոլարի արտահայտմամբ այն նվազել էր 11.1% ԲՄՏԱՏ-ով նույն ժամանակաշրջանի ընթացքում, ինչը պայմանավորված էր փոխարժեքի տատանումներով: Այնուամենայնիվ, ծավալի տեսանկյունից սառեցրած բանջարեղենի վաճառքն աճել էր 22.9%-ով՝ կազմելով 17.6 տոննա 2016թ-ին:

#### **Երկարաժամկետ պահպանման համար պիտանի բանջարեղենի վաճառքի ծավալի դինամիկան**



*Աղյուս՝ Euromonitor International*

պահպանման համար պիտանի լրիք, լրիկի և այլ բանջարեղենի (բացառությամբ լոլիկի և լոբու) մասնաբաժինը կազմում էր 74%, Երկարաժամկետ պահպանման համար պիտանի լոլիկինը՝ 18% և Երկարաժամկետ պահպանման համար պիտանի լոբունը՝ 8%:

Վաճառքի արժեքուն Երկարաժամկետ պահպանման համար պիտանի բանջարեղենի (բացառությամբ լոլիկի և լոբու) մասնաբաժինը կազմում էր 74%, Երկարաժամկետ պահպանման համար պիտանի լոլիկինը՝ 18% և Երկարաժամկետ պահպանման համար պիտանի լոբունը՝ 8%:

2016թ-ին Երկարաժամկետ

#### **4.5.7 Վերամշակված կարտոֆիլի սպառում և վաճառք**


2013-2016թթ. ընկած ժամանակաշրջանում վերամշակված կարտոֆիլի վաճառքի արժեքը նվազել էր 2.9% ԲԱՏԱՏ-ով, կազմելով 3.1 միլիոն ԱՄՆ դոլար, իսկ լարիի արտահայտմանը այն աճել էր 9.2% ԲԱՏԱՏ-ով նույն ժամանակաշրջանում: Վաճառքի ծավալը, իր հերթին, աճել էր 4.8% ԲԱՏԱՏ-ով՝ կազմելով 516 տոննա նույն ժամանակաշրջանում:

Հավելված 25-ում ներկայացված է տեղեկատվություն սառեցրած կարտոֆիլի վաճառքի դիմանիկայի վերաբերյալ 2013-2016թթ. ընկած ժամանակաշրջանում:

#### **4.5.8 Մրցունակ միջավայր**

«Եվրոպոնիտոր»-ի հետազոտությունների արդյունքները ցույց են տալիս, որ Վրաստանի վերամշակված բանջարեղենի և մրգի շուկայում առկա են ինչպես տեղական, այնպես էլ՝ ներկրված ապրանքանիշերը՝ գրեթե հավասար մասնաբաժինով: Այնուամենայնիվ, տեղական ընկերություններն ավելի ակտիվ գործունեություն են ծավալում, ավելի լավ ողիք են զբաղեցնում, ունեն գովազդային աջակցություն վաճառքի կետերում և օգտագործում են

**Սառեցրած վերամշակված կարտոֆիլի վաճառքի  
դիմանիկան**



Աղյուս՝ Euromonitor International


ընկերությունների մասնաբաժինները կազմել են համապատասխանաբար 23% և 20%:

արտաքին գովազդը:  
2016թ-ին վաճառքի  
արժեքի տեսանկյունից  
շուկայում ամենամեծ  
մասնաբաժին ունեին երկու  
ընկերություն՝ «Սառնեուլիի  
սննդամթերքի գործարան»  
ՍՊԸ-ը՝ իր «Սառնեուլի»  
ապրանքանիշով և «Գորիի  
մանկական սննդի  
պահածոների գործարան»  
ՍՊԸ-ը՝ իր «Կուլա»  
ապրանքանիշով:

Վաճառքի արժեքում նշված

Ստորև բերվող պատկերում ներկայացված են հիմնական վերամշակող ընկերությունների համապատասխան մասնաբաժիններն ընդհանուր մանրածախ վաճառքում:

Ընկերությունների մասնաբաժնները վերամշակված բանջարեղենի և մրգի մանրածախ վաճառքի արժեքում, %, 2016թ.




*Unpjnipp` Euromonitor International*

«Եվրոմնիտոր»-ի հետազոտությունների արդյունքներով բանջարեղեն և միջոցական ընկերությունների ապրանքանիշերի մասնաբաժիններին տրված վարկանիշները գրեթե համապատասխանում են շուկայում ընկերությունների ունեցած մասնաբաժիններին: 2016թ-ին երկու առաջատար ապրանքանիշերի՝ «Մարնեուլիի սննդամթերքի գործարան» ՍՊԸ-ի «Մարնեուլի»-ի և «Գորիի մանկական սննդի պահածոների գործարան» ՍՊԸ-ի «Կուլա»-ի մասնաբաժինները Վրաստանի շուկայում կազմում էին համապատասխանաբար 23% և 20%:

Ստորև բերվող պատկերում ներկայացված են վերամշակված բանջարելենի հիմնական ապրանքանիշերի համապատասխան մասնաբաժիններն ընդհանուր մանրածախ վաճառքում:

Ապրանիքանիշերի մասնաբաժնները վերամշակված բանօրաբեկների ել մրգի մակրածախ վաճառքի արձերւում, %, 2016թ. ■ Mart



*Unpjnipp` Euromonitor International*

Հետազոտությունների արդյունքները ցույց են տալիս, որ երկու ապրանքանիշներն էլ համբավ են Վայելում Վրաստանում՝ իրենց տեղական ծագման և զնի ու որակի ընդունելի հարաբերկացության շնորհիվ։ Այս ընկերությունները վստահություն են ներշնչում Վրացի

**սպառողներին և երկուսն էլ ակտիվ գովազդային աջակցություն ունեն վաճառքի կետերում:**  
**Շուկայի երկու առաջատարների՝ «Մառնեուլի» ՍՊԸ-ի և «Գորիի մանկական սննդի պահաժնների գործարան» ՍՊԸ-ի մասնաբաժիններն աճել են «Սոլեդո» ՍՊԸ-ի մասնաբաժնի նվազման հաշվին, որը կողցին է մեկ տոկոսային կետ 2016թ-ին, որի արդյունքում ընկերության մասնաբաժինը և «Սոլեդո» ապրանքանիշի մասնաբաժինը շուկայում կազմել էին 8%:**

**Ինչպես ներկայացված է աջ կողմում բերված այսուսակում, վերամշակված մրգի և բանջարեղենի վաճառքի գերակշիռ մասն ապահովում էին մանրածախ մթերային խանութները (99.9%), իսկ վաճառքի անշան մասը բաժին ընկնում խանութից դուրս իրականացվող մանրածախ առևտրին (0.1%)՝ իիմնականում ինտերնետի միջոցով (0.1%):**

| Վերամշակված մրգի և բանջարեղենի մանրածախ վաճառքի արժեքի բաշխումը, 2016թ. |       |
|-------------------------------------------------------------------------|-------|
| Խանութի միջոցով իրականացվող մանրածախ առևտուր                            | 99.9% |
| - Մանրածախ մթերային խանութներ                                           | 99.9% |
| -- Ժամանակակից մանրածախ մթերային խանութներ                              | 16.5% |
| -- Ամենօրյա պահանջարկի ապրանքների խանութներ                             | 7.1%  |
| -- Խոշոր կառույցներին կից մանրածախ առևտուրի խանութներ                   | 0.6%  |
| -- Յիաբերմարկետներ                                                      | 2.6%  |
| -- Սուպերմարկետներ                                                      | 6.2%  |
| -- Ավանդական մանրածախ մթերային խանութներ                                | 83.4% |
| -- Անկախ փոքր մթերային խանութներ                                        | 52.8% |
| -- Այլ մանրածախ մթերային խանութներ                                      | 30.6% |
| Խանութից դուրս իրականացվող մանրածախ առևտուր                             | 0.1%  |
| - Մանրածախ առևտուր ինտերնետի միջոցով                                    | 0.1%  |


Աղյուր՝ Euromonitor International

#### **4.5.9 Վերամշակված բանջարեղենի վաճառքի կանխատեսումներ**

Կանխատեսումների համաձայն՝ 2016-2021թթ. ընկած ժամանակաշրջանում Վրաստանում վերամշակված բանջարեղենի վաճառքի ծավալը կազի 3.3% ԲՄՏԱՏ-ով:

Մասնավորապես, ակնկալվում է, որ 2021թ-ին վաճառքի ծավալում ամենամեծ մանսաբաժին՝ 99.7% ունեցող երկարաժամկետ պահպանման համար պիտանի բանջարեղենի վաճառքը կազի 3.3% ԲՄՏԱՏ-ով՝ այսպիսով սահմանելով վերամշակված բանջարեղենի ընդհանուր վաճառքի աճի տեսակը: Կանխատեսումների համաձայն՝ փոքր մասնաբաժին ունեցող սառեցրած բանջարեղենի վաճառքը կազի 3.5% ԲՄՏԱՏ-ով: Ակնկալվում է, որ 2021թ-ին բանջարեղենի նշանական վաճառքի ծավալները կկազմեն համապատասխանաբար 7,839 տոննա և 20.9 տոննա:

### Վերամշակված բանջարեղենի վաճառքի կանխատեսումը




Աղյուս՝ Euromonitor International

Արժեքի տեսանկյունից ընդհանուր բանջարեղենի վաճառքում 2021թ-ին երկարաժամկետ պահպանման համար պիտանի բանջարեղենին բաժին էր ընկնում վաճառքի արժեքի **99.3%-ը**: 2016-2021թթ. ընկած ժամանակաշրջանում վերամշակված բանջարեղենի այս տեսակի համար կանխատեսվում է աճ 4.7% ԲՄՏԱՏ-ով՝ արտահայտված լարիով: Վերջինս սահմանում է վերամշակված բանջարեղենի ընդհանուր վաճառքի համար կանխատեսվող աճի տեղայի նույն 4.7% ԲՄՏԱՏ-ով: Կանխատեսումների համաձայն՝ նույն ժամանակաշրջանում սառեցրած բանջարեղենի վաճառքի արժեքը կածի 8.4% ԲՄՏԱՏ-ով՝ արտահայտված լարիով: Ակնկալվում է, որ 2021թ-ին ընդհանուր վաճառքի արժեքը կկազմի 45.2 միլիոն լարի:

«Եվրոմոնիտոր»-ի հետազոտությունների համաձայն՝ Վրաստանում կանխատեսվող ժամանակաշրջանում տեղական ընկերությունները կմշակեն ոչ ավանդական ապրանքատեսակներ, օրինակ՝ ծիթապտղի վերամշակում: Զիթապտղի կոմերցիոն տեսանկյունից առաջին բերքը սպասվում է 2016թ-ին: Այսպիսով, ակնկալվում է, որ կանխատեսվող ժամանակաշրջանում շուկայում կհայտնվեն ծիթապտղից պատրաստված տեղական ապրանքատեսակներ:

#### **4.5.10 Վերամշակված կարտոֆիլի վաճառքի կանխատեսումներ**



Սորյուրը՝ Euromonitor International


Կանխատեսվում է, որ **2016-2021թթ.** ընկած ժամանակաշրջանում սառեցրած կարտոֆիլի վաճառքի արժեքը կանչի **4.5% ԲՄՏԱՏ-ով, ծավալը՝ 4% ԲՄՏԱՏ-ով:** Ակնկալվում է, որ 2021թ-ին սառեցրած վերամշակված կարտոֆիլի ընդհանուր վաճառքի արժեքը կկազմի 9.1 միլիոն լարի, իսկ ծավալը՝ 625.8 տոննա:

Վերամշակված բանջարեղենի և կարտոֆիլի վաճառքի (թե՛ ծավալի և թե՛ արժեքի) և տեսակների կտրվածքով ԲՄՏԱՏ-ին վերաբերող կանխատեսումները 2016-2021թթ. ընկած ժամանակաշրջանի համար ներկայացված են Հավելված 26-ում:


## Հավելվածներ

### Հավելված 1. Հայաստանում մշակվող բանջարեղենի հիմնական մշակաբույսեր


#### Տաքեղի բերքատվության դիմամիկա




#### ճակնդեղի բերքատվության դիմամիկա




#### Գազարի բերքատվության դիմամիկա




#### Սխտորի բերքատվության դիմամիկա



#### Կանաչ ոլորի բերքատվության դիմամիկա



#### Կանաչ լորի բերքատվության դիմամիկա



*Աղյուսը՝ ՀՀ ԱՎԾ*

\* Նշում՝ ՀՀ ԱՎԾ տվյալների համաձայն՝ սմբուկը, տաքեղը և կանաչ լորին ներառվել էին «այլ բանջարեղեն» դասում 2013-2014թթ.  
համար: Միջնորմ այս դասին բաժին էր ընկույտ նշված բանջարեղենային նշակարույսերի ընդհանուր բերքի 31.5%-ը:  
սահմանված ժամանակաշրջանում: Բացի այդ, «այլ բանջարեղեն» դասը ներառում էր կանաչեղենը, բրոկուլին, ծմբեկը,  
բողկը և այլն:

Ստորև բերվող այսուսակներում ներկայացված են ընտրված մշակաբույսերի ընդհանուր բերքահավաքի տարածությունները և ցանքային տարածությունների բաշխումն ըստ ՀՀ մարզերուն 2016թ-ին:

| Արտադրվող բանջարեղենի և կարտոֆիլի ընդհանուր բերքահավաքի տարածություններն ըստ մարզերի 2016թ-ին, հա |               |                        |              |              |              |              |                |            |              |              |            |              |                       |             |               |          |
|---------------------------------------------------------------------------------------------------|---------------|------------------------|--------------|--------------|--------------|--------------|----------------|------------|--------------|--------------|------------|--------------|-----------------------|-------------|---------------|----------|
| Մարզեր                                                                                            | Բանջարեղեն    |                        |              |              |              |              |                |            |              |              |            |              |                       |             |               | Կարտոֆիլ |
|                                                                                                   | Տարածություն  | Կաղամք, բույր տեսակներ | Վարունգ      | Լոլիկ        | Սմբուկ       | Տարեփեղ      | Սեղանի ճակնդեղ | Գազար      | Սխի          | Սխտոր        | Կանաչ ոլոռ | Կանաչ լոբի   | Այլ բանջարեղեն դաշտեր | Սերմանաշտեր |               |          |
| Երևան                                                                                             | 317           | 17                     | 100          | 100          | 20           | 40           | 15             | 15         | 5            | 5            | -          | -            | -                     | -           | -             | 90       |
| Արագածոտն                                                                                         | 1,270         | 160                    | 211          | 340          | 54           | 40           | 8              | 22         | 142          | 88           | 2          | 142          | 61                    | -           | 1,850         |          |
| Արարատ                                                                                            | 6,749         | 211                    | 523          | 3,389        | 519          | 512          | 33             | 11         | 238          | 98           | -          | 219          | 987                   | 9           | 914           |          |
| Արմավիր                                                                                           | 11,395        | 1,028                  | 1,154        | 2,943        | 1,409        | 1,516        | 98             | 57         | 1,007        | 48           | 25         | 358          | 1,735                 | 17          | 1,601         |          |
| Գեղարքունիք                                                                                       | 1,689         | 995                    | 29           | 25           | -            | 5            | 61             | 78         | 38           | 200          | 3          | 38           | 217                   | -           | 10,239        |          |
| Լոռի                                                                                              | 1,790         | 775                    | 109          | 99           | 2            | 9            | 127            | 131        | 109          | 172          | 20         | 119          | 118                   | -           | 4,613         |          |
| Կոտայք                                                                                            | 1,264         | 252                    | 119          | 191          | 29           | 82           | 36             | 198        | 55           | 89           | 17         | 143          | 53                    | -           | 923           |          |
| Շիրակ                                                                                             | 1,895         | 590                    | 81           | 62           | 2            | 21           | 344            | 346        | 48           | 131          | 16         | 49           | 143                   | 62          | 4,556         |          |
| Սյունիք                                                                                           | 1,098         | 206                    | 101          | 150          | 20           | 39           | 66             | 57         | 73           | 96           | -          | 96           | 194                   | -           | 1,771         |          |
| Վայոց ձոր                                                                                         | 661           | 27                     | 89           | 124          | 38           | 70           | 14             | 20         | 178          | 45           | -          | -            | 56                    | -           | 289           |          |
| Տավուշ                                                                                            | 1,079         | 79                     | 168          | 207          | 31           | 56           | 44             | 31         | 151          | 77           | 22         | 136          | 77                    | -           | 1,983         |          |
| <b>Ընդամենը</b>                                                                                   | <b>29,207</b> | <b>4,340</b>           | <b>2,684</b> | <b>7,630</b> | <b>2,124</b> | <b>2,390</b> | <b>846</b>     | <b>966</b> | <b>2,044</b> | <b>1,049</b> | <b>105</b> | <b>1,300</b> | <b>3,641</b>          | <b>88</b>   | <b>28,829</b> |          |

Նշում՝ Վերամշակման ոլորտում օգտագործվող ընտրված մշակաբույսերը գրված են մանուշակագույնով:  
Մղյուրը՝ ՀՀ ԱՎԾ

| Արտադրվող բանջարեղենի և կարտոֆիլի տարածությունների մասնաբաժններն ըստ մարզերի 2016թ-ին, % |              |                        |         |       |        |         |                |       |       |       |            |            |                       |             |       |          |
|------------------------------------------------------------------------------------------|--------------|------------------------|---------|-------|--------|---------|----------------|-------|-------|-------|------------|------------|-----------------------|-------------|-------|----------|
| Մարզեր                                                                                   | Բանջարեղեն   |                        |         |       |        |         |                |       |       |       |            |            |                       |             |       | Կարտոֆիլ |
|                                                                                          | Տարածություն | Կաղամք, բույր տեսակներ | Վարունգ | Լոլիկ | Սմբուկ | Տարեփեղ | Սեղանի ճակնդեղ | Գազար | Սխի   | Սխտոր | Կանաչ ոլոռ | Կանաչ լոբի | Այլ բանջարեղեն դաշտեր | Սերմանաշտեր |       |          |
| Երևան                                                                                    | 1.1%         | 0.4%                   | 3.7%    | 1.3%  | 0.9%   | 1.7%    | 1.8%           | 1.6%  | 0.2%  | 0.5%  | -          | -          | -                     | -           | -     | 0.3%     |
| Արագածոտն                                                                                | 4.3%         | 3.7%                   | 7.9%    | 4.5%  | 2.5%   | 1.7%    | 0.9%           | 2.3%  | 6.9%  | 8.4%  | 1.9%       | 10.9%      | 1.7%                  | -           | 6.4%  |          |
| Արարատ                                                                                   | 23.1%        | 4.9%                   | 19.5%   | 44.4% | 24.4%  | 21.4%   | 3.9%           | 1.1%  | 11.6% | 9.3%  | -          | 16.8%      | 27.1%                 | 10.2%       | 3.2%  |          |
| Արմավիր                                                                                  | 39.0%        | 23.7%                  | 43.0%   | 38.6% | 66.3%  | 63.4%   | 11.6%          | 5.9%  | 49.3% | 4.6%  | 23.8%      | 27.5%      | 47.7%                 | 19.3%       | 5.6%  |          |
| Գեղարքունիք                                                                              | 5.8%         | 22.9%                  | 1.1%    | 0.3%  | -      | 0.2%    | 7.2%           | 8.1%  | 1.9%  | 19.1% | 2.9%       | 2.9%       | 6.0%                  | -           | 35.5% |          |
| Լոռի                                                                                     | 6.1%         | 17.9%                  | 4.1%    | 1.3%  | 0.1%   | 0.4%    | 15.0%          | 13.6% | 5.3%  | 16.4% | 19.0%      | 9.2%       | 3.2%                  | -           | 16.0% |          |
| Կոտայք                                                                                   | 4.3%         | 5.8%                   | 4.4%    | 2.5%  | 1.4%   | 3.4%    | 4.3%           | 20.5% | 2.7%  | 8.5%  | 16.2%      | 11.0%      | 1.5%                  | -           | 3.2%  |          |
| Շիրակ                                                                                    | 6.5%         | 13.6%                  | 3.0%    | 0.8%  | 0.1%   | 0.9%    | 40.7%          | 35.8% | 2.3%  | 12.5% | 15.2%      | 3.8%       | 3.9%                  | 70.5%       | 15.8% |          |
| Սյունիք                                                                                  | 3.8%         | 4.7%                   | 3.8%    | 2.0%  | 0.9%   | 1.6%    | 7.8%           | 5.9%  | 3.6%  | 9.2%  | -          | 7.4%       | 5.3%                  | -           | 6.1%  |          |
| Վայոց ձոր                                                                                | 2.3%         | 0.6%                   | 3.3%    | 1.6%  | 1.8%   | 2.9%    | 1.7%           | 2.1%  | 8.7%  | 4.3%  | -          | -          | 1.5%                  | -           | 1.0%  |          |
| Տավուշ                                                                                   | 3.7%         | 1.8%                   | 6.3%    | 2.7%  | 1.5%   | 2.3%    | 5.2%           | 3.2%  | 7.4%  | 7.3%  | 21.0%      | 10.5%      | 2.1%                  | -           | 6.9%  |          |

Նշում՝ Վերամշակման ոլորտում օգտագործվող ընտրված մշակաբույսերը գրված են մանուշակագույնով:  
Մղյուրը՝ ՀՀ ԱՎԾ

| Արտադրվող բանջարեղենի և կարտոֆիլի ցանքային տարածություններն ըստ մարզերի 2016թ-ին, հա |               |                        |              |              |              |              |                |            |              |              |            |              |                |            |               |          |
|--------------------------------------------------------------------------------------|---------------|------------------------|--------------|--------------|--------------|--------------|----------------|------------|--------------|--------------|------------|--------------|----------------|------------|---------------|----------|
| Մարզեր                                                                               | Բանջարեղեն    |                        |              |              |              |              |                |            |              |              |            |              |                |            |               | Կարտոֆիլ |
|                                                                                      | Տարածություն  | Կաղամբ, բույր տեսակներ | Վարունգ      | Լոլիկ        | Սմբռկ        | Տաքաղեղ      | Սեղանի ճակնդեղ | Գազար      | Սոխ          | Սխտոր        | Կամաչ ոլոռ | Կամաչ լորի   | Այլ բանջարեղեն | Այլ դաշտեր | Սերմանություն |          |
| Երևան                                                                                | 317           | 17                     | 100          | 100          | 20           | 40           | 15             | 15         | 5            | 5            | -          | -            | -              | -          | -             | 90       |
| Արագածոտն                                                                            | 1,270         | 160                    | 211          | 340          | 54           | 40           | 8              | 22         | 142          | 88           | 2          | 142          | 61             | -          | -             | 1,850    |
| Արարատ                                                                               | 6,873         | 211                    | 523          | 3,389        | 519          | 512          | 33             | 11         | 238          | 98           | -          | 219          | 987            | 9          | 914           |          |
| Արմավիր                                                                              | 12,186        | 1,028                  | 1,157        | 2,943        | 1,411        | 1,516        | 98             | 57         | 1,008        | 48           | 25         | 358          | 1,735          | 17         | 1,601         |          |
| Գեղարքունիք                                                                          | 1,689         | 995                    | 29           | 25           | -            | 5            | 61             | 78         | 38           | 200          | 3          | 38           | 217            | -          | -             | 10,239   |
| Լոռի                                                                                 | 1,800         | 775                    | 112          | 100          | 2            | 9            | 127            | 131        | 110          | 174          | 22         | 119          | 119            | -          | -             | 4,613    |
